«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան - 2021

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի (այսուհետ՝ ԵԻՊՔ, քոլեջ կամ ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ԵԻՊՔ-ի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ կամ լիազոր մարմին) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է ԵԻՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

Contents

ՆԱԽԱԲԱՆ 2
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 13
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 13
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 17
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 17
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 19
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 22
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 31
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 38
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 51
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 55
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 61
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 65
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 70
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 78
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 79
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 79
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 80
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 84
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 86
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 87

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել ԵԻՊՔ-ի առաքելությունը, այն է՝ «Գիտելիքի որոնումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ բարձրորակ մասնագետների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Քոլեջը ձգտում է կրթական առաջավոր հայեցակարգերի և նորագույն տեխնոլոգիաների

ներդրմամբ՝ ավանդական, ինչպես նաև փորձարարական և նորարարական ծրագրերի իրականացման շնորհիվ դառնալ ՀՀ մասնագիտական կրթական համակարգի զարգացման գերազանցության կենտրոն՝ ապահովելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի որակյալ մասնագետների պատրաստումը՝ աշխատաշուկայի պահանջներին և անձի պահանջմունքներին համապատասխան»:

Ըստ կանոնադրության՝ ՄՈՒՀ-ի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) իրականացումն է, որոնք իրագործվում են 4 ուղղություններով՝ «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Մեխատրոնիկա»: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը՝ միտված կրթական ծրագերի արդիականացմանը: 2008թ.-ին Միացյալ Թագավորության Բրեդֆորդի քոլեջի հետ համագործակցության շրջանակներում քոլեջում ներդրվել է «Մեխատրոնիկա» կրթական ծրագիրը, և 2011թ.-ից այդ մասնագիտությամբ կատարվում է ուսանողների ընդունելություն: ՄՈՒՀ-ը փորձում է նաև համագործակցել Դոնի Ռոստովի Կապի և ինֆորմատիկայի քոլեջի հետ՝ որոշակի համատեղ կրթական գործունեություն իրականացնելու նկատառումով: Սակայն այս համատեքստում քոլեջը դեռևս հնարավոր չի համարում պետական կրթական չափորոշիչներով (այսուհետ՝ ՊԿՉ) սահմանված մոդուլների և այդ քոլեջի կրթական ծրագրերի համադրումը, դրան զուգահեռ դասախոսների և ուսանողների շրջանում փոխադարձ այցելություններն են իրականացվել վերոնշյալ քոլեջի հետ համագործակցության շրջանում, այդուհանդերձ, ակադեմիական շարժունության միջազգային ծրագրերին մասնակցության այլ օրինակներ քոլեջում առկա չեն: Կրթական ծրագրերի բենչմարքինգ իրականացվել է միայն «Մեխատրոնիկա» ՄԿԾ-ի շրջանակում: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ քոլեջը պարբերաբար իրականացնի աշխատաշուկայի վերլուծություններ՝ պարզելու աշխատաշուկայի կարիքներն ու քոլեջի ՄԿԾ-ներն արդիականացնելու համար: Սա թույլ կտա ապահովել շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ի 2018-2022թթ. զարգացման ռազմավարական ծրագրով (այսուհետ՝ ՌԾ) սահմանված նպատակ է «Արդիականությունն ու նորարարությունը», ինչին հասնելու համար քոլեջը նախատեսում է ուսանողների և դասախոսների շրջանում խթանել հետազոտական և նորարարական մոտեցումները, կուրսային և դիպլոմային նախագծերի հիմքում դնել ուսանողների ստեղծագործական և նորարարարկան միտքը խրախուսող պահանջներ և մեխանիզմներ: Դասախոսների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, ըստ քոլեջի, իրականացվում է ուսանողների կուրսային ու դիպլոմային աշխատանքների ղեկավարման միջոցով: Քոլեջի կողմից դասախոսներին հետազոտություն կատարելու պահանջ չի ներկայացվում: Քոլեջի դասախոսական կազմի որոշ անդամներ, այդուհանդերձ, մշակել են մեթոդական ձեռնարկներ: Բացի դա, քիչ թիվ են կազմում ուսանողներին տրվող վերլուծական, հետազոտական և ստեղծագործ մտքի զարգացմանն ուղղված հմտություններ ձևավորող հանձնարարականները: Ինչ վերաբերում է կուրսային և դիպլոմային նախագծերին, ապա այստեղ ևս սակավաթիվ են նորարարություն ապահովող աշխատանքների օրինակները: Փորձագիտական խումբը դրականորեն

արձանագրում է, որ «Մեխատրոնիկա» մասնագիտության դիպլոմային աշխատանքներում և պետական ավարտական քննատոմսերում, ելնելով մասնագիտական առանձնահատկություններից, պահպանված է նորարարական բաղադրիչը, առկա են որոշակի հետազոտական և վերլուծական առաջադրանքներ։

Փորձագիտական խումբը կարևոր է համարում տվյալ լավ փորձի տարածումը այլ մասնագիտություններում ևս, ինչը հնարավորություն կտա ուժեղացնել հետազոտական բաղադրիչը ՄԿԾ-ներում:

Փորձագիտական խումբը կարևորում է գործատուների հետ համատեղ դիպլոմային աշխատանքների և ընթացիկ հանձնարարականների իրականացման մշակույթի ձևավորումը քոլեջում, ինչի համար նախապայման է այն, որ ուսանողներին գնահատելիս շեշտադրվում են նրանց գործնական հմտությունները։ Փորձագիտական խումբը նշում է, որ ուսանողները ձգտում են ՄՈՒՀ-ն ավարտելուց հետո կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ բուհ) և այդ տեսակետը հիմնավորում են աշխատանքի ընդունման համար բարձրագույն կրթության դիպլոմի առկայությամբ։ Թերևս, չանտեսելով շարունակական կրթության կարևորությունն ու անհրաժեշտությունը, պետք է շեշտել, որ ՄՈՒՀ-ի առաքելությունը աշխատաշուկա մուտք գործելու համար պատրաստ լիարժեք մասնագետի թողարկումն է։

Փորձագիտական խումբը գտնում է, որ ներկա պայմաններում քոլեջի ռեսուրսներն ընդհանուր առմամբ ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը։ Դրական է գնահատվում, որ հիմնական ուսումնական գործընթացն ապահովելու, լաբորատոր և գործնական պարապմունքներ անցկացնելու համար քոլեջն ունի տեսական և գործնական պարապմունքների լսարաններ, մասնագիտական և հանրակրթական մոդուլների համար նախատեսված լաբորատորիաներ։ Քոլեջի համակարգչային լսարանները, լաբորատորիաներն ու արհեստանոցն ապահովված են անհրաժեշտ սարքերով ու սարքավորումներով։ Միևնույն ժամանակ, աշխատաշուկայի հետ կապերի ամրապնդման նպատակով փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի գործատուների հետ ռեսուրսների օգտագործման համատեղ ռազմավարության մշակումն ու իրագործումը։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում իրականացվում են վերանորոգման աշխատանքներ, ուսանողներն օգտվում են էլեկտրոնային գրադարանից։

ՄՈՒՀ-ում առկա է ֆինանսական միջոցների բաշխման ընթացակարգ, սակայն ըստ ՌԾ առաջնահերթությունների ֆինանսական ռեսուրսների բաշխման հաստատված քաղաքականություն, որպես այդպիսին, առկա չէ։ Դրանով էլ պայմանավորված՝ ՄԿԾ-ների նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների աղբյուրներ քոլեջը սկսում է փնտրել դրանց անհրաժեշտության առաջացման պարագայում՝ կառավարման մակարդակում տալով իրավիճակային լուծումներ։ Այս համատեքստում փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջը ՄԿԾ-ների նպատակների լիարժեք իրականացման համար, ցանկալի ժամանակահատվածում ռեսուրսների անընդհատ թարմացման հնարավորություն չունի։ Գովելի է, որ ՄՈՒՀ-ում առկա է փաստաթղթաշրջանառության որոշակի համակարգ, ինչն առավել կանոնակարգելու դեպքում կբարելավվի քոլեջի բոլոր օղակների միջև հաղորդակցությունը։ Պետք է նշել, որ քոլեջը ստեղծում է անվտանգ և ապահով միջավայր ուսումնական գործընթացը կազմակերպելու համար։

Քոլեջի դասախոսական կազմը համալրված է տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՏ) ոլորտում աշխատանքային փորձ և գիտական աստիճան ունեցող, ինչպես նաև գործատու մասնագետներով: Ողջունելի է, որ քոլեջը ջանքեր է գործադրում, որպեսզի որակյալ մասնագետներ ներգրավի ուսումնական գործընթացում: Այստեղ դժվարություն է առաջացնում ՏՏ ոլորտի լավագույն մասնագետների ներգրավումը՝ պայմանավորված ցածր վարձատրությամբ: Փորձագիտական խումբը կարևորում է այդ ոլորտի պրակտիկ մասնագետների ներգրավման այլընտրանքային մեխանիզմների կիրառումը, հատկապես որ քոլեջում գործատու դասախոսների թիվն այդքան էլ շատ չէ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը աշխատանքներ է տանում շրջանավարտներին ներգրավելու ուսումնական գործընթացում, ինչի համար կիրառում է որոշակի խրախուսման մեխանիզմներ: Քոլեջում կազմակերպվող դասալսումներն ու վերապատրաստումները բարելավման կարիք ունեն: ՄՈՒՀ-ում ուսանողների հոսքը կայուն է, վերջին տարիներին աճի միտում ունի: Փորձագտական խումբը կարևոր է համարում կայնության պահպանման համար պարբերաբար իրականացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ, որը հնարավորություն կտա բարձրացնել քոլեջի գրավչությունը:

ՄՈՒՀ-ում ներկայումս գործում է 2018-2022թթ. ՌԾ-ն, բացի դա, գործել է 2016-2020թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ԶԾ): Այս երկու ռազմավարական ծրագրերի բովանդակությունները հիմնականում նույնական են, և փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ գործող ՌԾ-ի մշակման հիմքում դրված չէ 2016-2020թթ. գնահատված ԶԾ-ն: Քոլեջում մշակված չեն գործող ՌԾ-ի իրականացման գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը, որոնցով հնարավոր կլիներ գնահատել ՌԾ-ի արդյունավետությունը: Այստեղ հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ում իրականացվող կարճաժամկետ գործողությունները հիմնականում չեն բխում ՌԾ-ի նպատակների: Հստակ չէ, թե ինչպես են կազմվում ստորաբաժանումների աշխատանքային պլանները, ինչպես է որոշվում տարվա ընթացքում նախատեսվող գործողությունների շրջանակը: Միաժամանակ, աշխատանքային տարեկան պլանների կատարման գնահատումների օրինակներ չկան: Առկա չեն արձանագրումներ այն մասին, թե, օրինակ, եթե պլանով սահմանված աշխատանքները չեն կատարվում, որն է դրա պատճառը, ինչ փոփոխություններ է հնարավոր անել, հաջորդ տարվա պլանում արդյոք պետք է ներառվեն չիրականացված գործողությունները և այլն: Քոլեջի կազմակերպական կառուցվածքից դուրս է մնացել որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) պատասխանատուի հաստիքը, իսկ կարիերայի պատասխանատուի հաստիքը նշված չէ կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերում: Փորձագիտական խումբը նշում է, որ կազմակերպական կառուցվածքի արդյունավետության գնահատումը կարող է լավացնել ստորաբաժանումների կառավարումն ու հաշվետվողականությունը: Քոլեջում իրականացվող ընթացակարգերը ներկայումս գտնվում են որակի կառավարման շրջափուլի պլանավորում-իրականացում փուլում, մշտադիտարկման աշխատանքները պլանավորված չեն: Տեսանելի չեն այն քայլերը, որոնցով ՄՈՒՀ-ը նախատեսում է քոլեջի բոլոր գործընթացներում ներդնել պլանավորում, իրականացում, գնահատում և բարելավում (այսուհետ՝ ՊԻԳԲ) շրջափուլը: Այդքանով հանդերձ դրական են գնահատվում

քոլեջի կառավարման արդյունավետությանն ու վարչական ծառայությունների որակի բարձրացմանն ուղղված ջանքերը։

ՄՈՒՀ-ում, որպես որակի ապահովման համակարգի հիմք, դիտարկվում է «Որակի քաղաքականությունը»։ Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ այն համահունչ է գործող ՌԾ-ի նպատակներին և ուղղություններին։ Սակայն, միևնույն ժամանակ, մտահոգիչ է, որ որակի ապահովման համար սահմանված նպատակների և խնդիրների իրականացման նկատառումով քոլեջը պլանավորումներ չի կատարում։ Դրա հետևանքով ՈԱ պատասխանատուի գործողությունները դառնում են իրավիճակային՝ կախված առաջացած խնդրի դրվածքից։ Ինչ վերաբերում է ՈԱ գործընթացների գնահատման համար իրականացվող հարցումներին և քննարկումներին, ապա դրանք կանոնակարգված չեն և ապահովված չեն փաստաթղթային հիմքերով, հարցումների և քննարկումների մի մասի արդյունքներն ու եզրահանգումները պարզապես չեն արձանագրվել։ Արձանագրվածների առումով էլ հարկ է նշել, որ բացակայում են արդյունքների վերաբերյալ քանակական և որակական վերլուծությունները, որոնք կարող են դուրս բերել բարելավման ենթակա խնդիրները։ ՈԱ գործընթացների ապահովման տեսանկյունից խնդրահարույց է, որ քոլեջի արտաքին շահակիցները գրեթե դուրս են մնացել այդ գործընթացից, ինչն իր բացասական ազդեցությունը կարող է ունենալ քոլեջի ՈԱ համակարգի նկատմամբ վստահության ձևավորման վրա։ Այս ընդհանուր համատեքստում փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ում ՈԱ համակարգը և մշակույթը դեռևս լիարժեք ներդրված չեն, և քոլեջում անհրաժեշտություն է զգացվում ՈԱ ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգման նկատմամբ։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում գործող հաշվետվողականության աստիճանակարգային սկզբունքը, ինչն ապահովում է կառավարման բոլոր օղակների հաշվետվողականությունը։ Ճիշտ է՝ առկա են ստորաբաժանումների, տնօրենի տարեկան հաշվետվություններ, սակայն դրանք ընդհանուր առմամբ տեղեկատվական բնույթի են, չեն պարունակում գնահատականներ, չկան դրանց վերլուծությունների փաստաթղթային հիմքեր և, որ ոչ պակաս կարևոր է, հիմնված չեն ՌԾ-ի նպատակների իրականացման վրա։ Փորձագիտական խումբը նպատակահարմար է գտնում, որ հաշվետվությունների ձևաչափը համապատասխանեցվի ՌԾ-ին և, միևնույն ժամանակ, դրականորեն արձանագրում է, որ քոլեջը նախատեսում է 2020-2021 ուսումնական տարվանից կատարել այդ փոփոխությունը։

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը գործընկեր կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ համագործակցության փորձ ունի: Փորձագիտական խումբը կարևոր է համարում լավ փորձի ուսումնասիրությունն ու տարածումը, ինչպես նաև ներդրումը ՄԿԾ-ներում. Առկա են կնքված պայմանագրեր, սակայն դրանց հիման վրա պլանավորումներ չեն իրականացվում։ Դրական է դիտվում, որ քոլեջը հիմքեր է ստեղծել գործատուների հետ համագործակցության ապահովման համար, սակայն այդ աշխատանքները համակարգման կարիք ունեն։ ՄՈՒՀ-ում բացակայում է միջազգայնացման և արտաքին կապերի ուղղությամբ միասնական քաղաքականությունը, իրականացվող աշխատանքներն էլ կանոնակարգված բնույթ չեն կրում և չունեն համապատասխան պլանավորումներ։ Փորձագիտական խումբը կարևոր է

համարում օտար լեզվի իմացության ամրապնդումը քոլեջում, որը ուսանողների և դասախոսների շարժունության, միջազգային փորձի ուսումնասիրման հնարավորություն կտա: Քոլեջում փաստացի չի իրականացվում շարժունություն դասախոսների և ուսանողների շրջանում: Արդյունքում վտանգվում է ՄՈՒՀ-ի ՌԾ-ով սահմանված արտաքին կապերի ու միջազգայնացման՝ որպես զարգացման առանձին նպատակի իրագործումը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

- Ռազմավարական կառավարման և պլանավորման համակարգի լավացման անհրաժեշտության գիտակցումը ղեկավար կազմի կողմից:
- Աշխատաշուկայում պահանջված մասնագիտությունների գծով կրթական ծրագրերի առկայությունը:
- Որոշ մասնագիտությունների գծով ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացումը:
- Մասնագիտական կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան դասախոսական և ուսումնաօժանդակ (այսուհետ՝ ՈՒՕ) անձնակազմի առկայությունը:
- Գործատու դասախոսների ներգրավման կարևորության գիտակցումը քոլեջի կողմից:
- Կրթական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի առկայությունը:
- Անվտանգ կրթական միջավարի առկայությունը:
- Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների նախադրյալների ստեղծումը:

Հաստատության թույլ կողմերն են.

- Ռազմավարական կառավարման և պլանավորման գործընթացների անկատարությունը:
- Պլանավորման և մշտադիտարկման գործընթացների անկատարությունը, հաշվետվությունների վերլուծական չլինելը:
- Տվյալների հավաքագրման մեխանիզմների անկատարությունը և տվյալների հիման վրա որոշումների կայացման մշակույթի թույլ լինելը:
- Ուսանողների՝ վերլուծական, հետազոտական հմտություններ ձևավորող հանձնարարականների պակասը:
- ՄԿԾ-ների վերանայման և դրանց մասին տվյալների հավաքագրման ժամանակ գործատուների մասնակցության սակավությունը:
- ՄԿԾ-ներում գործնական հմտություններ ձևավորող դասավանդման և գնահատման մեթոդների անկատարությունը:
- ՄԿԾ-ների բենչմարքինգի անկատարությունը:
- Դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների բացակայությունը:
- Դասախոսների՝ իրենց կատարած աշխատանքների արդյունավետության գնահատման և արտասահմանյան լավ փորձի ուսումնասիրման բացակայությունը:

- Գործատուների հետ համատեղ ռազմավարության բացակայությունը:
- Դասախոսների և ուսանողների մոտ անգլերենի մակարդակի ցածր լինելը:
- Արտաքին կապերի և միջազգայնացման պլանավորված քաղաքականության բացակայությունը:
- Ֆինանսական ռեսուրսների բազմազանեցման պլանավորված քաղաքականության բացակայությունը:
- Որակի ներքին ապահովման գործընթացների սաղմնային փուլում գտնվելը, հարցումների համակարգի անկատարությունը:

Հիմնական խորհրդատվություններ

Առաքելությունը և նպատակները

- Ներդնել քոլեջի ՌԾ մշակման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավվածությունն ապահովող մեխանիզմներ:
- Մշակել ՌԾ նպատակների իրականացման հստակ և չափելի կատարողականի որակական և քանակական ցուցիչներ:
- Մշակել և իրագործել ՌԾ-ի նպատակներից բխող գործողությունների պլան-ժամանակացույց:
- Մշակել և իրագործել ՌԾ ընթացիկ գնահատման ու մշտադիտարկման արդյունավետ մեխանիզմներ:
- Քոլեջում ներդնել ռազմավարական արդյունավետ կառավարման մեխանիզմներ:

Կառավարումն ու վարչարարությունը

- Մշակել և ներդնել քոլեջի կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողների և արտաքին շահակիցների նախաձեռնողականությունը խրախուսող հստակ մեխանիզմներ:
- Ներդնել քոլեջի ՌԾ-ից բխող կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման և հաշվետվողականության մեխանիզմներ:
- Իրականացնել քոլեջի կազմակերպական կառուցվածքի գնահատում և բարելավում ըստ գործող ՌԾ-ի նպատակների:
- Ներդնել կառավարման գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
- Ներդնել քոլեջի ներքին և արտաքին միջավայրերի արդյունավետ գնահատման ու վերլուծման մեխանիզմներ և ընթացակարգեր:
- Բարելավել տվյալների հավաքագրման մեխանիզմները և որոշումների կայացման գործընթացում հիմնվել հստակ վերլուծված տվյալների վրա:
- Քոլեջի կառավարման և վարչարարության հիմքում դնել որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը և դրա արդյունավետ իրականացումը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

- Մշակել և ներդնել ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման արդյունավետ մեխանիզմներ:
- Ներդնել աշխատաշուկայի ուսումնասիրման գործուն մեխանիզմներ (արտաքին շահակիցների հետ հստակ համագործակցություն)՝ դրանց արդյունքները ՄԿԾ-ներում ներդնելու նպատակով:

- Մշակել և իրագործել բենչմարքինգի քաղաքականություն և համապատասխան ընթացակարգ:
- Ներդնել դասավանդման և գնահատման արդիական մեթոդներ, որոնք կապահովեն սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը:
- Ներդնել գնահատման արդյունավետ համակարգ՝ հատկապես շեշտադրելով գործնական հմտությունների գնահատումը:

Ուսանողները

- Բարելավել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունները, ինչպես նաև քայլեր ձեռնարկել քոլեջ-գործատու կապի ամրապնդման համար:
- Բարելավել դիմորդների ներգրավման մեխանիզմները՝ գրավիչ դարձնելով քոլեջի կայքէջը:
- Բարելավել ուսանողների՝ կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման ու որակի ապահովման մեխանիզմները, հստակ պարբերականությամբ իրականացնել հարցումները, վերանայել հարցման թերթիկների բովանդակությունը:
- Մեծացնել ուսանողական խորհրդի համագործակցությունն այլ ստորաբաժանումների հետ:
- Խստացնել լրացուցիչ պարապմունքների ու խորհրդատվությունների վերահսկողությունը և դրանց որակի ապահովումը:
- Մեծացնել նորարարության և հետազոտության ծավալն ուսանողների աշխատանքներում:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

- Հստակեցնել դասախոսների կարիքների վերհանման և հետագա մշտադիտարկման գործընթացը:
- Մեծացնել ըստ մասնագիտական կարիքների վերապատրաստումների հաճախականությունը:
- Բարելավել քոլեջում խրախուսման և մասնագիտական առաջընթացին ուղղված մեխանիզմներն ու ապահովել դրանց լիարժեք իրագործումը:
- Քայլեր ձեռնարկել քոլեջում դասախոսների կայունության ապահովման համար:
- Քայլեր ձեռնարկել առավել շատ գործատուների դասավանդման գործընթացում և մասնագիտական վերապատրաստումներում ներգրավելու համար:

Հետազոտությունը և զարգացումը

- Մշակել ու իրագործել հստակ քաղաքականություն՝ ուղղված ուսանողների և դասախոսների մոտ հետազոտական հմտությունների ու ստեղծագործ մտքի զարգացմանը՝ ներգրավելով նաև գործատուներին:
- Քոլեջի բոլոր մասնագիտությունների գծով կուրսային և դիպլոմային աշխատանքներում ներդնել հետազոտական բնույթի վերլուծական առաջադրանքների առկայության հստակ պահանջներ:

- Ստեղծել ու ապահովել դասախոսների և ուսանողների հետազոտական առաջադրանքներում ներգրավվածության մեխանիզմներ:
- Քայլեր ձեռնարկել քոլեջում առկա (և հնարավոր սպասվելիք) մասնագիտությունների գծով հետազոտությունների անցկացման միջազգային փորձի ուսումնասիրման համար:
- Ներդնել դասախոսների՝ իրենց կատարած աշխատանքների արդյունքների վերլուծության մեխանիզմ, որը կնպաստի դասավանդման որակի բարելավմանը:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

- Իրականացնել ֆինանսական պլանավորում՝ ըստ քոլեջի գործող ՌԾ-ի նպատակների, և քայլեր ձեռնարկել ֆինանսական հոսքերի բազմազանեցման համար:
- Մշակել և ներդնել քոլեջում առկա ռեսուրսների արդյունավետ գնահատման մեխանիզմներ, որոնք կներառեն բոլոր շահակիցների դիտարկումները:
- Ներդնել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ, որը կապահովի քոլեջում արտաքին և ներքին շահակիցների անխափան հաղորդակցությունը:
- Պարբերաբար բարելավել քոլեջի ռեսուրսային բազան գործատուների հետ կայուն համագործակցության ստեղծման միջոցով՝ ռեսուրսների համատեղ օգտագործման նպատակով:

Հասարակական պատասխանատվությունը

- Բարելավել հաշվետվությունները՝ ներառելով որակական վերլուծությունների մեխանիզմը:
- Բարելավել քոլեջի կայքը՝ դարձնելով այն գրավիչ հասարակության համար, ինչպես նաև ապահովել ընթացակարգերի և տարբեր գործընթացների թափանցիկությունը:
- Մշակել և իրագործել շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման գործուն քաղաքականություն:
- Բարելավել հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմները՝ գնահատելով քոլեջի կարողություններն ու առաջարկելով լրացուցիչ գրավիչ դասընթացներ, որոնք նաև կապահովեն ֆինանսական հավելյալ հոսքեր:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

- Մշակել և ներդնել միջազգայնացման և արտաքին կապերի հաստատման քաղաքականություն ու ընթացակարգեր ՌԾ-ի նպատակներն իրագործելու համար:
- Իրականացնել հստակ պլանավորում միջազգայնացման ու արտաքին կապերի զարգացման ուղղությամբ:
- Հստակեցնել միջազգայնացմանն ուղղված գործընթացներով զբաղվող պատասխանատուի պարտականությունների և գործունեության շրջանակը՝ գնահատելով քոլեջի կարողություններն ու առկա լավ փորձը:

- Քայլեր ձեռնարկել ոլորտի առաջատար գործատուների հետ կապերի ստեղծման ուղղությամբ, ինչպես նաև գործող պայմանագրերի և հուշագրերի հիման վրա հստակ պլանավորումներ իրականացնել:
- Գործուն քայլեր ձեռնարկել դասախոսների և ուսանողների շրջանում օտար լեզվի (մասնագիտական անգլերեն) բարձրացման ուղղությամբ:

Որակի ներքին ապահովման համակարգը

- Մշակել և ներդել որակի ապահովման քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմներ:
- Ներդնել տարեկան կտրվածքով ՈԱ գործընթացների հստակ պլանավորման և դրա արդյունքների գնահատման չափելի մեխանիզմներ:
- Ներդնել ՈԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ակտիվ մասնակցությունն ապահովող քաղաքանակություն և ընթացակարգեր:
- Մշակել և ներդնել հարցումների անցկացման արդյունավետ մեխանիզմներ:
- Ներդնել խնդիրների վերհանման այլընտրանքային մեխանիզմներ:
- Մշակել վերհանված խնդիրների, հավաքագրված տվյալների արդյունավետ վերլուծության մեխանիզմներ:
- Ներդնել ՈԱ քաղաքականության արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ այն պարբերաբար վերանայելու նպատակով:
- Ներդնել ՈԱ գործընթացների թափանցիկությունը հավաստող մեխանիզմներ:

_____

Փորձագիտական խմբի ղեկավար
Արամ Բաղիյան

02.03.2021

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

- **Արամ Բաղիյան,** գիտական խորհրդատու, «Իմպրովիզ» ՍՊԸ, «Աստրոմափս» ՍՊԸ:
- **Անի Բաղդասարյան,** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման բաժնի
- **Արփի Սիմոնյան,** Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Երևանի քոլեջի դասախոս: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի լաբորանտ:
- **Արփինե Ազնաուրյան,** Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Երևանի քոլեջի «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» բաժնի 3-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ծրագրային և ինստիտուցիոնալ փորձաքննության բաժնի մասնագետ Գայանե Անանյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության պարտավորագրեր:

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԵԻՊՔ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները (15.07.2020):

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո (22.07.2020) ՈԱԱԿ-ի, ԵԻՊՔ-ի և ԿԳՄՄՆ-ի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

COVID-19 համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորած՝ ՄՈՒՀ-ը ժամանակացույցով նախատեսված ժամկետներից 2 շաբաթ ուշացումով, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը (այսուհետ՝ ԻՎ)՝ հայերեն տարբերակով, և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Քանի որ ԵԻՊՔ-ն առաջին անգամ էր անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով և գործընթացն իրականացնելը քոլեջի համար բարդ էր, այդ պատճառով ՈԱԱԿ-ը որոշակի աշխատանքներ է իրականացրել ՄՈՒՀ-ի հետ՝ նախապատրաստելով նրան ինքնավերլուծության ներկայացման և հավատարմագրման գործընթացին: Հունիս ամսին ԵԻՊՔ-ն 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է SWOT վերլուծություն հավատարմագրման 10 չափանիշներին համապատասխան: SWOT վերլուծության ներկայացումից հետո ՄՈՒՀ-ն առաջադրել է 2 աշխատակից, որոնց հետ միասին ՈԱԱԿ աշխատակիցները 1 ամիս դիտարկել են քոլեջի կողմից ներկայացված SWOT վերլուծությունը, դուրս են բերել հիմնական խնդիրները: Աշխատակիցներն այդ ընթացքում ուղղորդվել են, թե SWOT վերլուծությունն ինչպես պետք է կատարել և ինքնավերլուծության ընթացքում քոլեջը հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնի չափանիշների շրջանակում: SWOT վերլուծության դիտարկումից հետո քոլեջի աշխատակիցները՝ որպես փորձագետներ, ՈԱԱԿ աշխատակիցների հետ միասին սույն թվականի հուլիսի 8-ին իրականացրել են մշտադիտարկում ԵԻՊՔ-ում:

ԵԻՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 16.11.2020թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է ՄՈՒՀ-ի աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները և ներքին շահակիցները՝ուսանողները, չեն մասնակցել: Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, որը երբեմն հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ հասկանալ և ճիշտ գնահատել քոլեջում տիրող իրական վիճակը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև համակարգողն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ԵԻՊՔ-ի հետ:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբի համար, աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով, իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

- փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
- հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան ու տեխնիկան,
- մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտի առանձնահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
- նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է առցանց դասալսումներ «Միկրոպրոցեսորներ ՀՄՑ-028, միկրոկոնտրոլերներ ՀՄՑ-029», «Համ ցանց., սարք., ինֆորմ. պաշտպ. և հասց.համակարգ. ցանց. ՀՏԾ-024», «Բաց կոդով ընդ. նշ. սկրիպտային ծրագր. լեզվի կիր. ՀԳՆ-022», «Միկրոպրոցես. և ՄՊ համակ. ՄՏԿ-016» և այլ մասնագիտությունների տարբեր կուրսերում:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական առցանց այցի պլան-ժամանակացույցը: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի «Փորձաքննության անցկացման ձեռնարկով»՝ ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, իսկ ռեսուրսների ուսումնասիրությունն իրականացվել է տեսաձայնագրության միջոցով:

Հիմնական խնդիրների և ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի առանձնացումից հետո փորձագիտական խումբը հստակեցրել է հանդիպումների ժամանակ քննարկվող խնդիրները: Պարբերաբար կրկնվող հանդիպումների ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ հարցադրումները, և կազմվել է փորձագիտական խմբի նախնական այցի փաթեթը: Փաթեթը պարունակում էր հանդիպումների պլան-ժամանակացույցը, ուսումնասիրման և պարզաբանման ենթակա հարցերը՝ ըստ թիրախային խմբերի և այն լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ էր ուսումնասիրել փորձագիտական առցանց այցի ընթացքում:

Ուսումնական հաստատության կողմից ներկայացրած ցանկերից ընտրվել են դասախոսական և ուսանողական կազմերի ներկայացուցիչները, շրջանավարտները, գործատուները, որոնք պետք է մասնակցեին հանդիպումներին:

Նախնական այց

2020 թվականի նոյեմբերի 12-ին տեղի է ունեցել նախնական առցանց հանդիպում: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ-ի համակարգողները, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական առցանց այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է լրացուցիչ ուսումնասիրության փաստաթղթերի ցանկը և համավարակի պայմաններում առցանց փորձագիտական այցերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները (քոլեջի կողմից տեսանյութերի տրամադրում, որտեղ կերևա քոլեջի հիմնական ռեսուրսային բազան՝ լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաններ և այլն, քոլեջի կողմից փորձագետների պահանջած ուսումնասիրվող փաստաթղթերի առցանց տարբերակի ապահովում պատշաճ ժամկետներում, առցանց միջավայրում փորձագիտական առցանց այցերի տեխնիկական կանոնների ապահովում՝տեսախցիկների միացված լինելը, մեկ ընդհանուր տեսախցիկի պարագայում ողջ սենյակը տեսնելու հնարավորությունը, սենյակում բացի թիրախային խմբերից այլ անձանց առկայության բացառումը և այլն):

Փորձագիտական առցանց այց

Փորձագիտական առցանց այցը տեղի է ունեցել 2020 թվականի դեկտեմբերի 15-18-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական առցանց այցը նախապես պլանավորված էր իրականացնել եռօրյա, սակայն առցանցի պարագայում եռօրյա փորձագիտական առցանց այցը դարձավ քառօրյա՝ պահպանելով փորձագետների նույն աշխատածավալը:

Ժամանակացույցի համաձայն՝ 14.12.20թ.-ին փորձագիտական առցանց այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, առցանց այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ԵԻՊՔ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Առցանց այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ ու ՈԱԱԿ-ի համակարգողը:

Փորձագիտական առցանց այցը սկսվել և ավարտվել է ԵԻՊՔ-ի տնօրենի հետ հանդիպումներով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Ըստ սահմանված ժամանակացույցի՝ փորձագիտական խումբը հանդիպումներ է իրականացրել քոլեջի բոլոր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ:

Առցանց այցի աշխատանքային յուրաքանչյուր օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ առցանց այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են առցանց այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է «Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների» ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, քոլեջի կողմից ներկայացրած ռեսուրսների նկարահանման և փորձագիտական առցանց այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ հունվարի 15-ին:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանությունները քոլեջն ուղարկել է ՈԱԱԿ 01.02.2021թ.-ին: Քոլեջն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են փորձագետներին: Դիտողությունների վերաբերյալ 2021 թվականի փետրվարի 12-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով քոլեջի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 02.03.2021թ.-ին:

_____

Գայանե Անանյան, գործընթացի համակարգող, 02.03.2021

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը (նախկինում՝ Երևանի էլեկտրոնային հաշվողական մեքենաների (այսուհետ՝ ԷՀՄ) տեխնիկում) հիմնադրվել է 1960թ.-ին, որի սկզբնական նպատակը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի (Մերգելյան) և «Էլեկտրոն» գործարանի համար միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պատրաստումն էր: 1969-1971թթ. նախագծվել և կառուցվել են ուսումնական հաստատության երկու նոր մասնաշենքերը: 1992թ.-ից ԷՀՄ տեխնիկումը անցել է ՀՀ կրթության նախարարության ենթակայության: Այդ դժվար տարիներին կտրուկ կրճատվել է ուսանողների քանակը (1994թ.-ին տեխնիկումում սովորում էին ընդամենը 150 ուսանողներ), հետագայում ուսանողների քանակն աճել է, և ներկայումս քոլեջում սովորում են 1000-ից ավելի ուսանողներ: 1999թ.-ին տեխնիկումը վերակազմավորվել է Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ ՊՈԱԿ-ի: Այդ

ժամանակներից ի վեր քոլեջի նյութատեխնիկական և մեթոդական բազաները արմատապես փոփոխվել և արդիականացվել են:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը Հայաստանում գործող պետական միակ ուսումնական հաստատությունն է, որին 2014թ.-ին միջազգային «Գլոբալ Գրուփ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ GlobalGROUP) շնորհել է ISO 9001:2008 սերտիֆիկատը՝ հավաստելով քոլեջի համապատասխանությունը կառավարման որակի միջազգային ստանդարտների:

Կրթություն. Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում սովորողները կրթություն են ստանում հետևյալ 4 մասնագիտություններով.

- Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում
- Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր
- Համակարգչային գեղարվեստական նախագծում
- Մեխատրոնիկա

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպ. Քոլեջի ռազմավարական գործող ծրագրի հիմնական նպատակներից է արդիականությունն ու նորարարությունը:

- «Խթանել հետազոտական և նորարարական մոտեցումները քոլեջի դասախոսների և ուսանողների շրջանում:
- Կուրսային և դիպլոմային նախագծերի հիմքում դնել ուսանողների ստեղծագործական և նորարարական միտքը խրախուսող պահանջներ և մեխանիզմներ»:

Արտաքին կապեր. Քոլեջը կարևորում է արտաքին կապերի և միջազգայնացման դերը կրթության որակի շարունակական բարելավման ու արդիականացման տեսանկյունից: Ռազմավարական ծրագրում արտաքին կապերն ու միջազգայնացումը ձևակերպված է՝ որպես ռազմավարական նպատակ:

Որակի ապահովում. Որակի ապահովումը՝ որպես առանձին գործառույթ, քոլեջում իրականացվել է դեռևս 2014թ.-ից, երբ քոլեջն անցավ ISO 9001:2008 միջազգային ստանդարտներին համապատասխանության հավատարմագրում: Այդ ժամանակ մշակվել և քոլեջում ներդրվել է որակի կառավարման համակարգը: Որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացներ իրականացվել են ISO 9001:2008 ստանդարտներին համապատասխանության հավատարմագրման շրջանակներում իրականացված արտաքին աուդիտի ժամանակ:

Որակի ապահովման արտաքին գնահատման համար հիմք է հանդիսանում նաև քոլեջի տնօրենի ամենամյա հաշվետվությունը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օրինակ, ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր ըստ չափանիշի: ՄՈՒՀ-ն ունի ձևակերպված առաքելություն՝ ներկայացված «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի զարգացման ռազմավարական ծրագիր (2018-2022թթ.)» փաստաթղթում: Քոլեջի հիմնական առաքելությունն է՝ գիտելիքի որոնումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ բարձրորակ մասնագետների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Ըստ զարգացման ռազմավարական ծրագրի՝ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը ձգտում է կրթական առաջավոր հայեցակարգերի և նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ավանդական, ինչպես նաև փորձարարական և նորարարական ծրագրերի

իրականացման շնորհիվ դառնալ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի զարգացման գերազանցության կենտրոն՝ ապահովելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի որակյալ մասնագետների պատրաստումը՝ աշխատաշուկայի պահանջներին և անձի պահանջմունքներին համապատասխան: Ըստ քոլեջի կանոնադրության՝ ՄՈՒՀ-ի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ մինչ գործող ՌԾ-ն (2018-2022թթ.) քոլեջում գործել է 2016-2020թթ. զարգացման ծրագիրը: Փորձագիտական վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ այս երկու ծրագրերը հիմնականում ունեն նույն բովանդակությունը:

Քոլեջն իր առաքելության իրականացման համար ունի ինը նպատակներ («Որակյալ կրթություն», «Արդիականություն և նորարարություն», «Հանրային ներգրավում և ծառայություններ», «Որակյալ մարդկային ռեսուրսներ», «Որակյալ ենթակառուցվածքներ», «Որակյալ ծառայություններ», «Ընդունելություն», «Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում», «Արտաքին կապեր և միջազգայնացում») և դրանցից բխող խնդիրներ (գործողություններ): Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի նպատակներն ու խնդիրները հստակ բաշխված չեն ըստ ժամանակացույցի և պատասխանատուների: Քոլեջում առկա չէ ՌԾ-ի նպատակների իրականացման պլան-ժամանակացույց:

Ըստ հաստատության ինքնավերլուծության՝ քոլեջի շահակիցների կարիքները ընդհանուր ձևակերպումներով արտացոլված են ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների մեջ: Ինչպես նաև քոլեջում առկա են ներքին և արտաքին շահակիցների կարիքների ու պահանջմունքների բացահայտման և բավարարման մի շարք մեխանիզմներ.բոլոր շահակիցներն ունեն քոլեջի խորհրդում (կառավարման) ներկայացուցչություն, շահակիցների կարիքների ու պահանջմունքների բացահայտմանը միտված քոլեջի ՈԱ հարցումներ և վերլուծությունների առկայություն: Սակայն փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի շահակիցների մասնակցության օրինակներ ՌԾ-ի նպատակների սահմանման գործընթացում փաստացի առկա չեն:

Ըստ հաստատության ինքնավերլուծության և կից ներկայացվող փաստաթղթերի՝ քոլեջը չի առանձնացրել իր ներքին և արտաքին շահակիցներին: Ըստ հաստատության ինքնավերլուծության SWOT վերլուծության՝ թույլ կողմերից քոլեջն առանձնացրել է՝ քոլեջի թույլ ճանաչելիությունը SS ոլորտի խոշոր ընկերությունների շրջանում: Քոլեջն այս առումով նախատեսում է ձեռնարկել քայլեր SS ոլորտի խոշոր ընկերությունների հետ գործընկերային կապեր հաստատելու ուղղությամբ:

Ըստ ԻՎ-ի՝ քոլեջում գործող առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներն ու ընթացակարգերն են՝ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տարեկան գործունեության պլանավորումն ու տարեվերջյան հաշվետվությունները, ինչպես նաև տնօրենի կողմից քոլեջի խորհրդում ներկայացվող ամենամյա հաշվետվությունը: Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում ստորաբաժանումների տարեկան պլանավորումների և հաշվետվությունների

վերլուծություններ փաստացի առկա չեն: Առկա չեն փոփոխությունների օրինակներ մշտադիտարկումների արդյունքում:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում առկա չեն ըստ գործող ՌԾ-ի նպատակների իրականացման վերջնարդյունքներ՝ ցուցիչներ (որակական կամ քանակական): Հստակ չէ, թե ՌԾ-ի ընթացքում և դրա ավարտին քոլեջն ինչպես է գնահատելու սահմանված նպատակների իրականացումը: Ըստ հաստատության ՌԾ-ի նպատակ 1-ի 1.2. խնդրի՝ նախատեսվում է իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ: Ըստ նպատակ 2-ի 2.1. խնդրի՝ նախատեսվում է խթանել հետազոտական և նորարարական մոտեցումները քոլեջի դասախոսների և ուսանողների շրջանում: Փաստացի ստորաբաժանումների պլաններում քոլեջի ՌԾ-ի վերոնշյալ և այլ խնդիրների արտացոլում առկա չէ: Հստակ չէ, թե փաստացի ինչպես է քոլեջը նախատեսում իրականացնել և ինչ արդյունքներ ու խնդիրներ ունենալ ՌԾ-ի ավարտին:

Ըստ քոլեջի ԻՎ-ի SWOT վերլուծության՝ թույլ կողմերից են ՌԾ-ի իրականացումը գնահատելու մեխանիզմների և գործիքների բացակայությունը, ՌԾ-ի իրականացման հաշվետվողականության ոչ լիարժեք ապահովումը: Այս առումով քոլեջը նախատեսում է մշակել հստակ մեխանիզմներ ռազմավարական ծրագրի իրականացման գնահատումը և հաշվետվողականությունը ապահովելու համար: Այդուհանդերձ, փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում վերոնշյալ մեխանիզմների մշակման հստակ պլան առկա չէ:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի 2016-2020թթ. ԶԾ-ի արդյունքների գնահատում չի իրականացվել և հիմք չի դարձել քոլեջի 2018-2022 թթ. ՌԾ-ի համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի հաստատված ՌԾ, իր գործունությունն ընդհանուր առմամբ նկարագրող առաքելություն, սահմանված նպատակներ և խնդիրներ: Այդուհանդերձ, սահմանված նպատակների հստակեցումը, քոլեջի կարողություններին համապատասխանեցումը և իրատեսականության ապահովումը կնպաստեն քոլեջում ռազմավարական կառավարման մշակույթի ամրապնդմանը: Մտահոգիչ է, որ քոլեջն իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար չի մշակել գործողությունների պլան՝ հստակ ժամանակացույցով և պատասխանատուներով: Քոլեջի կողմից նաև առկա չեն սահմանված նպատակների և խնդիրների որակական կամ քանակական ցուցիչներ, ինչի առկայությունը կնպաստի ՌԾ-ի նպատակների մշտադիտարկմանը և ՌԾ-ի նպատակների առավել արդյունավետ իրականացմանը:

Դրական է, որ քոլեջի կառավարման խորհրդում ներկայացված են շահակիցների ներկայացուցիչները: Քոլեջը ջանքեր է գործադրում շահակիցների կարիքների բացահայտում իրականացնել, այդուհանդերձ, մտահոգիչ է, որ վերոնշյալ մեխանիզմների կիրառմամբ շահակիցների կարիքների հստակ օրինակներ չեն ներդրվել քոլեջի ՌԾ-ում, չկան համապատասխան վերլուծություններ: Քոլեջի կողմից չեն առանձնացվել ներքին և արտաքին շահակիցները, այդուհանդերձ, դրական է, որ քոլեջը գիտակցում է ոլորտի առաջատար ընկերությունների հետ համագործակցության կարևորությունը և

նախատեսում է քայլեր ձեռնարկել կապերի հաստատման և ակտիվ համագործակցության առումով: Ինչը կնպաստի քոլեջի գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ իրավիճակի դուրսբերմանն ու քոլեջի զարգացմանը:

Դրական է, որ քոլեջը գիտակցում է գործող ՌԾ-ով նախատեսված գործընթացների իրականացումը գնահատելու մեխանիզմների և գործիքների բացակայությունը և նախատեսում է մշակել դրանք: Այդուհանդերձ, մտահոգիչ է, որ այս առումով գործողությունների հստակ պլան մշակված չէ: Ինչը փաստացի խոչընդոտում է գործող ՌԾ-ի ընթացիկ գնահատումը, դրանում առկա խնդիրների բացահայտումը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում նաև, որ քոլեջում առկա չեն ՌԾ-ի նպատակների իրականացման որակական կամ քանակական ցուցիչներ: Ինչը չի նպաստում քոլեջի կողմից նպատակների չափելի և հստակ արդյունքների ձեռքբերմանը, և վտանգում է ՌԾ-ի իրականացման ավարտին դրա արդյունավետ գնահատմանը: Մտահոգիչ է նաև, որ քոլեջի կողմից մշակված 2016-2020թթ ԶԾ-ի գնահատում փաստացի չի իրականացվել, և դա 2018-2022թթ. ՌԾ-ի մշակման համար հիմք չի հանդիսացել:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի իր գործունեության հիմնական ոլորտն ընդգրկող առաքելություն և նպատակներ, քոլեջի կողմից ՌԾ-ի արդյունավետ իրականացումն ապահովելու համար բացահայտվել են որոշակի խնդիրներ, քոլեջը նախատեսում է ներգրավել և ակտիվացնել շահակիցների ներգրավվածությունը, նախատեսում է նաև մշակել ՌԾ-ի արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը բավարարում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր ըստ չափանիշի: Քոլեջի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Համաձայն քոլեջի կանոնադրության 8-րդ կետի՝ քոլեջի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին), քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը՝ քոլեջի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ), քոլեջի գործադիր մարմինը՝ քոլեջի տնօրենը:

Քոլեջի ընթացիկ գործունեությունը ղեկավարում ու իրականացնում է տնօրենը: Նա սահմանում է քոլեջի կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը:

Քոլեջում գործում է նաև տնօրինական խորհուրդ՝ ըստ 2018 թվականին հաստատված կանոնակարգի: Ըստ կարգի՝ խորհուրդը կոլեգիալ խորհրդակցական մարմին է, որի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և կարող են հիմք հանդիսանալ տնօրենի կողմից կայացվող որոշումների համար: Տնօրինական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն 2 ամիսը մեկ անգամ:

Ըստ հաստատության ԻՎ-ի՝ քոլեջի ուսումնական գործունեությանը վերաբերվող ընթացիկ հարցերը քննարկվում են մանկավարժական խորհրդում:

2018-2022թ. ՌԾ-ում քոլեջը կառավարման ու վարչարարության որակը սահմանել է որպես ռազմավարական առանձին նպատակ: Այս առումով քոլեջը նախատեսել է բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը, հստակեցնել լիազորությունների և պատասխանատվության բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև, զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել և խորացնել ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում, բարձրացնել կառավարման տարբեր մարմիններում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը, ապահովել կառուցողական համագործակցության զարգացումը քոլեջի կառավարման, տնօրինական, մանկավարժական և ուսանողական խորհուրդների միջև: Վերոնշյալ նպատակներն ու խնդիրները սահմանված են եղել նաև քոլեջի 2016-2020թթ. զարգացման ծրագրում:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են հաստատության ստորաբաժանումներն ըստ ենթակայության ու հաղորդակցության կապերի: Այդուհանդերձ, կառուցվածքում և դրա հավելվածում որակի ապահովման պատասխանատուի հաստիքը սահմանված չէ, իսկ կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերում առանձնացված չեն կարիերայի պատասխանատուի (կամ կարիերայի բաժնի) ու միջազգային կապերի մենեջերի հաստիքները: Փաստացի հստակ չէ այս պատասխանատուների ենթակայությունը.ում կամ որ ստորաբաժանմանն են այս պատասխանատուները ենթակա և հաշվետու: Ինչպես նաև հստակեցված չէ վերոնշյալ պատասխանատուների գործառույթների շրջանակը: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից կազմակերպական կառուցվածքի արդյունավետության գնահատում չի իրականացվել: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում միջազգային համագործակցության զարգացմանն ուղղված գործընթացներն առաձին պատասխանատու չունեն, այդուհանդերձ, այս գործառույթի կատարումը փաստացի դրված էր ՈԱ պատասխանատուի վրա: Պետք է փաստել, որ վերոնշյալ գործառույթի իրականացման հիմքեր քոլեջում առկա չեն ևս:

Քոլեջում 2015թ.-ին խորհրդի կողմից հաստատվել են «Ներքին կարգապահական կանոններն» ու «Ուսումնառության կարգապահական կանոնները»: Ներքին կանոնները կանոնակարգում են քոլեջի աշխատողների՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, քոլեջի և աշխատողների հիմնական իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը և այլ հարցեր: Իսկ ուսումնառության ներքին կարգապահական կանոններն էլ կարգավորում են քոլեջի՝ որպես ուսումնառության կազմակերպողի, և քոլեջում մատուցվող կրթական ծառայություններից օգտվողների միջև

իրավահարաբերությունները, սովորողների կարգապահությանը ներկայացվող պահանջները:

Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջում կրթական ծրագրերի իրականացման և ուսումնական գործընթացի կազմակերպման համար առկա են մարդկային ռեսուրսներ, այդուհանդերձ, կան ՌԾ նպատակներ, որոնց իրականացման համար քոլեջը ֆինանսական և մարդկային ռեսուրսներ չի ներդնում (օրինակ, միջազգայնացում): Ֆինանսական միջոցները քոլեջի ձևավորվում են հիմնականում պետական բյուջեից:

Ըստ քոլեջի կանոնադրության աշխատողն իրավունք ունի մասնակցելու քոլեջի կառավարմանն ու ընդգրկվելու համապատասխան մասնագիտական, առարկայական խորհուրդների կազմում: Ինչպես նաև, ըստ կանոնադրության, ուսանողները կարող են ընդգրվել խորհրդի, ուսանողական խորհդի կազմում, ստեղծել խմբակներ, ակումբներ և մասնակցել դրանց աշխատանքներին:

Խորհուրդը բաղկացած է 11 անդամից: Խորհուրդն է հաստատում քոլեջի ՌԾ-ն և տարեկան ֆինանսական պլանը: Խորհրդի անդամներից 3-ն ուսանողներ են, իսկ 2-ը՝ դասախոսներ, ում թեկնածությունը մանկավարժական աշխատողների կազմից լիազոր մարմնին առաջադրել է քոլեջի մանկավարժական խորհուրդը:

Տնօրինական խորհրդի ներկա կազմում ընդգրված են քոլեջի տնօրենը, երկու փոխտնօրենները, որակի պատասխանատուն, պրակտիկայի բաժնի վարիչը, ուսումնական մասի վարիչներն ու ամբիոնների վարիչները, թվով՝ 12 հոգի:

Ըստ ԻՎ-ի՝ ՄՈՒՀ-ի խորհուրդներում ընդգրկված են ուսանողներ և դասախոսներ, ու կառավարման համակարգը նախատեսում է նրանց մասնակցությունն իրենց առնչվող որոշումների կայացմանը: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողների նախաձեռնողականությունն ու մասնակցությունը խորհրդի նիստերին ակտիվ չէ, չնայած որ խորհրդի նաև ուսանող անդամներն ունեն իրավունք հարցեր առաջադրելու: Որոշումների կայացման համար ուսանողների կարիքների վերհանման հստակ մեխանիզմներ հիմնականում չեն կիրառվում: Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջի խորհուրդների որոշումները քոլեջի կայքէջում չեն հրապարակվում:

Փորձագիտական վերլուծությունների ընթացքում պարզ դարձավ, որ 2017-2018 ուսումնական տարում քոլեջի 4 մասնագիտությունների 264 ուսանողների շրջանում անցկացված հարցման արդյունքների համաձայն՝ ուսումնական այդ տարվա ընթացքում հարցմանը մասնակից ուսանողների 62%-ը որևէ հարցով դիմել է տնօրենին, 56%-ը՝ ուսումնական գծով փոխտնօրենին, 88%-ը՝ ուսումնական մասի վարիչներին, 58%-ը՝ ամբիոնի վարիչներին, 84%-ը՝ հաշվապահություն, 78%-ը՝ գրադարան: Ըստ ինքնավերլուծության՝ տնօրենին դիմած ուսանողների բարձր տոկոսը պայմանավորված է նրա նկատմամբ վստահության բարձր աստիճանով և բարձրացված հարցի լուծման մեծ հավանականությամբ: Լրացուցիչ հարցումներ, բացահայտելու համար, թե արդյոք հարցմանը մասնակից ուսանողների բարձրաձայնած հարցերը լուծում են ստացել և ինչ աստիճանով, չեն կատարվել:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է պլանավորում և որոշ պլանային աշխատանքներ՝ կապված ամենամյա պարբերական գործունեության հետ: Քոլեջի

ընդհանուր գործունեության երկարաժամկետ պլանը զարգացման ռազմավարական ծրագիրն է (2018-2022թթ.)՝ հաստատված խորհրդի կողմից: Սակայն ռազմավարական ծրագրի իրականացման հստակ պլան՝ գործողությունների իրականացման ժամանակացույցով ու գնահատման ցուցիչներով, պատասխանատուներով և կատարողներոդ, դեռևս մշակված չէ: Ինքնավերլուծության ընթացքում քոլեջում արձանագրվել է ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման գործողությունների պլան-ժամանակացույցի մշակման անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, փորձագիտական առցանց այցի անցկացման ժամանակ քոլեջում մշակված պլան-ժամանակացույցի նախնական տարբերակ առկա չէր:

Ըստ ԻՎ-ի՝ քոլեջն իրականացնում է միջնաժամկետ պլանավորում, որը կրթական գործընթացում կատարվում է ուսումնական պլանների կազմման, իսկ ֆինանսատնտեսական ոլորտում՝ տարեկան բյուջեի պլանավորման միջոցով: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում գործող ՌԾ-ի նպատակների իրակացմանն ուղղված միջնաժամկետ (երկու-երեք տարվա) պլանավորում փաստացի չի իրականացվում: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան կտրվածքով գործընթացների պլանավորում: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ այս պլանները մշակվում են ստորաբաժանումների կողմից կանոնակարգերով իրենց ամրագրված լիազորություններն ու գործառույթները տարեկան կտրվածքով իրականացնելու համար: Վերլուծությունները, սակայն, ցույց տվեցին, որ տարեկան պլանները չեն բխում քոլեջի գործող ՌԾ-ի նպատակներից:

Ամբիոնների, ուսումնական բաժնի վարիչների և պրակտիկայի բաժնի աշխատանքային տարեկան պլանները հաստատում է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, իսկ կարիերայի ստորաբաժանման, որակի պատասխանատուի և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի աշխատանքային տարեկան պլանները՝ քոլեջի տնօրենը: Պլանները կազմվում են նույն ձևաչափով՝ նշելով նախատեսվող աշխատանքի անվանումը (միջոցառումը կամ բովանդակությունը), կատարողներին (պատասխանատուներին) և կատարման ժամկետը:

Քոլեջը ստորաբաժանումների տարեկան պլանների հիման վրա իրականացվող հաշվետվությունները դիտարկում է որպես մշտադիտարկման մեխանիզմ: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այդ հաշվետվությունները, որպես կանոն, չունեն վերլուծական բնույթ: Դրանցում արձանագրվում են տարվա ընթացքում կատարված աշխատանքներն՝ առանց գնահատականի, թե, օրինակ, պլանավորված որ գործողությունները չեն իրականացվել ու ինչ պատճառով: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ պլանների կատարման հաշվետվությունները փաստացի չեն վերլուծվում: Ըստ հաստատության ԻՎ-ի՝ քոլեջի կողմից արձանագրվել է կառավարման մարմինների հաշվետվությունների վերլուծությունների ու գնահատման մեխանիզմների, տնտեսական գործունեության, ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության գնահատման մեխանիզմների անկատարությունը: Այդուհանդերձ, այս առումով քոլեջի կողմից հստակ պլանավորում առկա չէ:

Ըստ հաստատության ինքնավերլուծության՝ քոլեջում իրականացվում է ֆինանսական պլանավորում՝ տարեկան կտրվածքով: Այդուհանդերձ, ֆինանսական պլանավորման հիմքում փաստացի քոլեջի ՌԾ-ն չէ: Հաշվետվությունների ներկայացման պահանջն ամրագրված է ստորաբաժանումների կանոնակարգերում և/կամ աշխատակիցների պաշտոնեական հրահանգներում: Չնայած որոշ ստորաբաժանումների և հաստիքների դեպքում հաշվետվողականության փաստաթղթային նման պահանջ ամրագրված չէ, այնուամենայնիվ, համապատասխան հաշվետվություններն առկա են: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ հաշվետվությունները հիմնականում կրում են կատարված աշխատանքների նկարագրությունները: Քոլեջի տնօրենի հաշվետվություններում համառոտ կերպով արձանագրվում են տարվա ընթացքում քոլեջում կատարված աշխատանքները՝ նյութատեխնիկական, ուսումնամեթոդական հենք, աշխատակազմ, ուսանողական համակազմ, ուսումնական աշխատանքներ, պետական ամփոփիչ ատեստավորում, շրջանավարտների աշխատանքի տեղավորում, ուսանողները միջազգային մրցույթներում, նորարարական ծրագրեր, լրացուցիչ կարճաժամկետ դասընթացներ ուղղություններով: Այդ հաշվետվություններն ունեն զուտ տեղեկատվական բնույթ՝ առանց վերլուծական որևէ բաղադրիչի: Քանի որ քոլեջի ընդհանուր գործունեության տարեկան պլանավորում չի կատարվում, այդ հաշվետվությունների գնահատում ևս չի իրականացվում:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ քոլեջում տարիներ շարունակ իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը կատարել է ոչ ինստիտուցիոնալ մակարդակով:

Գործող ռազմավարական ծրագրի մշակման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2017թ.-ին կատարվել է ներքին և արտաքին ազդեցության գործոնների ուսումնասիրություն, որի արդյունքներն ամփոփ ներկայացվել են SWOT վերլուծության տեսքով ռազմավարական ծրագրում: Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ որակի ապահովման պատասխանատուի կողմից անցկացվել է ներքին միջավայրի վերլուծություն՝ գործող կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր, դասախոսների և ուսանողների հետ հարցազրույցներ, ֆոկուս խմբերի արդյունքներ, ուսանողների շրջանում իրականացված սոցիալական հարցումների արդյունքներ, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և վերլուծության հարցումներ: Ըստ ԻՎ-ի՝ քոլեջի ներքին միջավայրի վերլուծության արդյունքները քննարկվել են ըստ ենթակայության տնօրինական և մանկավարժական խորհուրդներում: Վերլուծության արդյունքներն ընդունվել են ի գիտություն և արվել են համապատասխան հետևություններ: Արձանագրվել է առկա վիճակի գնահատման ու բարելավման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների անհրաժեշտությունը: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, սակայն, որ իրականացված SWOT վերլուծության հիմքում հստակ որակական կամ քանակական տվյալներ առկա չեն: Հստակ դուրս բերված ներքին (թույլ կողմերի) և արտաքին (վտանգների) հաղթահարմանն ուղղված գործողություններ պլանավորված չեն: Պետք է փաստել նաև, որ SWOT վերլուծության արտաքին միջավայրի (հնարավորությունների և հատկապես վտանգների հատվածը) վերլուծության արդյունքներ մի քանիսն են կամ առհասարակ առկա չեն:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի գործունեության վրա ազդող ներքին գործոնների ուսումնասիրման կիրառվող ընթացակարգերից է

ուսանողների և աշխատողների շրջանում հարցումների անցկացումը։ Փորձագետներին ներկայացվել է 2017-2018 ուսումնական տարում ուսանողների և 2018-2019 ուսումնական տարում աշխատակիցների շրջանում անցկացված հարցման արդյունքների վերլուծությունը։ Ինչպես պարզվեց փորձաքննության արդյունքում, կատարվող հարցումների, ֆոկուս խմբերի, հանդիպում-քննարկումների արդյունքներն ու եզրակացությունները չեն արձանագրվում, այլ իրականացվում են բանավոր կերպով։ Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ներքին միջավայրի գործոնների գնահատման նպատակով անցկացվող հարցումների, քննարկումների արդյունքում առկա չէ իրականացված փոփոխություն կամ դրանց հիմքով ընդունված որոշում։

Ըստ ինքնավերլուծության քոլեջում ներքին միջավայրի վերլուծության արդյունքում արձանագրվել է առկա վիճակի գնահատման ու բարելավման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների անհրաժեշտությունը։ Այնուամենայնիվ, առցանց այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ հստակ միջոցառումներ կամ ընթացակարգեր դեռևս պլանավորված կամ մշակված չեն։

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ որպես արտաքին միջավայրի գործոնների մասին տեղեկատվության աղբյուր՝ հիմք են պրակտիկայի օրագրերն ու պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները։ Արտադրատեխնոլոգիական և նախադիպլոմային պրակտիկաների օրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ձևաչափում կազմակերպության կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարը լրացնում է կարծիք-բնութագիր, որտեղ անդրադառնում է ուսանող-պրակտիկանտի հաճախումներին, կարգապահությանը, մասնագիտական որակներին և կատարած աշխատանքին։ Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ պրակտիկայի օրագրերը՝ ներառյալ կազմակերպության կողմից նշանակված ղեկավարի կարծիք-բնութագիրը, քննարկվում են պրակտիկայի բաժնի վարիչի ու համապատասխան ամբիոնի վարիչի կողմից, սակայն համապատասխան վերլուծություններ չեն իրականացվում։ Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ պրակտիկայի օրագրերի քննարկումների արդյունքում ՄԿԾ-ներում կատարված փոփոխությունների կամ բարելավումների դեպքեր քոլեջում առկա չեն։ Պետական ամփոփիչ ատեստավորման հաշվետվություններում հանձնաժողովների նախագահների ներկայացրած դիտարկումների և առաջարկությունների վերլուծության ու դրանց հետևանքով փոփոխությունների իրականացման մեխանիզմներ քոլեջում առկա չեն։ Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ արտաքին շահակիցներից շրջանավարտների համար նախատեսված հարցումներն ուղղված են միայն շրջանավարտների էլեկտրոնային բազայի վիճակագրական տվյալների թարմացմանը։ Առցանց այցից պարզ դարձավ, որ այդ նպատակով մշակված «Շրջանավարտի հարցաթերթիկ»-ը լրացնում են հենց ավարտական կուրսերի ուսանողները։ Նրանց՝ ուսումնառությունը հետագայում շարունակելու կամ աշխատանքի անցնելու մասին տեղեկատվություն հավաքագրելու նպատակով հետագայում կազմակերպվում են նաև առցանց կամ հեռախոսային հարցումներ։ Շրջանավարտների շրջանում այլ հարցումներ, օրինակ, մատուցված կրթական ծրագրերի կամ ծառայությունների, դասավանդման, ուսումնառության ու գնահատման վերաբերյալ, չեն իրականացվում։

Պարզ դարձավ նաև, որ արտաքին միջավայրի այլ հիմնավոր վերլուծություններ չեն իրականացվում, օրինակ շրջանավարտների աշխատանքի տեղավորման, հմտությունների պակասի կամ աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջների վերաբերյալ:

Կրթության որակի բնագավառում «Որակի քաղաքականությամբ» քոլեջի սահմանված նպատակների մի մասն ուղղված է պլանավորում, իրականացում, գնահատում և բարելավում շրջափուլի կիրառմանն ու տարածմանը քոլեջում: Այդ նպատակներն են՝ 1) որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետության բարձրացումը, 2) կրթական գործունեության որակի անընդհատ բարելավումն ապահովող որակի կառավարման համակարգ ունենալը, 3) կրթական կարիքների վերհանման մեխանիզմների պլանավորումը, մշակումը, իրականացումը և կատարելագործումը, 4) քոլեջի գործընթացների արդյունավետության մշտադիտարկումը՝ ապահովելով ծառայությունների շարունակական բարելավում: Համաձայն ինքնավերլուծության՝ որակի կառավարման սկզբունքով քոլեջի գործունեության կազմակերպման հիմքը դրվել է 2018 թվականին՝ ռազմավարական գործող ծրագրի հաստատմամբ: Քոլեջում գործընթացները ՊԻԳԲ շրջափուլով իրականացնելու մասին դրույթ որևէ փաստաթղթով սահմանված չէ: Եվ ընթացակարգերի անհրաժեշտ փոփոխությունները, համապատասխան փաստաթղթերի մշակումն ու լրամշակումը դեռևս ընթացքի մեջ են:

Ըստ ԻՎ-ի՝ ՊԻԳԲ շրջափուլի առաջին երկու բաղադրիչները կատարվում են պատշաճ մակարդակով, ու առկա խնդիրը գնահատման և, դրանով պայմանավորված, բարելավման իրագործման մեջ է: Այդուհանդերձ, փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց և փորձագիտական առցանց այցի ընթացքում հաստատվեց, որ ռազմավարական գործող ծրագրով և որակի քաղաքականությամբ պլանավորված մի շարք ընթացակարգեր դեռ պլանավորման փուլում են: Մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանն ու ապահովմանը վերաբերող գործողությունները, ինչպիսիք են՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման ապահովումը կրթական գործընթացում, տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգի մշակումը, «ուսանող-Քոլեջ» վիրտուալ տիրույթի ստեղծումը, էլեկտրոնային ուսուցման (E-Learning)-ի ներդրումը, արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիության ապահովումը քոլեջի ուսանողների և մանկավարժական կազմի համար:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման առանձին քաղաքականություն մշակված չէ: Առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից իրականացվող կրթական ծրագրերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների եզրակացությունների վերլուծություն չի իրականացվում և դրանց արդյունքները հիմք չեն հանդիսանում ՄԿԾ-ներում փոփոխությունների համար: Ուսումնական գործընթացի տարբեր բաղադրիչների՝ դասավանդման, ուսումնառության ու գնահատման արդյունավետության մասին տեղեկատվության հավաքագրման ու ուսումնասիրման հստակ կանոնակարգված ընթացակարգեր չկան: Քոլեջում առկա չէ նաև դրանց կիրառումը գնահատող որևէ մեխանիզմ:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ որպես կրթական ծրագրերի և շնորհվող որոկավորումների մասին տեղեկատվության տրամադրման հիմնական գործիք՝ դիտարկվում է քոլեջի պաշտոնական կայքէջը: Սակայն փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ կայքում հասանելի է տեղեկատվություն քոլեջում առկա մասնագիտությունների շրջանակում աշխատանքային գործունեության հիմնական զբաղմունքների վերաբերյալ: Փորձաքննության ընթացքում առկա չէր քոլեջի կրթական ծրագրերի կամ հաստատության շրջանավարտների հաջողությունների մասին տեղեկատվություն: Փաստացի առկա չեն նաև տեղեկատվության հրապարակումները գնահատող համապատասխան մեխանիզմներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կառավարման և վարչարարության բարելավման ուղղությամբ նպատակ է սահմանել իր զարգացման ռազմավարական ծրագրում և ջանքեր է գործադրում այս ոլորտի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել են ոլորտը կանոնակարգող փաստաթղթեր, փորձ է կատարվում ռազմավարական պլանավորման և կառավարման: Որոշ հիմքեր են ստեղծվել այս գործընթացների կանոնակարգման համար: Միևնույն ժամանակ, ռազմավարական պլանավորումն ու կառավարումը գտնվում են դեռևս ստեղծման փուլում, և այս գործընթացը չի տարածվել քոլեջի ամբողջ գործունեության մեջ ու որպես մշակույթ ամրապնդված չէ: Ռազմավարական արդյունավետ պլանավորումն ու կառավարման հիմքում քոլեջի ռազմավարական ծրագրի ներդրումը կնպաստեն քոլեջի բոլոր գործընթացների համաչափ զարգացմանը և կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Դրական է, որ քոլեջի կառավարման խորհուրդներում ներգրավված են ուսանողներ, դասախոսներ, արտաքին շահակցիներ և որ ուսանողներին ու դասախոսներին հնարավորություն է տրված իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցություն ունենալ, ինչպես նաև հնարավորություն ունեն անմիջապես քոլեջի տնօրենին ներկայացնել իրենց խնդիրները: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը պարզեց, որ քոլեջում չեն կատարվում վերլուծություններ տարբեր շահակիցների կողմից բարձրացված հարցերի լուծումներ ստանալու վերաբերյալ, ինչպես նաև մեխանիզմներ չեն կիրառում խորհուրդներում ուսանողների և դասախոսների նախաձեռնողականության բարձրացման վերաբերյալ: Կառավարման խորհուրդներում կայացված որոշումների հրապարակայնությունը ևս խնդիր է: Այս գործընթացը կանոնակարգված և համակարգված բնույթ չի կրում: Քոլեջում տարբեր հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը շահակիցների մասնակցության բարձրացումը կնպաստի բազմաբնույթ խնդիրների արձագանքմանը և տարբեր գործընթացների որակի շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջի կազմակերպական կառուցածքից մի քանի պատասխանատուների, ստորաբաժանումների հաստիքներ դուրս են մնացել (ՈԱ պատասխանատու, կարիերայի պատասխանատու): Ինչը վտանգում է ՌԾ-ի նպատակների արդյունավետ իրականացումը, քոլեջի ստորաբաժանումների արդյունավետ կառավարումն ու հաշվետվողականությունը:

Չնայած նրան, որ քոլեջն ունի երկարաժամկետ ՌԾ, այդուհանդերձ, մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ում իրականացվող կարճաժամկետ գործընթացները չեն բխում ՌԾ-ի

նպատակներից, քոլեջում առկա չեն միջնաժամկետ ծրագրեր, որոնք կհստակեցնեն երկարաժամկետ պլանը: Այս ամենը վտանգում է ռազմավարական արդյունավետ կառավարման իրականացմանը: Հստակ և փոխկապակցված պլանավորումները, որոնք կդառնան քոլեջի գործունեության առօրյա կառավարման հիմնաքարը, կնպաստեն արդյունավետության բարձրացմանը:

Մտահոգիչ է, որ հաստատության ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները չեն վերլուծվում, ինչը վնասում է ընթացքում կառավարման արդյունավետության գնահատմանը: Մտահոգիչ է, որ հաշվետվություններում ներառվում են միայն այն գործընթացները, որոնք իրականացվել են հաշվետու ժամանակահատվածում, իսկ խնդիրներն ու չիրականացված գործընթացների պատճառները չեն վերլուծվում, ինչն էլ վտանգում է դրանց հետագա ներառումը պլանավորման փուլ և հետագա իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից իրականացրած SWOT վերլուծությունը և այն քոլեջի ՌԾ-ի հիմքում ներառելը: Այդուհանդերձ, մտահոգիչ է, որ վերլուծության հիմքում հիմնավոր քանակական կամ որակական տվյալներ առկա չեն, ինչը չի նպաստում քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում առկա հստակ պատկերի դուրսբերմանը: Մտահոգիչ է նաև այն, որ քոլեջը արտաքին գործոնների վերլուծություններ չի իրականացրել, ինչը խոչընդոտում է ներքին գործընթացների արդյունավետ պլանավորմանը ու արտաքին ռիսկերի բացահայտմանն ու արդյունավետ հաղթահարմանը:

Չնայած այն բանին, որ քոլեջը իր ինքնավերլուծությունում և ՌԾ-ում որպես թույլ կողմ ներկայացնում է որակի կառավարման շրջափուլի պլանավորման և իրականացման փուլում գտնվելու հանգամանքը, այդուհանդերձ, մտահոգիչ է, որ գնահատման և բարելավման գործընթացում գտնվող գործընթացներ առկա չեն: Մտահոգիչ է, որ հաստատությունը հստակ քայլեր չի նախատեսում քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի ներդրման առումով: Սա խոչընդոտում է հաստատության պլանավորված գործընթացների իրականացումը: Մտահոգիչ է նաև, որ քոլեջի կողմից նախատեսված տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանն ու ապահովմանը վերաբերող գործողությունները՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման ապահովումը կրթական գործընթացում, տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգի մշակումը, «ուսանող-Քոլեջ» վիրտուալ տիրույթի ստեղծումը, էլեկտրոնային ուսուցման (E-Learning)-ի ներդրումը, արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիության ապահովումը քոլեջի ուսանողների և մանկավարժական կազմի համար, դեռևս պլանավորման փուլում են և իրականացման հստակ պլան ու գործընթացներ առկա չեն քոլեջում: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջում մշտադիտարկման աշխատանքները չունեն համակարգային և պլանավորված բնույթ, ինչը խոչընդոտում է գործընթացների իրականացման ընթացքում խնդիրների և դրանցից բխող համապատասխան փոփոխությունների իրականացումը:

Պարզ դարձավ նաև, որ կառավարումն ու վարչարարությունը դեռևս ՊԻԳԲ շրջափուլով չեն իրականացվում, առկա են պլանավորման և իրականացման որոշ տարրեր, իսկ գնահատումն ու բարելավումը շատ տարերային բնույթ են կրում, ինչն էլ

վտանգում է շրջափուլի լիարժեք իրականացմանը, շահակիցների կողմից գաղափարի ընկալմանը:

Չնայած քոլեջում առկա ՈԱ գործընթացներին և իրականացրած հարցումներին, այդուհանդերձ, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ քոլեջում առկա կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդման, գնահատման, վերջնարդյունքների ձեռքբերման վերաբերյալ տվյալների հավաքագրում, վերլուծում ու գնահատում համակարգված չի իրականացվում, ինչը կարող է վտանգել առկա խնդիրների և լավ փորձի բացահայտմանն ու ՄԿԾ-ների լավացմանը:

Չնայած նրան, որ քոլեջն իր կայքէջում ներկայացնում է քոլեջում իրականացվող ՄԿԾ-ների մասին որոշակի տեղեկատվություն, այդուհանդերձ, մտահոգիչ է, որ կայքում չի ներկայացվում կրթական ծրագրերի ամբողջական բովանդակությունը: Մտահոգիչ է նաև, որ քոլեջի կողմից չեն ներկայացվում մատուցված կրթական ծրագրերի շրջանակներում իրականացրած վերլուծությունները, ինչպես նաև քոլեջի՝ հաջողության հասած շրջանավարտների մասին տեղեկատվություն: Սա կարող է խոչընդոտել տարբեր շահակիցների շրջանում քոլեջի տեսանելիության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ռազմավարական կառավարումը դեռևս արդյունավետ չի իրականացվում, մշակված չեն ՌԾ-ի իրականացման գործողությունների ծրագիր, ժամանակացույց, քոլեջի կազմակերպական կառուցվածքը վերլուծված և գնահատված չէ, կառուցվածքը չի նպաստում քոլեջի առաքելության և ՌԾ-ի նպատակների իրականացմանը, քոլեջում առկա ստորաբաժանումների պլանները փաստացի չեն բխում քոլեջի ՌԾ-ի նպատակներից, քոլեջի կողմից իրականացված ներքին և արտաքին միջավայրերի վերլուծությունը հիմնված չէ հստակ տվյալների վրա, ինչպես նաև քոլեջում կայացված որոշումների հիմքում հիմնականում առկա չէ ուսումնասիրված, վերլուծված տվյալներ, քոլեջում ներդրված չեն մասնագիտությունների կրթական ծրագրերի, քոլեջի կառավարման և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ, քոլեջում առկա չեն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը չի բավարարում Չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր ըստ չափանիշի: Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի գործող ՌԾ-ում որպես առաքելություն նշված է. «գիտելիքի որոնումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական

գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ բարձրորակ մասնագետների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում»:

Ինչպես նաև քոլեջի ՌԾ-ում որակյալ կրթությունը սահմանված է՝ որպես ռազմավարական նպատակ:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը կանոնադրության համաձայն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Կրթական ծրագրերն իրականացվում են 4 մասնագիտություններով՝

- Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր
- Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում
- Համակարգչային գեղարվեստական նախագծում
- Մեխատրոնիկա:

Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջը ՄԿԾ-ների առանձին փաթեթներ չի մշակել (որը կներառի ՄԿԾ-ների նպատակները, առանձնահատկությունը, ուսումնասիրման համար նախատեսված գրականության ցանկը): Քոլեջում մասնագիտական կրթական ծրագրերն իրականացվում են սահմանված պետական կրթական չափորոշիչների շրջանակում: Քոլեջում իրականացվող ՄԿԾ-ներում իրականացվում են որոշակի փոփոխություններ՝ չափորոշիչներով նախատեսված փոփոխությունների կատարման թույլատրելի սահմաններում: Մասնավորապես, ելնելով ուսանողների ցանկությունից, քոլեջում փոփոխություն են կատարել «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրում, դասավանդվող ծրագրավորման լեզուներից մի քանիսը փոխարինելով առավել նորերով: Սակայն, փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում եղել է նաև այնպիսի դեպք, երբ անհրաժեշտ մասնագիտական հմտություն ունեցող դասախոսի բացակայության և տվյալ առարկայի դասախոս ներգրավելու հետ կապված խնդիրների պատճառով, քոլեջում առաջացել է նոր առարկայի ներդրման անհնարինություն:

Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջի իրականացրած ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համապատասխանում են որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՇ): Առցանց այցի ընթացքում պարզվեց նաև, որ պետական կրթական չափորոշիչների մշակման աշխատանքներին մասնակցել է ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական (այսուհետ՝ ՊԴ) կազմը: Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի մշակման ժամանակ քոլեջը հիմք է ընդունել համապատասխան պետական կրթական չափորոշիչը՝ հիմնական շեշտը դնելով առավելապես վեբ ծրագրավորողների պատրաստման վրա: Քոլեջում դասավանդվող մասնագիտությունների վերաբերյալ աշխատաշուկայում պահանջարկի համակարգային վերլուծություն իրականացված չէ:

Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների ճնշող մեծամասնությունը ՄՈՒՀ-ն ավարտելուց հետո պատրաստվում է շարունակել կրթությունը բուհում: Առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ նաև, որ

նման մոտեցման հիմնական պատճառն, ըստ քոլեջի, աշխատանքի ընդունման համար անհրաժեշտ բարձրագույն կրթության դիպլոմն է:

ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի մոդուլներում առկա են որոշ ընդհանրական նկարագրություններ գնահատման և դասավանդման մեթոդների վերաբերյալ: Մասնագիտական մոդուլների ծրագրերը մշակվում են դասախոսների կողմից՝ հիմք ընդունելով մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները: Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ՄՈՒՀ-ը խրախուսում է դասավանդման և ուսումնառության այն մեթոդները, որոնք ուղղված են կարողությունների և հմտությունների զարգացմանը: Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ դասախոսներն իրենք են ընտրում դասավանդման մեթոդները: Քոլեջում դասավանդումն իրականացվում է ինտերակտիվ մեթոդներով (ուսանողների ներգրավվածության ապահովում, խնդիրների քննարկում, հարց-պատասխան): Օրինակ, վեբ ծրագրավորող կրթական ծրագրի ուսանողներն ուսումնառության ընթացքում ձեռք են բերում անհրաժեշտ գործնական հմտություններ, որոնք հնարավորություն են տալիս մշակել վեբ կայք: ՄԿԾ-ների հանձնարարությունների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ընթացիկ հանձնարարություններն իրենցից ներկայացնում են խնդիրներ: Ամփոփիչ հանձնարարականներն իրենից ներկայացնում էին յուրաքանչյուր առարկային վերաբերող խնդիրներ, որոնք հիմնականում գործնական բնույթի էին: Հանձնարարականներն ընդհանուր առմամբ միտված են ՄԿԾ-ների վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում դասապրոցեսն առցանց կազմակերպելիս հիմնականում դասավանդման նյութերը դասախոսներն ուղարկում են ուսանողներին կամ տրամադրում համապատասխան հղումները (էլեկտրոնային գրադարանում առկա գրականությունից): Առցանց կազմակերպվող դասի ժամանակ դասավանդվող նյութը դասախոսը ներկայացնում է իր իսկ կողմից ընտրված մեթոդով:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ նաև, որ ուսանողներին գնահատելիս շեշտադրումն արվում է ուսանողների ձեռքբերած գործնական հմտությունների վրա: Վերջնարդյունքներին միտված դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը հիմնականում կախված է դասախոսի կողմից ընդունված կամ ժամանակի ընթացքում ձևավորված մոտեցումներից: Փորձագիտական խմբի կողմից իրականացվող առցանց այցերի ժամանակ պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը համակարգված չէ և կախված է դասախոսի փորձառությունից:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ԻՎ-ում նշված է, որ քոլեջն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր: Փորձագիտական խմբի կողմից քոլեջի տրամադրած փաստաթղթերի ուսումնասիրություններից և կատարած առցանց այցերից պարզ դարձավ, որ քոլեջում առկա է «Սովորողների գիտելիքների ստուգման, գնահատման, բողոքարկման և վերահանձնման կանոնակարգ» փաստաթուղթը, որը հաստատվել է 2016 թվականի օգոստոսի 26-ին քոլեջի տնօրենի կողմից: Սույն փաստաթուղթը ներառում է սովորողների գիտելիքների ստուգման բոլոր ձևերը (ընթացիկ և միջանկյալ ստուգումներ,

կիսամյակային ստուգարքներ և քննություններ, պետական ամփոփիչ ատեստավորում), գնահատման, բողոքարկման, վերահանձնման գործընթացը:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման համար յուրաքանչյուր դասախոս կազմում է համապատասխան հարցաշար և/կամ թեստեր, ներկայացնում է համապատասխան ամբիոնի նիստի քննարկմանը կիսամյակների սկզբում: Այնուհետև ամբիոնի վարիչը հաստատում և ներկայացնում է ուսումնական գծով փոխտնօրենին:

Հաստատված քննատոմսերը պահվում են ուսումնական բաժինների վարիչների մոտ և տրվում են կիրառության միայն քննություններից առաջ, կազմված ժամանակացույցի համաձայն՝ ըստ կիսամյակների:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում պետական ամփոփիչ ատեստավորումը հիմնականում իրականացվում է պետական ավարտական քննությունների տեսքով, իսկ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները հնարավորություն են ստանում քոլեջն ավարտելիս իրականացնել դիպլոմային աշխատանք:

Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ դիպլոմային աշխատանքների գրախոսություններն իրականացվում են քոլեջից դուրս, այժմ միայն Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում (այսուհետ՝ ՀԱՊՀ) և Երևանի պետական համալսարանում (այսուհետ՝ ԵՊՀ), սակայն նախատեսում են դիպլոմային աշխատանքներն ուղարկել գրախոսության նաև գործատու կազմակերպություններ:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Մեխատրոնիկա» մասնագիտությունների համար քոլեջը սահմանել է մեթոդական ուղեցույց տվյալ մասնագիտության որակավորման շնորհման դիպլոմային նախագծերի կատարման համար: Այն նախատեսված է տվյալ մասնագիտությամբ սովորող ուսանողների, դասավանդողների և դիպլոմային նախագծերի ղեկավարների համար: Ուղեցույցը ներառում է դիպլոմային նախագծերի կատարմանը ներկայացվող հիմնական պահանջները:

Ինչպես նաև «Ակադեմիական ազնվության հայեցակարգ» փաստաթղթում (հաստատված քոլեջի տնօրինական խորհրդի 12.04.2019թ. նիստում), սահմանվում է, որ ուսանողները հետազոտական աշխատանք, ռեֆերատ կամ հոդված գրելիս պետք է օգտագործեն հղումներ, որոնցում նշվում են հեղինակը, աշխատությունը և որտեղից են վերցված մտքերը, ինչպես նաև աշխատանքի վերջում պարտադիր ունենան մատենագրություն, որտեղ նշված կլինեն տեղեկատվական բոլոր աղբյուրները:

Քոլեջի կողմից ներկայացված դիպլոմային աշխատանքների ուսումնասիրությունների ընթացքում պարզ դարձավ, որ դրանց կատարման ընթացքում հիմնական շեշտադրումն արված է թեմայի տեսական մասին, իսկ օգտագործված աղբյուրներին հղումներ ոչ միշտ են առկա:

Ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ, ըստ ակադեմիական ազնվության հայեցակարգի, ակադեմիական ազնվության խախտման դեպքում պատասխանատվություն նախատեսվում է միայն ուսանողների համար:

Պրակտիկաները հիմնականում անցկացվում են գործատու կազմակերպությունների մոտ՝ օգտագործելով գործատուի ռեսուրսները։ Պրակտիկաների ընթացքում ուսանողները ներգրավվում են կազմակերպության իրական աշխատանքներում, ձեռք են բերում գործնական հմտություններ։ Օրինակ, հիմնականում «Մեխատրոնիկա» մասնագիտության ուսանողները Հայաստանի ազգային Ճարտարագիտական լաբորատորիաներում (այսուհետ՝ ՀԱՃԼ) տեղի աշխատողների ուղղորդմամբ իրականացնում են սեփական նախագծերը։ Մասնավորապես, պատրաստում են սարքերի նախատիպեր։

Քոլեջում մասնագիտություններ ներդնելիս հիմնվում են ՊԿՉ-ների վրա։ Պետական կրթական չափորոշիչների առկայությունը հիմնականում հստակ սահմանում է բովանդակային մասի պահանջները։ ՀՀ ՄՈՒՀ-երում ծրագրերը բովանդակային առումով մեծամասամբ համընկնում են։

Քոլեջում առկա է փորձ, երբ կրթական ծրագիր է մշակվել Միացյալ Թագավորության Բրեդֆորդի քոլեջի հետ համագործակցության շրջանակներում (2008թ.).արդյունքում 2011թ.-ին «Մեխատրոնիկա» մասնագիտությամբ քոլեջում կատարվել է առաջին ընդունելությունը։ Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրի վերանայման ընթացակարգ կամ մեխանիզմ փաստացի առկա չէ։ Ծրագիր ներդնելուց հետո մոդուլներում իրականացված փոփոխությունների օրինակներ առկա չեն։

Առցանց այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը փորձում է համագործակցել Դոնի Ռոստովի կապի և ինֆորմատիկայի քոլեջի հետ, նախատեսում է որոշակի համատեղ կրթական գործունեություն իրականացնել։ Սակայն քոլեջի պնդմամբ պետական կրթական չափորոշիչներով սահմանված մոդուլների համադրումը դեռ հնարավոր չէ իրականացնել վերոնշյալ քոլեջի կրթական ծրագրերի հետ։

Քոլեջում դասախոսների, ուսանողների շրջանում շարժունության օրինակներ առկա չեն։ Չկան նաև դասախոսների կամ ամբիոնների վարիչների կողմից կատարված արտասահմանյան ծրագրերի ուսումնասիրություններ, որոնք հնարավորություն կտային ծրագրերի լավացման համար։

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում նախաձեռնվում են որոշ քայլեր արդիական և հեռանկարային ուղղություններով նոր առարկաներ (մեքենայական ուսուցում) և կրթական ծրագրեր (ռոբոտատեխնիկա) ներդնելու ուղղությամբ, սակայն դրանք առավելապես դասախոսական կազմի անհատական նախաձեռնություններ են։ Ուսանողների և դասախոսների ոչ ֆորմալ քննարկումների արդյունքում իրականացվել են որոշ փոփոխություններ C++ և C# ծրագրավորման լեզուների ուսուցման դասընթացներ ներդնելու համար։ Գործատուների հետ համագործակցության արդյունքում փոփոխվել է պրակտիկայի ժամանակացույցը՝ պրակտիկայի համար անհրաժեշտ տեսական բազան նախքան դրա իրականացումը ուսանողներին փոխանցելու համար։ Քոլեջն այս առումով նախատեսում է պրակտիկաներ իրականացնել նաև մինչև չորրորդ կուրսը։ Փաստացի վերոնշյալ փոփոխություններն իրականացնել են ոչ ֆորմալ քննարկումների արդյունքում.վերլուծություններ այս առումով առկա չեն։

Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջում իրականցվում են դասալսումներ (ունեն դասալսումների մատյան), որոնց արդյունքում հիմնականում դուրս են բերվում ՊԴ կազմի (հատկապես նոր ընդունված) դասավանդման մեթոդական խնդիրներ: Առցանց այցից պարզ դարձավ սակայն, որ դասալսումների արդյունքների վերլուծություններ և դրանց արդյունքում մոդուլներում հստակ իրականացված փոփոխությունների օրինակներ առկա չեն քոլեջում: Դրանք հիմնականում միտված չեն կրթական ծրագրերի հետ կապված փոփոխությունների իրականացման կարիքների դուրս բերմանը:

Առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ՄԿԾ-ներում գործնական աշխատանքների անկացման ծավալների մեծացման անհրաժեշտություն կա:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի կողմից իրականացվող ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համահունչ են քոլեջի սահմանած առաքելությանն ու ՈԱՇ-ին: Քոլեջը ջանքեր է գործադրում կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ:

Չնայած նրան, որ քոլեջի ՌԾ-ի նպատակներից է աշխատաշուկայում պահանջված մասնագիտություններով շրջանավարտների պատրաստումը, սակայն մտահոգիչ է այն, որ ոլորտում պահանջված մասնագետների կամ մասնագիտական հմտությունների համակարգային վերլուծություն իրականացված չէ քոլեջի կողմից: Չնայած այն բանին, որ քոլեջում առկա է աշխատաշուկայի պահանջների մասին ոչ ֆորմալ տարբերակով տեղեկատվություն, այնուամենայնիվ, այն չի իրականացվում կանոնակարգված ձևաչափով և հստակ ժամանակացույցով: Ինչը կարող է վտանգել ՄԿԾ-ներում արդյունավետ և հստակ փոփոխությունների իրականացումը: Սակայն աշխատաշուկային քոլեջի որոշակի ընդհանրական տեղեկացվածությունը փորձագիտական խմբի կարծիքով պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանում մասնագիտության խիստ արդիականության հետ:

Դրական է այն, որ ՄԿԾ-ներում նկարագրված վերջնարդյունքներն ընդհանուր առմամբ համապատասխանում են ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչներին: Կատարվում են միայն որոշակի փոփոխություններ թույլատրելիության սահմաններում: Այդուհանդերձ, մտահոգիչ է, որ այդ փոփոխությունների հիմքում հստակ վերլուծություններ առկա չեն, ինչպես նաև այդ փոփոխություններին և դրանց առաջարկին գործատուները չեն մասնակցում: Գործատուների մասնակցությունը այս գործընթացում կապահովի քոլեջի կողմից ՌԾ-ով սահմանված նպատակի իրականացմանը, այն է՝ պրակտիկ կարողություններով և հմտություններով շրջանավարտների պատրաստումը:

Մտահոգիչ է, որ կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը համակարգված չէ, ինչը փորձագիտական խմբի կարծիքով կարող է նպաստել դասախոսակենտրոն մոտեցումների լայն կիրառմանը, դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման հանդեպ դիմադրության առաջացմանը՝ ունենալով միտում պահպանել դասավանդման վաղուց ընդունված՝ հիմնականում պասիվ մեթոդները: Այս մոտեցումը կարող է խոչընդոտել սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Դրական է այն փաստը, որ քոլեջն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր: Ինչպես նաև ողջունելի է այն, որ քոլեջում առկա է ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման, բողոքարկման և վերահանձնման կանոնակարգ, որտեղ սահմանվում են ուսանողի կողմից իր գնահատման արդյունքի բողոքարկման և դրա համար հանձնաժողովի ձևավորման ընթացակարգերը: Այդուհանդերձ, մտահոգիչ է, որ վերոնշյալ փաստաթղթերում հստակ չի նշվում գնահատման չափանիշների մասին:

Դրական է այն փաստը, որ քոլեջում ուսանողներին գնահատելիս շեշտը դրվում է ուսանողների գործնական հմտությունների վրա:

Դրական է քոլեջում 2008թ.-ին տեղի ունեցած համագործակցությունը բրիտանական քոլեջներից մեկի հետ մեկ մասնագիտության գծով. իրականացվել է կրթական ծրագրերի համեմատություն: Դրական է նաև, որ ՄՈՒՀ-ը համագործակցում է Դոնի Ռոստովի կապի և ինֆորմատիկայի քոլեջի հետ, նախատեսում է որոշակի համատեղ կրթական գործունեություն իրականացնել: Այդուհանդերձ, մտահոգիչ է, որ վերոնշյալ համագործակցության արդյունքների ներդնում և փորձի տարածում քոլեջի կրթական մյուս ծրագրերի շրջանակներում փաստացի տեղի չի ունեցել: Ինչը կարող է խոչընդոտել համագործակցության արդյունքում դուրսբերված լավագույն փորձի արդյունավետ տարածմանը:

Մտահոգիչ է, որ քոլեջում ՄԿԾ-ներին ուղղված հարցումներ չեն անցկացվել: ՄԿԾ-ներին վերաբերող փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնվում է դասախոսների կարծիքների վրա, որոնք բարձրաձայնվում են բանավոր կերպով և համակարգված բնույթ չեն կրում: Դրական է այն, որ քոլեջն իր արտաքին և ներքին շահակիցների կարծիքների (ոչ ֆորմալ քննարկումների ժամանակ դուրսբերված) հիման վրա կատարել է ՄԿԾ-ներին վերաբերող որոշակի փոփոխություններ: Ինչը կարող է նպաստել քոլեջի ՌԾ-ի նպատակների իրականացմանը: Այս գործընթացի համակարգումը և գործատուների անմիջական ներգրավումը կնպաստեն ՄԿԾ-ներում առկա բացերի բացահայտմանն ու բարելավումների իրականացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա ՄԿԾ-ները ընդհանուր առմամբ համապատասխանում են քոլեջի առաքելությանը, որակավորումների ազգային շրջանակին, կազմված են ըստ պետական կրթական չափորոշիչների, քոլեջում գործում են գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր, մոդուլներում առկա են դասավանդման մեթոդների ընդհանրական նկարագրություններ, մշակված է ակադեմիական ազնվության հայեցակարգ, առկա են որոշակի օրինակներ արտասահմանյան քոլեջների հետ համեմատությունների, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը բավարարում է Չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր ըստ չափանիշի: Քոլեջի ռազմավարական գործող ծրագրում՝ որպես զարգացման առանձին նպատակ, ամրագրված է «Ընդունելությունը»: Այս նպատակի ապահովման համար սահմանված գործողություններով նախատեսվում է ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմների ձևավորում: Այս առումով քոլեջի կայքէջի «Դիմորդ» բաժնում դիմորդներին վերաբերող համապատասխան արդիական տեղեկատվություն է տեղադրվում, իրականացվում է գովազդային բուկլետների թարմացում, քարոզչական խմբերի ստեղծում, «Բաց դռների օրերի» և «Ինֆորմատիկա» առարկայի քաղաքային օլիմպիադայի կազմակերպում:

Ուսանողների ընդունելությունը կատարվում է լիազոր մարմնի կողմից հաստատված ընթացակարգով՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի»:

Քոլեջի պաշտոնական կայքի «Դիմորդին» բաժնում ներկայացված է ընդունելության ընթացակարգն ու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Այլ տեղեկատվություն, օրինակ, առկա տեղերի, ուսման վարձավճարների և այլնի մասին, տեղադրված չէ: Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ դիմորդները քոլեջի մասին հիմնականում տեղեկանում են շրջանավարտներից կամ այնտեղ արդեն իսկ սովորող ուսանողներից, ավելի հազվադեպ՝ սոցիալական հարթակներից (քոլեջի ֆեյսբուքյան էջից ու կայքից):

Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ հանրակրթական դպրոցների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման և ուսանողների հավաքագրման նպատակով ստեղծված քարոզչական խմբերը 2015թ.-ից սկսած հանդիպումներ են անցկացրել հիմնական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների հետ: Այդ հանդիպումների ժամանակ մասնակիցներին տրամադրվել է քոլեջի քարոզչական բուկլետը, որտեղ ներկայացված է տեղեկատվություն քոլեջի մասնագիտությունների, գործընկերների, դասավանդման հիմնական ուղղությունների ու գործունեության մասին: Սակայն, փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ տվյալ պահին այդ գործընթացը չի իրականացվում: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ նախորդ տարիների ընթացքում քոլեջի քարոզչական գործունեության արդյունավետության ու հետադարձ կապի ապահովման գնահատում և վերլուծություն չի կատարվել: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի ռազմավարական գործող ծրագրով սահմանված «Բաց դռների օրերի» կազմակերպում և անցկացում համավարակով պայմանավորված տեղի չի ունեցել:

Փորձագիտական վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնական վերջին 5 տարիների ընթացքում ուսումնական այլ հաստատություններից քոլեջ է տեղափոխվել ընդհանուր 42 ուսանող, իսկ քոլեջից ուսումնական այլ հաստատություններ արտահոսքը կազմել է 63 ուսանող:

Ուսանողները քոլեջից հեռացվում են ցածր առաջադիմության, անվճարունակության, ինչպես նաև՝ ժամկետային զինծառայության անցնելու պատճառով

կամ սեփական դիմումի համաձայն։ Քոլեջից հեռացված ուսանողներն ունեն սահմանված կարգով ուսումը վերականգնելու իրավունք։ Ուսումնական վերջին 5 տարիներին քոլեջից հեռացվել է 129 ուսանող, ուսումը վերականգնել՝ թվով 106 ուսանող։ Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջից ցածր առաջադիրմության պատճառով դուրս մնացած ուսանողների պատճառների վերլուծություններ չեն իրականացվել։

Ըստ քոլեջի կանոնադրության՝ ուսանողները կարող են ընդգրվել խորհրդի, ուսանողական խորհդի կազմում, ստեղծել խմբակներ, ակումբներ և մասնակցել դրանց աշխատանքներին։ Խորհրդի գործող կազմի 11 անդամներից 3-ն ուսանողներ են, ում թեկնածությունը ուսանողների կազմից լիազոր մարմնին առաջադրել է քոլեջի ուսանողական խորհուրդը։ Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ խորհրդի նիստերի ժամանակ ուսանողները հիմնականում պասիվ են.փաստացի առկա չեն ուսանողներին հուզող հարցերի վերհանման ու քննարկման օրինակներ։ Նրանք առավելապես նախընտրում են ի հայտ եկած խնդիրներով անմիջականորեն, ոչ ֆորմալ ձևով դիմել քոլեջի վարչական կամ դասախոսական կազմի ներկայացուցիչներին՝ հարցի ավելի արագ լուծում ստանալու նպատակով։

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում ուսանողների կրթական կարիքների ուղղակիորեն բարձրաձայնման մի քանի տաբեր մեխանիզմներ կան։ Առցանց այցից պարզ դարձավ, որ խնդիր առաջանալու դեպքում ուսանողները դիմում են հիմնականում դասախոսին, կուրսի ղեկավարին (այսուհետ՝ կուրսղեկ) կամ ամբիոնի վարիչին։ Ուսումնական յուրաքանչյուր տարվա սկզբում ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից հաստատվում է կուրսղեկի աշխատանքային տարեկան պլանը, որով նախատեսվում են խմբի ուսանողների հետ տարվող աշխատանքները՝ սահմանված կուրսի ղեկավարի պաշտոնեական հրահանգով։ Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ նման տարբերակով լուծում է ստացել ուսանողների կողմից բարձրաձայնված հետևյալ խնդիրը։ Պայմանավորված լեզվի իմացության մակարդակների զգալի տարբերությամբ՝ ուսանողները դժգոհություն էին ներկայացրել խմբով օտար լեզվի տարբեր մակարդակների տիրապետող ուսանողների համատեղ դասընթացը կազմակերպելու մասին։ Օտար լեզվի դասախոսին և իրենց կուրսղեկին դիմելուց հետո կազմակերպվել էր ուսանողների թեստավորում՝ մակարդակները հստակեցնելու նպատակով։ Ըստ տիրապետման աստիճանի՝ ձևավորվել էին երկու խմբեր, որոնցով էլ շարունակվել էր կազմակերպվել դասընթացը։ Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողների շրջանում առաջացած լեզվի փոփոխության հարց է բարձրաձայնվել, այդուհանդերձ, դրա լուծումը դեռ տրված չէ համապատասխան մասնագետ չունենալու պատճառով։

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ կուրսղեկի կամ ամբիոնի վարիչի միջոցով առաջացած խնդիրը չլուծելու դեպքում ուսանողները դիմում են ուսանողական խորհրդին։ Ուսանողական խորհուրդն էլ այդ դեպքում առկա հարցի լուծում ստանալու նպատակով դիմում է քոլեջի տնօրենին։ Օրինակ, երբ առաջացել էր գործնական աշխատանքների ժամանակ լաբորատորիայի օգտագործման խնդիր երկու կուրսերի մոտ, ուսանողական խորհրդի՝ տնօրենին դիմելուց հետո, փոխվել էր դասացուցակը, և արդյունքում երկու կուրսն էլ հնարավորություն էր ստացել օգտվելու անհրաժեշտ լաբորատորիայից։

Ըստ ինքնավերլուծության՝ որակի ապահովման պատասխանատուի հաստիքի համալրվելուց հետո՝ սկսած 2017թ.-ից, ուսանողների կարիքների վերհանման համար կատարվում են նաև հարցումներ, կազմակերպվում հանդիպումներ և ֆոկուս խմբեր: Սակայն, փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողների կրթական կարիքների բացահայտման և գնահատման առանձին քաղաքականություն դեռևս մշակված չէ, և կատարվող աշխատանքներն էլ համակարգային բնույթ չեն կրում: Մասնավորապես, իրականացվող հարցումները պարբերական չեն, իսկ քննարկումների արդյունքներն էլ ոչ միշտ են արձանագրվում ու կրում են ոչ ֆորմալ բնույթ: Առցանց այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուն ուսանողների հետ կապն ապահովում է կուրսերի ավագների միջոցով:

Քոլեջում լրացուցիչ պարապմունքների կազմակերպման ու խորհրդատվության տրամադրման առանձին քաղաքականություն մշակված չէ, սակայն կան հստակ գործող ընթացակարգեր: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունները լինում են երկու տեսակի՝ ընթացիկ և ըստ ուս. տարվա հաստատված պլանի: Ընթացիկ խորհրդատվությունների կազմակերպման համար քոլեջի ուսումնական մասի վարիչները, դասավանդողների հետ համաձայնեցնելով, կազմում են դասախոսների կոնսուլտացիաների ժամանակացույցը, որը հաստատվում է ուսումնական գծով փոխտնօրենի կողմից: Ըստ հաստատված ժամանակացույցի՝ յուրաքանչյուր դասախոս շաբաթվա ընթացքում սահմանված ժամին լինում է ամրագրված լսարանում՝ օգնելու ուսանողներին ու պատասխանելու նրանց հարցերին: Իսկ ուսումնական ծրագրերով նախատեսված և ուսումնական պլաններում ամրագրված կիսամյակային խորհրդատվությունները մատուցվում են քննաշրջանից առաջ՝ քննություններին նախապատրաստվելու համար: Առցանց այցից պարզ դարձավ, որ անհրաժեշտության դեպքում դասախոսներն օժանդակում են ուսանողներին նաև կուրսային կամ ավարտական աշխատանքներ պատրաստելու ընթացքում, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորումից առաջ:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ բացի պարտադիր խորհրդատվություններից ուսանողների մոտ լրացուցիչ հարցեր առաջանալու դեպքում, ըստ անհրաժեշտության, կազմակերպվում են նաև հավելյալ պարապմունքներ դասախոսների կողմից: Ինչպես պարզվեց փորձագիտական առցանց այցի ընթացքում, հեռավար ուսուցման պայմաններում զգալիորեն ավելացել է լրացուցիչ պարապմունքների թիվն ու դասախոսների անհատական աշխատանքն ուսանողների հետ՝ պայմանավորված դասաժամերի տևողության կրճատմամբ (նախկին 70 րոպեի փոխարեն 40 րոպե):

Քոլեջում մշակված «Հարցման թերթ 1 (սպառողների/շրջանավարտների)»-ում կան հարցեր, որոնք վերաբերում են խորհրդատվությունների տրամադրմանը: Սակայն իրականացված հարցումների վերլուծության և արդյունքների փաստաթղթային համապատասխան հիմքեր չեն տրամադրվել:

Թե՛ ռազմավարական գործող ծրագրով, թե՛ որակի քաղաքականությամբ քոլեջը նախատեսել է ներդնել ուսանողներին աջակցության այնպիսի համակարգ, որը միտված կլինի սովորողների կրթական, մասնագիտական և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը («Որակյալ ենթակառուցվածքներ» ռազմավարական նպատակ):

Վարչական անձնակազմին դիմելու առանձին հստակ կանոնակարգ կամ ընթացակարգ քոլեջում մշակված չէ։ Որևէ հարցով օգնություն կամ աջակցություն ստանալու նպատակով ուսանողները, որպես կանոն, դիմում են անմիջապես կուրսղեկին, նրա միջոցով էլ, ըստ խնդրի բնույթի, վարչական այլ ստորաբաժանումներ։ Կուրսի ղեկավարի պաշտոնեական հրահանգով սահմանված գործառույթներից է իրեն կցված կուրսի (խմբի) ուսանողների կապը քոլեջի ադմինիստրացիայի հետ ապահովելը։

Համաձայն քոլեջի բոլոր մասնագիտությունների 264 ուսանողների շրջանում 2017-2018 ուսումնական տարում անցկացված հարցման արդյունքների՝ հարցմանը մասնակից ուսանողների մեծ մասը՝ 80%-ից ավելին, որևէ հարցով դիմել է հաշվապահություն և ուսումնական մասի վարիչներին, 78%-ը՝ գրադարան, իսկ ամբիոնի վարիչներին և ուսումնական գծով փոխտնօրենին՝ համապատասխանաբար 58%-ը և 56%-ը։ Իրենց վերագրված լիազորությունների շրջանակում ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրում են քոլեջի բոլոր ստորաբաժանումները։

Քոլեջի ռազմավարական գործող ծրագրում «Որակյալ ենթակառուցվածքներ» և «Որակյալ ծառայություններ» նպատակների շրջանակում քոլեջը սահմանել է կարիերայի գործուն կենտրոնի ստեղծումը, ուսանողների տեղեկատվական, խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման օժանդակության ծառայությունների զարգացումը, աշխատանք փնտրելու նպատակով իրականացվելիք քայլերի հարցում ուսանողներին աջակցությունը, աշխատանքի տեղավորվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կազմել սովորեցնելը, ուսանողների և ապագա գործատուների հանդիպումների կազմակերպումը։

Ուսանողների կարիերային նպաստող գործողությունները քոլեջում ինստիտուցիոնալ հիմքի վրա են դրվել 2015թ.-ին, երբ ստեղծվել է կարիերայի ստորաբաժանումը։ Այն գործում է 2018թ.-ին խորհրդի կողմից հաստատված «Կարիերայի ստորաբաժանման կանոնակարգով», որի համաձայն՝ ստորաբաժանումը պատասխանատու է ուսանողների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի արդյունավետ ուղղորդման գործառույթների համար։ Կարիերայի ստորաբաժանման հիմնական նպատակն է կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, մասնագիտական ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև կարիերայի պլանավորման կարողությունների ձևավորման միջոցով նպաստել աշխատաշուկայում քոլեջի ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցել իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը։

Քոլեջի կազմակերպական կառուցվածքի (հաստատված 2016թ.-ին) ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ սահմանված է կարիերայի պատասխանատուի հաստիք։ Այդուհանդերձ, պատասխանատուի հաստիքը կազմակերպական կառուցվածքում՝ ենթակայության տեսակետից, փաստացի առկա չէ։ 2019-2020 ուսումնական տարում քոլեջի տնօրենի առաջարկով հաստիքացուցակում կատարվել է փոփոխություն և ավելացվել ևս մեկ հաստիք կարիերայի ստորաբաժանման համար։ Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողների թվի աճով պայմանավորված անհրաժեշտություն էր առաջացել մեծացնելու կարիերայի բաժնի աշխատանքի արդյունավետությունը, որպեսզի մի աշխատակից գործատուների հետ

աշխատի, իսկ մյուսն՝ ուսանողների հետ զբաղվի նրանց մասնագիտական կողմնորոշմամբ:

Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ կարիերայի բաժնի աշխատանքային տարեկան պլաններն, ուսումնական տարվան ընդառաջ, հաստատվում են քոլեջի տնօրենի կողմից: Կարիերայի ստորաբաժանման հաշվետվությունների ուսումնասիրություններից և փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ այն օժանդակում է ուսանողներին ռեզյումեներ կազմելու հարցում, տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություններ և կազմակերպում է հանդիպումներ գործատուների ու սոցիալական գործընկերների հետ՝ ապահովելով ուսանողների մասնակցությունը ցուցահանդեսներին ու տոնավաճառներին:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ կարիերայի բաժնում դեռևս լիարժեք ներդրված չէ քոլեջի շրջանավարտների բազան: Բազան դեռևս կազմված է վաթսուն շրջանավարտից: Քոլեջում առկա չեն վերլուծություններ, հստակ տվյալներ, թե քոլեջն ավարտող ուսանողներն ինչ գործունեություն են ծավալում, քանի տոկոսն է անցնում աշխատանքի ըստ մասնագիտության: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի շրջանավարտները հիմնականում քոլեջն ավարտելուց հետո կրթությունը շարունակում են բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի կարիերայի ստորաբաժանմանը կից գործում է ուսանողական հանձնաժողով, որն օժանդակում է բաժնի գործառույթների կատարմանն ու ապահովում քոլեջի մյուս ուսանողների հետ հետադարձ կապը:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ քոլեջը գիտահետազոտական գործունեությամբ չի զբաղվում: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողները կատարում են կուրսային և դիպլոմային աշխատանքներ: Նման աշխատանքներում, սակայն, հետազոտությունը՝ որպես հստակ պահանջ, առկա չէ: Առցանց այցից պարզ դարձավ նաև, որ հետազոտական աշխատանքներում ներգրավված են «Մեխատրոնիկա» ՄԿԾ-ի ուսանողները՝ պայմանավորված տվյալ մասնագիտության առանձնահատկությամբ:

Դիպլոմային աշխատանքներ կատարում են միայն բարձր առաջադիմությամբ ուսանողները:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ քոլեջը հնարավորություն է տալիս պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքը ներառել դիպլոմային աշխատանքներում, սակայն նման դեպքի օրինակ քոլեջում առկա չէ (բացառությամբ «Մեխատրոնիկա» մասնագիտական կրթական ծրագրի): Փորձագիտական խումբը պարզեց, որ պրակտիկաներում ևս բացակայում է հետազոտական բաղադրիչը:

Ըստ քոլեջի կանոնադրության 57-րդ կետի՝ ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր: Քոլեջի ուսանողական խորհուրդը համարվում է ստեղծված և օգտվում է կանոնադրությամբ նախատեսված իրավունքներից՝ խորհրդի նախագահին իր անվանական կազմը և գործունեության կարգը պաշտոնապես ներկայացնելու պահից:

Համաձայն իր կանոնադրության (ընդունված ուսանողական խորհրդի 2012թ.-ին կայացած համագումարում)՝ ուսանողական խորհուրդը քոլեջի ուսանողության ներկայացուցչական, ինքնավարության, ինքնակառավարման և նրա ընկերային շահերը ներկայացնող ընտրովի մարմինն է: Ուսանողական խորհուրդն արտահայտում և պաշտպանում է սովորողների շահերը, նպաստում նրանց կրթական, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

Ուսանողական խորհրդի բարձրագույն մարմինը համագումարն է: Համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում աշխատանքները ղեկավարում է ուսանողական խորհուրդը, որի անդամներն ընտրվում են համագումարի պատվիրակների կողմից բաց քվեարկությամբ: Ուսանողական խորհրդի անդամ կարող են ընտրվել այն ուսանողները, ում վերջին երկու կիսամյակի միջին գնահատականը 4 և ավելի (10 միավորանոց գնահատման համակարգով 6 և ավելի) միավոր է: Առաջին կուրսի ուսանողների դեպքում դիտարկվում են միայն մեկ կիսամյակի արդյունքները: Ուսանողական խորհուրդն իր կազմից երկու տարի ժամկետով ընտրում է նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար, հանձնաժողովների նախագահներ: Նիստեր է գումարում ամիսն առնվազն մեկ անգամ:

Ուսանողական խորհրդի նպատակն է ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին իրազեկումն ու ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությունը: Քոլեջի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են քոլեջի կանոնադրությամբ ու ներքին կարգապահության կանոններով: Ուսումնառության կարգապահական կանոնները կարգավորում են քոլեջի՝ որպես ուսումնառության կազմակերպողի, և քոլեջում մատուցվող կրթական ծառայությունների օգտվողների միջև իրավահարաբերությունները, սովորողների կարգապահությանը ներկայացվող պահանջները, սահմանում են սովորողների ուսումնառության գործընթացի ռեժիմը, սովորողների նկատմամբ խրախուսանքի միջոցների և կարգապահական պատասխանատվության կիրառման կարգը: Քոլեջ ընդունված ուսանողի (անչափահասների դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի) հետ ուսումնառության առաջին տարվա սեպտեմբերին կնքվում է պայմանագիր, որով սահմանվում են կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուսումնառության ողջ ընթացքի համար: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողական խորհրդի գործընթացներում կարող են ներգրավված լինել միայն բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները: Առցանց այցից պարզ դարձավ, որ ուսանողական խորհրդի գործունեության մասին հիմնականում տեղյակ են և անդամակցում են կուրսերի ավագները: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ փաստացի ուսանողական խորհրդի կողմից բարձրաձայնված խնդիրների օրինակներ առկա չեն:

Ըստ ԵԻՊՔ-ի «Որակի քաղաքականության»՝ կրթության բնագավառում քոլեջի նպատակներից է վերհանել ուսանողների կրթական կարիքները՝ կրթական որակյալ ծառայություններ մատուցելու նպատակով: Սույն փաստաթղթով ամրագրված է նաև, որ որակի ապահովման քաղաքականությունը ներկայացվում է ուսանողների և աշխատակազմի հետ հանդիպումների ժամանակ: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի որակի պատասխանատուն կատարում է հարցումներ ուսանողների շրջանում: Առցանց այցից պարզ դարձավ, որ որակի պատասխանատուն կազմակերպում

է նաև հանդիպումներ, ֆոկուս խմբեր, համագործակցում է ուսանողական խորհրդի հետ՝ ուսանողների խնդիրները պարզելու նպատակով, սակայն տվյալ գործընթացների գնահատում չի իրականացվում:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ կրթական ծառայությունների գնահատման նպատակով կատարվում են դասալսումներ: Առցանց այցից պարզ դարձավ, որ որակի պատասխանատուն կազմակերպում է հանդիպումներ կուրսերի ավագների հետ: Նման գործունեություն ծավալում են նաև կարիերայի և պրակտիկայի բաժինները: Այդուհանդերձ, փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ վերոնշյալ ոչ ֆորմալ հանդիպումների արդյունքները չեն արձանագրվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում ուսանողների ընդունելության համար իրականացվող քարոզչության գործընթացները: Այդուհանդերձ, մտահոգիչ է այն, որ քոլեջում այս գործընթացը, համավարակով պայմանավորված, ուսումնական վերջին տարվա ընթացքում չի կազմակերպվել: Սա կարող է խոչընդոտել ապագա ուսանողների ներհոսքը քոլեջ: Դրական է, որ քոլեջի կայքում առկա է դիմորդների բաժին: Մտահոգիչ է, որ քոլեջում սովորողների աճի ապահովումն արդյունավետ կազմակերպելու համար մշակված չէ քաղաքականություն: Ինչը կարող էր նպաստել հետագա տարիներին քոլեջում ուսանողների ավելացմանը: Մտահոգիչ է, որ քոլեջում չի գործում ընդունելության վերոնշյալ գործընթացների արդյունավետության գնահատում: Չնայած քոլեջի դասախոսական անձնակազմի կողմից իրականացվող քարոզչական գործընթացներին՝ փաստացի քոլեջի ուսանողների մեծամասնությունը քոլեջի մասին տեղեկացել է քոլեջում սովորող կամ քոլեջն ավարտած իրենց ծանոթների խորհրդատվությամբ:

Մտահոգիչ է, որ քոլեջում սովորող ուսանողների՝ արձանագրված տեղափոխությունների, ինչպես նաև ցածր առաջադիմության պատճառով դուրս մնացած ուսանողների ունեցած դժվարությունների և պատճառների վերաբերյալ քոլեջը համակարգված վերլուծություն չի իրականացրել: Ինչը կարող է խոչընդոտել ուսանողների արտահոսքի հետագա կանխումը: Ինչպես նաև սա չի նպաստում ուսանողների շրջանում ուսումնառության ժամանակ առաջացած բարդությունների բացահայտմանը և համապատասխան փոփոխությունների իրականացմանը:

Դրական է, որ քոլեջում գործում են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ՝ որոշակի հարցումներ ուսանողների շրջանում, կուրսղեկների հետ ոչ ֆորմալ զրույցներ: Դրական է, որ ուսանողների շրջանում առաջացած մոդուլային ծրագրի փոփոխության առաջարկը լսելի է դարձել քոլեջի ղեկավարության կողմից: Դրական է այն, որ քոլեջի ուսանողներին ՊԴ կազմը հասանելի է և անհրաժեշտության դեպքում արձագանքում է ուսանողներին ու խորհրդատվություն տրամադրում: Քոլեջում ուսումնաօժանդակ անձնակազմին դիմելու առանձին կանոնակարգ առկա չէ, այդուհանդերձ, ուսանողներին հասանելի են քոլեջի ստորաբաժանումները, և այս կապն ապահովվում է կուրսղեկների միջոցով:

Դրական է, որ քոլեջում գործում է կարիերայի պատասխանատու, որն իրականացնում է քոլեջում ուսանողների կողմնորոշման աշխատանքներ, ուսանողներին ծանոթացնում է ինքնակենսագրական գրելու հմտություններին, ուսանողներին ներգրավում տարբեր միջոցառումներում: Մտահոգիչ է, որ լիարժեք առկա չէ քոլեջի

շրջանավարտների բազա և առկա չեն վերլուծություններ այն մասին, թե նրանք մասնագիտական ինչ գործունեություն են ծավալում: Սա խոչընդոտում է նաև քոլեջի և շրջանավարտների միջև կապի ապահովմանը, ինչպես նաև նրանց միջոցով մասնագիտական գործունեության ոլորտում նրանց մոտ առաջացած խնդիրների վերհանմանն ու ՄԿԾ-ներում համապատասխան լուծումների տրմանը: Այս գործընթացի կանոնակարգումը կնպաստի նաև քոլեջ-գործատու կապի ամրապնդմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում առկա են որոշակի օրինակներ, երբ ուսանողներն ուսումնառության ընթացքում կատարում են հետազոտական աշխատանքներ, որը նպաստում է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան նկարագրիչների ապահովմանը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ այս լավ փորձը բոլոր ՄԿԾ-ներում ամրագրված չէ, ինչը կխոչընդոտի ուսանողների մոտ լիարժեք վերլուծական կարողությունների և ստեղծագործ մտքի զարգացմանը, ինչը նաև ամրագրված է ՈԱՇ-ով:

Դրական է, որ քոլեջում առկա է ուսանողների պաշտպանությամբ զբաղվող պատասխանատու մարմին՝ ուսանողական խորհուրդ, այդուհանդերձ, մտահոգիչ է, որ միայն բարձր առաջադիմությամբ ուսանողները կարող են ներգրավված լինել այդ խորհրդում: Մտահոգիչ է նաև, որ քոլեջի ուսանողներն ակտիվություն չեն ցուցաբերում ուսանողական խորհրդի աշխատանքներին: Ուսանողական խորհրդի աշխատանքներում առավել մեծ թվով ուսանողների ներգրավվածությունը կնպաստի կառույցի արդյունավետ աշխատանքին:

Թեև քոլեջում իրականացվում են հարցումներ, որոնք նպատակ ունեն վերհանելու ուսանողների կարիքներն ու տարբեր գործընթացներից բավարարվածությունը, սակայն ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող ծառայությունների գնահատման ու որակի ապահովման մեխանիզմները կատարելագործման, հստակ պլանավորման կարիք ունեն, որը կնպաստի տարբեր գործընթացների խնդիրների վերհանմանը և որակի բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման և ընտրության մեխանիզմներ, առկա են մի շարք մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս վերհանել ուսանողների կրթական կարիքները, առկա են ուսանողների կրթական կարիքների արձագանքման օրինակներ, գործում է խորհրդատվական ծառայությունների մատուցման մեխանիզմը, ուսանողները հնարավորություն ունեն իրենց խնդիրները բարձրաձայնել քոլեջի բոլոր ստորաբաժանումներում, առկա են հետազոտական գործունեության որոշ օրինակներ, քոլեջում գործում է ուսանողական խորհուրդ, հիմքեր են ստեղծվել կարիերային նպաստող ծառայությունների մատուցման համար, իրականացվում են հարցումներ քոլեջի ուսանողների շրջանում, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը բավարարում է Չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր ըստ չափանիշի: Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականությունը հիմնված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի և քոլեջի կողմից սահմանված «Ներքին կարգապահական կանոններ» փաստաթղթի վրա: Վերջինս հաստատվել է 2015 թվականի հոկտեմբերի 8-ին ԵԻՊՔ-ի խորհրդի նախագահի կողմից և հիմնված է քոլեջում նախկինում գործող աշխատանքի ընդունման և հեռացման մասին՝ «ISO 9001:2008 6QP21» փաստաթղթի վրա: Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում առկա է ՊԴ և ՈւՕ կազմի ընտրության որոշակի մրցութային ընթացակարգ: Թափուր հաստիքի առկայության դեպքում քոլեջն այդ մասին հայտարարություն է տարածում սոցիալական ցանցերի և քոլեջի կայքի միջոցով, այնուհետև դիմողների շրջանում անցկացվում է հարցազրույց՝ քոլեջի կողմից ձևավորված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովին անդամակցում են համապատասխան ամբիոնի վարիչները և քոլեջի ՈԱ աշխատակիցը: Այնուհետև կատարվում է փաստաթղթերի ուսումնասիրություն, և դրանց՝ մասնագիտական պահանջներին համապատասխանության դեպքում մրցույթի մասնակիցներին տրվում են մասնագիտական առաջադրանքներ: Վերջիններիս ճիշտ պատասխանելու դեպքում մասնակիցն անցնում է հարցազրույց տնօրենի հետ, որից հետո ընտրված մասնակիցն անցնում է փորձաշրջան, որը հաջողությամբ հաղթահարելուց հետո նրա հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր: Աշխատանքային պայմանագրի ձևաչափը կցված է քոլեջի տրամադրած փաստաթղթերում:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի տրամադրած փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի դասախոսների որակավորումներն ու մասնագիտությունները համապատասխանում են նրանց կողմից դասավանդած առարկաներին:

Քոլեջում ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները հիմնված են ՊԿՉ-ների վրա և ընդհանուր առմամբ բխում են քոլեջի ՌԾ-ում նշված առաքելությունից և տեսլականից: Ինչպես նաև քոլեջում առկա են պաշտոնեական հրահանգներ, որոնցում ներկայացված են քոլեջի բոլոր աշխատակիցներին, այդ թվում՝ դասախոսներին ներկայացվող ընդհանրական պահանջներ:

Մասնավորապես, դասախոսի պաշտոնեական հրահանգը ներկայացնում է քոլեջում դասավանդող դասախոսի համար հետևյալ հատկանիշները՝ տվյալ առարկայի դասավանդման մանկավարժական փորձառություն, բոլոր տեսակի ուսումնական պարապմունքների և ուսումնական աշխատանքի պլանավորման ու կազմակերպման կարգի, ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և գիտամեթոդական աշխատանքների կազմակերպման սկզբունքների, ուսանողների ուսուցման և դաստիարակման ժամանակակից ձևերի ու մեթոդների տիրապետում, դասավանդվող առարկաների բնագավառում գիտելիքների ժամանակակից վիճակի, մանկավարժության, հոգեբանության ու ուսուցանվողների դաստիարակման հիմունքներ իմացություն և այլն:

Պաշտոնական հրահանգը ներառում է դասախոսի գործառույթների նկարագրությունը (վերջինս ընդհանրական է և կախված չէ մասնագիտության ուղղվածությունից), դասախոսի իրավունքներն ու պարտականությունները, դասախոսի պատասխանատվությունը, դասախոսի փոխհարաբերությունները: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում դասախոսի համար պահանջներում հստակ չեն առանձնացվում դասախոսի գիտական աստիճանը կամ կրթության հստակ մակարդակ, այդուհանդերձ, առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում շեշտադրվում է և պարտադիր է տվյալ դասախոսի մասնագիտական ոլորտի համապատասխան կրթությունը: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի ղեկավար կազմը ոլորտի գործատու մասնագետներ ներգրավելու ցանկություն ունի ևս: Սակայն փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ այս առումով առկա են խնդիրներ.գործատուների շրջանում դժվար է հետաքրքրություն առաջացնել քոլեջի գործընթացներում և որպես դասախոս նրանց ներգրավել դասապրոցեսում:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար փաստացի գործող միակ մեխանիզմը դասալսումներն են:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ դասալսումներն իրականացվում են ըստ նախապես կազմված կիսամյակային ժամանակացույցի: Փորձագիտական խմբի առցանց այցերի արդյունքում պարզ դարձավ, որ դասալսումներն անցկացվում են հիմնականում նոր ընդունված դասախոսների շրջանում և հիմնականում ամբիոնների վարիչների կողմից:

Դասալսումների արդյունքում դասալսումների մատյաններում իրականացվում են գրավոր վերլուծություններ, որոնցում նշվում են նաև դասապրոցեսի դրական կողմերը, թերությունները, ինչպես նաև նշվում են դիտողություններ, հետևություններ և առաջարկներ: Քոլեջի տրամադրած հետագա փաստաթղթերը (դասալսումների մատյան) հիմք են ծառայում վերը նշված պնդումների համար:

Դասալսումների հիմնական նպատակը դասի կազմակերպման մեթոդին ծանոթանալն է:

Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքում դասախոսներին անհրաժեշտության դեպքում (օրինակ, թերացումներ նկատելիս) տրամադրվում է բանավոր խորհրդատվություն ամբիոնի վարիչների կողմից:

Դասախոսական կազմի գնահատման ևս մեկ մեխանիզմ են ՈԱ պատասխանատուի կողմից ուսանողների շրջանում անցկացվող հարցումները («Իմ սիրելի դասախոսը»), որոնք, սակայն, բովանդակային առումով համակարգված չեն և պարբերական բնույթ չեն կրում: Փաստացի վերոնշյալ հարցումը իրենից ներկայացնում է դասախոսների վերաբերյալ ուսանողների միայն գնահատականներ (թվերի տեսքով): Գնահատականների սանդղակը, նաև այն, թե ուսանողները դասախոսների որ հատկանիշներն են գնահատում, հստակ չէ: Ըստ հաստատության ԻՎ-ի՝ ցածր գնահատական ստացած դասախոսները անցնում էին լրացուցիչ վերապատրաստում (ամբիոնի վարիչների կողմից իրականացվող):

Քոլեջի ներկայացրած փաստաթղթերում առկա է միայն մեկ անգամ ուսանողների կողմից դասախոսներին գնահատման արդյունքների վերլուծություն, որն իրականացվել է 2017-2018թթ.:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում դասալսումների արդյունքում բացահայտված կարիքների դեպքում քոլեջում ամբիոնի վարիչների կողմից, բացի բանավոր և գրավոր խորհրդատվությունը, երբեմն կազմակերպվում են մեթոդական վերապատրաստումներ: Ըստ ԻՎ-ի՝ վերապատրաստումներ անցկացվում են նաև այն դասախոսների շրջանում, որոնք ուսանողների գնահատմամբ արժանացել են նվազագույն միավորների: Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ նման գնահատումները նույնպես պարբերաբար բնույթ չեն կրում, ինչպես նաև հարցումների վերլուծությունների հիման վրա կարիքների վերհանման օրինակներ առկա չեն:

Քոլեջի կողմից տրամադրված փաստաթղթերից և փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ վերապատրաստումներ հիմնականում անցկացվում են ըստ հնարավորության, այլ ոչ ըստ պահանջի: Հիմնականում դասախոսները մասնակցել են Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԿ) կողմից կազմակերպված վերապատրաստումներին: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում, վերապատրաստումներին մասնակցելու առաջնահերթությունը տրվում է այն դասախոսներին, ովքեր երկար ժամանակ (3-5 տարի) չեն վերապատրաստվել:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի դասախոսները կարող են ոչ պարբերաբար նախաձեռնել և մասնակցել քոլեջից դուրս կազմակերպվող վերապատրաստումների: Դասախոսները գտնում են վերապատրաստումներ, դրանց մասնակցություն ունենալու մասին հայտնում քոլեջի տնօրինությանը և ստանում համապատասխան աջակցություն: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, սակայն, որ դասախոսների կարիքների վերհանման հստակ մեխանիզմներ քոլեջում չկան.ըստ դասախոսների պահանջների վերապատրաստումներ հիմնականում անցկացվում են դասախոսների նախաձեռնությամբ:

Վերջին շրջանում քոլեջում կազմակերպվել է մեկ վերապատրաստում առցանց կրթության անցնելու համար.վերապատրաստվել է քոլեջի շուրջ 60 (75,9%) դասախոս: Ըստ ներկայացրած փաստաթղթերի՝ վերջին չորս տարում քոլեջի դասախոսները մասնակցել են քոլեջում և/կամ դրանից դուրս անցկացված թվով 12 վերապատրաստումների:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում դասավանդող դասախոսների թիվը 79-ն է, նրանցից 73–ը (92,4%)՝ հիմնական աշխատողներ են: Սակայն վերջին տարիների ընթացքում քոլեջից դուրս եկած աշխատողների թիվը գերազանցում է նոր ընդունված աշխատողների թվին: Մասնավորապես, վերջին չորս տարվա ընթացքում քոլեջ ընդունվել է 117 և ազատվել 123 դասախոս, որոնցից 97-ը՝ պայմանագիրը լրանալու պատճառով (մի մասի հետ պայմանագրերը վերակնքվել են), իսկ 26-ն՝ այլ պատճառներով:

Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում կադրերի ռեզերվ, որպես այդպիսին, առկա չէ: Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ դասախոսի՝ աշխատանքից ազատվելու դեպքում մինչև նոր

դասախոսի աշխատանքի ընդունելը տվյալ դասախոսի դասաժամերը վերաբաշխվում են այլ դասախոսներին, ինչի հետևանքով փոխվում է քոլեջի դասացուցակը։

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ վերջին տասը տարում ինֆորմատիկայի պետական քոլեջում այն դասախոսների թիվը, ովքեր ունեն գիտական աստիճան, նվազել է մոտ երեք անգամ: Որպես քոլեջում գիտական աստիճան ունեցող դասախոսների թվի նվազման պատճառ՝ քոլեջի ԻՎ-ում նշվում է դասախոսների տարիքը և աշխատավարձի չափը։ Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջը չունի անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ ոլորտի երիտասարդ մասնագետներին ներգրավելու համար։Քոլեջում դասախոսական կազմի միջին տարիքը 47 է։

Ըստ ԻՎ-ի՝ այս ուղղությամբ քոլեջը փորձում է որոշակի քայլեր անել, մասնավորապես, գործատու կազմակերպություններից դասախոսների ներգրավելու համար։ Ինչպես նաև քոլեջը փորձում է շրջանավարտներին աշխատանքի ընդունելու միջոցով նպաստել քոլեջում աշխատող կադրերի երիտասարդացմանը։ Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում դասավանդում են նաև գործատու դասախոսներ։

Քոլեջում մասնագիտական առարկա դասավանդող մեկ դասախոսը միջինում դասավանդում է երկու առարկա, որոնք բովանդակային առումով իրար մոտ են լինում։ Քոլեջում առկա են նաև նույն առարկան դասավանդող մեկից ավելի դասախոսներ։

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի սահմանած «Ներքին կարգապահական կանոններ» փաստաթղթում քոլեջի աշխատակիցներին աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու դեպքում՝ որպես խրախուսելու տեսակներ, նշվում են շնորհակալության հայտարարումը, միանվագ դրամական պարգևատրումը, հուշանվերով պարգևատրումը, լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրումը, կարգապահական տույժի հանումը։ Ինչպես նաև, որպես խրախուսման հնարավոր տարբերակ՝ նշվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով աշխատողներին պետական պարգևներին ներկայացնելու հնարավորությունը։ Նույն փաստաթղթում նշված է նաև, որ քոլեջի աշխատողների խրախուսանքները տնօրենի հրամանով նշանակվում են նրանց անմիջական ղեկավարի ներկայացմամբ։

Այնուամենայնիվ, քոլեջի ԻՎ-ում, որպես քոլեջի թույլ կողմ՝ նշված է հավելավճարների և ֆինանսական խրախուսման մեխանիզմների բացակայությունը:

Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ երբեմն նոր առարկա ներդնելիս դասախոսների դասաժամերի ավելացումը քոլեջի կողմից դիտարկվում է՝ որպես խրախուսում։

Քոլեջի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի օրինակելի հաստիքացուցակը սահմանվում է լիազոր մարմնի կողմից։ Ըստ քոլեջի հաստիքացուցակի՝ քոլեջն ունի վարչական 31 աշխատակցի հաստիք (թափուր 3)։ Քոլեջում առկա պաշտոնեական հրահանգներում նշված են նաև վարչական անձնակազմին և ՈւՕ կազմին ներկայացվող պահանջները։Քոլեջի ՈԱ պատասխանատուն հարցումներ է կազմակերպել ուսանողների շրջանում (2017-2018թթ.), որոնց միջոցով գնահատվել է հիմնական ստորաբաժանումների ծառայություններից ուսանողների բավարարվածության մակարդակը։ Սակայն հարցումների արդյունքում

բացահայտված կարիքների վերլուծություն և դրան համապատասխան հետագա քայլեր քոլեջում դեռևս չեն իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ջանքեր է գործադրում որակյալ մասնագետների հավաքագրման համար: Ողջունելի է այն, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը ՊԴ և ՈւՕ կազմի ընտրության համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով առաջնորդվելու հետ մեկտեղ մշակել և կիրառում է «Ներքին կարգապահական կանոններ» փաստաթուղթը, որը հիմքեր է ստեղծում դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրման մեխանիզմի լավացման համար: Դրական է նաև, որ քոլեջում ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները հիմնված են ՊԿՉ-ների վրա և ընդհանուր առմամբ բխում են քոլեջի առաքելությունից և տեսլականից: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ տարբեր հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջը դժվարանում է SS ոլորտի լավագույն մասնագետներին դասավանդման գործընթացում ներառել, որը նաև պայմանավորված է ցածր աշխատավարձով: Այս առումով փորձագիտական խումբը կարևորում է այլընտրանքային լրացուցիչ մեխանիզմների ներդրումը, որը հնարավորություն կտա պրակտիկ ոլորտի մասնագետներին ներգրավել դասավանդման գործընթացում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասախոսական կազմի գնահատման համար գործող դասալսումների առկայությունը, որը հիմնականում իրականացվում է սկսնակ դասախոսների շրջանում: Դրական է նաև դասալսումների վերաբերյալ դասախոսներին տրվող բանավոր խորհրդատվությունների փաստը, ինչը կարող է նպաստել քոլեջի դասախոսների շրջանում փորձի փոխանակմանը: Այս մշակույթի տարածումը և բոլոր դասախոսների շրջանում դասալսումների իրականացումը, առկա մեխանիզմի կատարելագործումը, ինչպես նաև դասախոսների գնահատման համար իրականացվող հարցումների պարբերականության շատացումը թույլ կտա բացահայտել դասավանդման գործընթացում առկա խնդիրները և ըստ բացահայտված կարքիների ու խնդիրների պլանավորել դասախոսների կատարելագործման աշխատանքներ:

Թեև քոլեջում իրականացվում են որոշակի վերապատրաստումներ, սակայն դրանք պարբերաբար չեն կատարվում և համակարգված չեն, մասնավորապես, դրանք չեն իրականացվում բացահայտված կարիքների հիման վրա: Բացակայում է գործատուների հետ համագործակցությունը դասախոսների մասնագիտական վերապատրաստումների իրականացման առումով: Քոլեջում մասնագիտական վերապատրաստումների հստակ պլանավորումը և գործատուների հետ այս առումով համագործակցության ստեղծումը կնպաստեն դասախոսների մասնագիտական որակների պարբերաբար լավացմանը, իսկ գործատուների հետ համագործակցությունը կնպաստի աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում հիմնական դասախոսների առկայությունը: Միևնույն ժամանակ, մտահոգիչ է նաև այն փաստը, որ թափուր հաստիք առաջանալու դեպքում, մինչև այդ հաստիքի համալրելը նոր դասախոսով, դասաժամերը վերաբաշխվում են այլ դասախոսների միջև՝ փոխելով քոլեջի դասացուցակը: Այս գործընթացը քոլեջում կադրերի ռեզերվի բացակայության հետևանք է:

Փորձագիտական խումբը գտնում է, որ այս գործընթացն իր մեջ պարունակում է չարդարացված ռիսկեր (օրինակ, դասացուցակի անհարկի փոփոխություն, ուսանողներին նոր դասացուցակին ադապտացիայի համար պահանջվող որոշակի ժամանակ) և կարող է վնասել ուսումնական գործընթացն ըստ պահանջի իրագործելուն:

Ողջունելի է այն փաստը, որ քոլեջում դասավանդում են նաև գործատու դասախոսներ, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել գործատուի փորձի և պահանջների անմիջական փոխանցումն ուսանողներին, սակայն հարկ է նշել, որ գործատու դասախոսների թիվը մեծ չէ: Քոլեջում գործատու դասախոսների թվի մեծացումը կնպաստի աշխատաշուկայի կարիքների ներառմանը ՄԿԾ-ներում և ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների զարգացմանը, ինչպես նաև քոլեջի դասախոսների հետ փորձի փոխանակմանը: Ողջունելի է այն փաստը, որ քոլեջը փորձում է իր շրջանավարտներին աշխատանքի ընդունել քոլեջում՝ դրանով իսկ նպաստելով կադրերի երիտասարդացման մակարդակի որոշակի բարձրացմանը:

Դրական է, որ քոլեջում աշխատակիցների խրախուսման սահմանված կարգեր առկա են, սակայն մտահոգիչ է այն, որ ֆինանսական միջոցների սղության պատճառով լիարժեք չեն գործում: Քոլեջում աշխատակիցների խրախուսման մեխանիզմների լիարժեք կիրառումը կնպաստի դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը և մասնագիտական զարգացմանը:

Դրական է, որ քոլեջն ունի պատասխանատուների և աշխատակիցների կազմ, որոնք ընդհանուր առմամբ բավարար են քոլեջի ռազմավարական նպատակները և հիմնական պահանջները բավարարելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա է կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան դասախոսական և ՈւՕ կազմ, ոլորտում տարիների աշխատանքային փորձ և գիտական աստիճան ունեցող, ինչպես նաև գործատու դասախոսները ներգրավված են ուսումնական գործընթացում, քոլեջը աշխատանքներ է իրականացնում շրջանավարտներին դասավանդման մեջ ներգրավելու համար, առկա են որոշակի մեխանիզմներ խրախուսման համար, քոլեջը աշխատանքներ է տանում դասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը բավարարում է Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր ըստ չափանիշի: Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ռազմավարական ծրագրում (2018-2022թթ.) որպես նպատակ սահմանված է «Արդիականությունն ու նորարարությունը», իսկ նպատակին հասնելու համար քոլեջը նախատեսում է 1) խթանել հետազոտական և նորարարական մոտեցումները քոլեջի

դասախոսների և ուսանողների շրջանում, 2) կուրսային և դիպլոմային նախագծերի հիմքում դնել ուսանողների ստեղծագործական և նորարարական միտքը խրախուսող պահանջներ և մեխանիզմներ։

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի կողմից չի մշակվել երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք կարտահայտեն հետազոտության ոլորտում քոլեջի կողմից սահմանված նպատակը։ Ինքնավերլուծությունում նշվում է նաև, որ քոլեջը հետագայում նախատեսում է հետազոտական բաղադրիչ ներառել այն կրթական ծրագրերում, որոնք ըստ քոլեջի պետք է ունենան հետազոտական բաղադրիչ։

Փորձագիտական խմբի առցանց այցից և քոլեջի կողմից տրամադրած որոշ փաստաթղթերի (դիպլոմային աշխատանքների օրինակներ, ընթացիկ հանձնարարականներ, քննատոմսեր, դիպլոմային աշխատանքների թեմաներ, դիպլոմային աշխատանքներին ներկայացվող պահանջներ և այլն) ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջում տրվող առաջադրանքներում հետազոտական բաղադրիչը որպես պահանջ ներկայացված չէ։ Միակ բացառությունը «Մեխատրոնիկա» մասնագիտության դիպլոմային աշխատանքները և պետական ավարտական քննատոմսերն էին, որոնցում, ելնելով մասնագիտության առանձնահատկությունից, առկա են որոշակի հետազոտական և վերլուծական առաջադրանքներ, ինչպես նաև պահպանված է նորարարական բաղադրիչը։

Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ նաև, որ քոլեջի մյուս մասնագիտությունների ավարտական աշխատանքներում երբեմն տեղ են գտնում նորարարությունն ու արդիականությունը, սակայն դրանց իրագործման համար հստակ պահանջներ քոլեջը չի սահմանում, բայց ուսանողի կողմից ավարտական աշխատանքի նման կերպ իրագործումը խրախուսվում է քոլեջի կողմից բարձր գնահատականի տեսքով։ Օրինակ, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ավարտական աշխատանքները կամ քննական առաջադրանքները կատարելիս երբեմն ուսանողները տալիս են ոչ ստանդարտ՝ նորարարական, լուծումներ, մասնավորապես, լինում են առանձին դեպքեր, երբ ուսանողը նույն խնդրի լուծման համար նոր ալգորիթմ է մշակում։ Այնուամենայնիվ, վերը նշված դեպքերը բացառություններ են և համակարգված բնույթ չեն կրում։

Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում դասախոսական կազմը հետազոտական աշխատանքներում ներգրավված չէ։ Առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ առկա չեն դասախոսների կողմից կատարված վերլուծական ու հետազոտական աշխատանքներ՝ կապված կրթական ծրագրերի և մոդուլների լավացման հետ։ Նմանատիպ աշխատանքների խրախուսման մեխանիզմներ առկա չէին։

Ըստ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինքնավերլուծության՝ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի միջև կապը պահպանելու միակ միջոցը քոլեջում դիպլոմային աշխատանքներն են։ Ուսումնասիրած փաստաթղթերից և փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ ոչ բոլոր մասնագիտություններում է առկա հետազոտական բաղադրիչ, իսկ առկայությունը

կախված է մասնագիտությունների առանձնահատկություններից և որպես առաջադրանքների կատարման պահանջ՝ ամրագրված չէ:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ ուսանողների հետազոտական աշխատանքների արդիականությունն ապահովելու նպատակով մասնագիտական ամբիոններն ամեն տարի վերանայում են դիպլոմային աշխատանքների թեմաները: Սակայն փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ վերանայման արդյունքում դրանք ոչ միշտ են ենթարկվում փոփոխության:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ նաև, որ թեպետ աշխատաշուկայի վերլուծություն քոլեջում չի իրականացվում, բայց դիպլոմային աշխատանքների թեմաները գործատուների հետ համատեղ են ընտրվում հիմնականում: Սակայն դիպլոմային աշխատանքների թեմաների մշտապես թարմացում փաստացի ոչ միշտ է իրականցվում: Գործատու կազմակերպությունների աշխատակիցները հաճախ ղեկավարում են քոլեջի ուսանողների դիպլոմային աշխատանքները: Այդուհանդերձ, փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ դիպլոմանյին աշխատանքները հիմնականում չեն պարունակում հետազոտական բաղադրիչ: Փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ նաև, որ դիպլոմային աշխատանքներ կատարում են միայն բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները, իսկ մյուսները հանձնում են ավարտական քննություն:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ նաև, որ դիպլոմային աշխատանքների թեմաները հաստատելուց հետո հիմնականում համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերվում քոլեջի գործընկեր այն կազմակերպությունների հետ, որոնց հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է տվյալ թեման: Պայմանավորվածության համաձայն ուսանողները հիմնականում իրենց դիպլոմային աշխատանքի թեմայի շուրջ նախադիպլոմային պրակտիկա են անցնում գործընկեր կազմակերպությունում, իսկ հետագայում դիպլոմային աշխատանքի ղեկավարն ընտրվում է գործընկեր կազմակերպությունից:

Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, սակայն, որ պրակտիկաների ընթացքում նույնպես հետազոտական բնույթի աշխատանքներ չեն իրականացվում:

Քոլեջի ԻՎ-ում նշվում է, որ քոլեջն առաջիկայում նախատեսում է դիպլոմային աշխատանքներն ուղարկել գրախոսելու նաև գործատուների մոտ, ինչն, ըստ քոլեջի, կապահովի դիպլոմային աշխատանքներում արդիականության բաղադրիչը:

Պարզ դարձավ նաև, որ երբեմն ամբիոններում կազմվում են մեթոդական ձեռնարկներ դասախոսների կողմից, սակայն դրանց կապը ՌԾ-ի նպատակների հետ հիմնականում առկա չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերն ուղղված հետազոտական կարողությունների և ստեղծագործ մտքի զարգացմանն ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների շրջանում: Դրական է այն, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ռազմավարական ծրագրում (2018-2022թթ.) նշված նպատակներից է արդիականությունն ու նորարարությունը: Միևնույն ժամանակ, բացակայում են այս ուղղությամբ հստակ պլանավորումները քոլեջի բոլոր մակարդակներում (ամբիոններ, ստորաբաժանումներ): Հստակ պլանավորման

բացակայությունը խոչընդոտում է սահմանված ռազմավարական նպատակի, ինչպես նաև այս ոլորտում համակարգված աշխատանքների իրականացմանն ու հետազոտական աշխատանքներում դասախոսների և ուսանողների ներգրավվածությանը:

Դրական համարելով քոլեջում առկա լավ փորձը, կապված ուսանողների կողմից կատարվող դիպլոմային որոշ աշխատանքներում վերլուծական և հետազոտական բաղադրիչի առկայության հետ, որը որոշ դեպքերում կապակցվում է պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքների հետ, այնուամենայնիվ, այս մշակույթը դեռևս համակարգված և տարածված չէ ամբողջ քոլեջի մակարդակում, նամանավանդ, որ դիպլոմային աշխատանքներ կատարում են միայն բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները: Հարկ է նաև նշել, որ ուսանողներին տրվող ընթացիկ հանձնարարականներում, քննական հարցատոմսերում նույնպես բացակայում է հետազոտական ու վերլուծական հմտություններ ձևավորող բաղադրիչը, ինչը կարող է խոչընդոտել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակում ներկայացված հմտությունների լիարժեք ձեռքբերմանը, որն է՝ վերլուծական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են առաջացած խնդիրների վերաբերյալ դատողություններ կատարելու և լուծումներ առաջադրելու համար՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում: Այս հատկությունների առկայությունն ուսումնական գործընթացում և ուսանողներին տրվող ընթացիկ հանձնարարականներում կապահովի ուսանողների անհրաժեշտ հմտությունների ու կարողությունների ձևավորումը: Կարևոր է նաև հաշվի առնել գործատուների հետ համատեղ դիպլոմային աշխատանքների և ընթացիկ հանձնարարականների իրականացումը, որը կապահովի աշխատաշուկայի պահանջների արձագանքմանը, ինչպես նաև հնարավորություններ կստեղծի դասախոսներին գործատուների հետ միասին ներգրավելու վերլուծական աշխատանքներում: Նմանատիպ դեպքերի սակավությունը քոլեջում չի նպաստում բոլոր ուսանողների մոտ վերլուծական, քննադատական մտքի ձևավորմանը: Քանի որ հետազոտական աշխատանքներին ներգրավվածությունը պարբերական բնույթ չի կրում:

Քոլեջում առկա գրականությունից օգտվելն առանձնապես չի խրախուսվում, փոխարենը հիմնվում են համացանցում առկա տեղեկատվության վրա (գրականություն, հոդվածներ, տեսահոլովակներ): Սակայն մտահոգիչ է, որ քոլեջում օտար լեզվի իմացության մակարդակը թույլ չի տալիս օգտվել տեղեկատվության ամբողջ ծավալից, ինչը խոչընդոտում է վերլուծական կարողությունների ձևավորմանը:

Չնայած այն հանգամանքին, որ քոլեջում ժամանակ առ ժամանակ տպագրվում են ձեռնարկներ, սակայն այս մշակույթը տարածված չէ քոլեջի բոլոր դասախոսների շրջանում, ինչպես նաև դասախոսական կազմի առաջ դրված չէ իրենց կողմից կատարված աշխատանքի արդյունքների պարբերաբար վերլուծության և դրա հիման վրա ուսումնառության բարելավման, արտասահմանյան փորձի ուսումնասիրությունների ու դրանք ծրագրերում տեղայնացնելու պահանջ: Այս և նմանատիպ աշխատանքների իրականացումը կնպաստի դասախոսների մասնագիտական կատարելագործմանը և կմեծացնի կրթական ծրագրերի գրավչությունը:

Ողջունելի է այն փաստը, որ քոլեջում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի միջև կապը պահպանելու միջոց են դիպլոմային աշխատանքները և դրանց թեմաների արդիականացումը: Սակայն մտահոգիչ է, որ այն

հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացն իրար կապող միակ միջոցն է, և հետազոտական բաղադրիչն առկա չէ քոլեջի բոլոր մասնագիտությունների ավարտական/քննական աշխատանքների թեմաներում/հարցերում:

Եզրակացություն: Հաշվի առնելով այն, որ քոլեջում առկա չէ հստակ պլանավորում՝ միտված ՌԾ-ով սահմանված նպատակներին հասնելուն, սակավ են դեպքերը, երբ դասախոսական կազմի ներկայացուցիչները կատարել են հետազոտական աշխատանքներ, քոլեջի կողմից նմանատիպ պահանջներ առկա չեն, սակավաթիվ են վերլուծական, հետազոտական և ստեղծագործ մտքի զարգացմանն ուղղված հմտություններ ձևավորող հանձնարարականները, քիչ են նորարականություն ապահովող դիպլոմային աշխատանքների օրինակները, պրակտիկաները չեն ներառում հետազոտությունների իրականացում, բացակայում են գործատուների հետ համատեղ հետազոտությունների դեպքերը, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը չի բավարարում Չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր ըստ չափանիշի: Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում առկա է երկու մասնաշենք 5305,5քմ ընդհանուր մակերեսով, որից 3386,9քմ կազմում է առաջին մասնաշենքի, իսկ 1918,4քմ՝ երկրորդ մասնաշենքի տարածքը: Քոլեջի տարածքը տրամադրված է պետության կողմից անհատույց տնօրինման իրավունքով:

Քոլեջում կա հեռախոսակապ և ինտերնետային կապ (նաև Wi-Fi): Քոլեջում համացանցային հասանելիություն ունեն հետևյալ ստորաբաժանումները՝ տնօրինություն և ընդունարան, փոխտնօրինություն, ուսումնական մասեր, ամբիոնների վարչություններ, ուսումնական պրակտիկայի վարչություն, հաշվապահություն, կադրերի բաժին, պարետ, լաբորատորիաների վարչություն, ուսումնական լաբորատորիաներ, գրադարան, ՈԱ պատասխանատուի կաբինետ:

Ինչպես քոլեջի ԻՎ-ից, այնպես էլ փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (այսուհետ՝ GIZ) աջակցությամբ արևային կայանների հավաքման լաբորատորիա է ստեղծվում, որն այժմ ձևավորման ընթացքի մեջ է:

Հիմնական ուսումնական գործունեություն ծավալելու, գործնական և լաբորատոր պարապմունքներ անցկացնելու համար բացի վերը նշվածներից քոլեջն ունի նաև տեսական և գործնական պարապմունքների լսարաններ (թվով 11՝ նախատեսված 25 և ավելի ուսանողի համար, թվով 20՝ նախատեսված մինչև 20 ուսանողի համար), սխեմատեխնիկայի և միկրոպրոցեսորային տեխնիկայի թվով 2, մեխատրոնիկայի, ռոբոտոտեխնիկայի, էլեկտրատեխնիկայի և չափման սարքերի ու մոնտաժային

ուսումնական լաբորատորիաներ, քիմիայի, ֆիզիկայի, զինվորական պատրաստվածության, ինժեներական գրաֆիկայի և դիպլոմային նախագծման կաբինետներ ու մեխատրոնիկայի արհեստանոց:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ համակարգչային լսարանները, լաբորատորիաներն ու արհեստանոցն ապահովված են անհրաժեշտ սարքերով և սարքավորումներով: Հետագայում քոլեջի կողմից տրամադրված տեսագրությունների ուսումնասիրությունները հաստատում են վերը նշված պնդումը:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ քոլեջի բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերով նախատեսված գործնական, տեսական և հետազոտական աշխատանքների իրականացման համար առկա են բավարար նյութատեխնիկական ռեսուրսներ: Այդուհանդերձ, փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից փաստացի չեն իրականացվել վերլուծություններ: Ինչպես նաև քոլեջում չեն իրականացվում հետազոտական աշխատանքներ, ուստի պարզ չէ, թե ինչպես են գնահատվել քոլեջի նյութատեխնիկական ռեսուրսների բավարար լինելը հետազոտական աշխատանքներ կատարելու համար:

Ըստ քոլեջի ԻՎ-ի, տրամադրած տեսագրությունների և փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզված տեղեկատվության՝ քոլեջի 7 լսարաններում ուսանողների ու դասախոսների կողմից ցուցադրությունների կազմակերպման համար առկա են ֆիքսված պրոյեկտորներ, իսկ մյուս լսարաններում նմանատիպ աշխատանքներ կազմակերպելու համար առկա են շարժական համակարգիչներ և պրոյեկտորներ:

Քոլեջում Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում 2020թ.-ին տեխնիկապես վերազինվել է համակարգչային 2 լսարան:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ քոլեջում գործում է միասնական համակարգչային ցանց: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ 2019-2020թթ. թարմացվել ու հզորացվել է սերվերային համակարգը:

Ըստ ԻՎ-ի՝ քոլեջում գործում է գրքային հարուստ ֆոնդով գրադարան, որում առկա է ուսումնական պլանին համապատասխան դասընթացների համար նախատեսված հիմնական դասագրքերի զգալի մասը: Ինչպես նաև, ըստ քոլեջի տրամադրած փաստաթղթերի, քոլեջի գրադարանի տարածքը կազմում է 52քմ, գրադարանում առկա է շուրջ 5500 մասնագիտական գրականություն, իսկ բաժանորդներին սպասարկող մասնագետը քոլեջում թվով մեկն է՝ գրադարանավարը:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ գրադարանային ֆոնդը պարբերաբար թարմացվում է ամբիոնների կողմից ներկայացված պատվերների հիման վրա: Քոլեջում անցկացված հարցումների և ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ գրադարանում առկա գրականության մի մասը մաշված է: Այնուամենայնիվ, փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում առկա մասնագիտական գրականությունից ուսանողները հիմնականում չեն օգտվում.քոլեջի ուսանողներն ու դասախոսները հիմնականում օգտվում են համացանցում առկա գրականությունից:

Առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի կայքում գործում է էլեկտրոնային գրադարան, որում թվայնացված պահվում են հատկապես այն դասագրքերն ու ուսումնական նյութերը, որոնց գրքային տարբերակները գրադարանում չկան կամ սակավ

են: Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները օգտվում են քոլեջի էլեկտրոնային գրադարանից հատկապես ներկայիս պայմաններում՝ առցանց կրթության շրջանակներում: Ըստ հաստատության ԻՎ-ի՝ քոլեջը նախատեսում է մշակել գրադարանի և ընթերցասրահի զարգացման հայեցակարգ: Այդուհանդերձ, փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ հստակ քայլեր և պլանավորում այս առումով դեռ առկա չէ:

Ըստ քոլեջի ԻՎ-ի և տրամադրած փաստաթղթերի՝ 2018թ.-ից որակի ապահովման պատասխանատուի կողմից ուսանողների և աշխատակիցների շրջանում իրականացվել են ստորաբաժանումների աշխատանքից և ենթակառուցվածքներից բավարարվածության մասին հարցումներ, առկա են դրանց տոկոսային վերլուծությունները: Վերջիններիս և իրականացված ներքին աուդիտների արդյունքում իրականացվել են որոշակի բարելավումներ, մասնավորապես, բարելավվել են լսարանային պայմանները, սանհագույցների վիճակը՝ հիմնովին վերանորոգելով առաջին մասնաշենքի բոլոր սանհանգույցները: Սակայն հարցումներ տեղի են ունեցել միայն մեկ անգամ, հետագայում՝ բարելավման աշխատանքներից հետո, դրանց վիճակից բավարարվածության մասին հարցում քոլեջում չի իրականացվել:

Քոլեջում առկա է նաև հանդիսությունների դահլիճ, մարզադահլիճ՝ 340քմ մակերեսով, մարզադաշտ՝ 950քմ մակերեսով, ընթերցասրահ՝ 52,4քմ մակերեսով, բուժկետ՝ 15,1քմ մակերեսով, սանհանգույցներ:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում, ըստ քոլեջի ԻՎ-ի, իրականացվում է ֆինանսների պլանավորում: Ըստ քոլեջի ԻՎ-ի և տրամադրած փաստաթղթերի (Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի խորհրդի 24.09.2020թ. հեռավար նիստի արձանագրություն, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի 2020 թվականի բյուջեի նախահաշիվ՝ հաստատված խորհրդի 07.02.2020թ. նիստում)՝ նախահաշիվը քննարկվում և հաստատվում է խորհրդի կողմից:

Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ընթացիկ՝ ուսումնական գործընթացի ժամանակ առաջացած ֆինանսական փոքր ռեսուրսներ պահանջող կարիքների դեպքում (օրինակ, անհրաժեշտություն է առաջանում համակարգչի մկնիկ կամ ստեղնաշար գնելու կամ լրացուցիչ մեկ պրոյեկտոր և այլն) տնտեսական գծով փոխտնօրենը նախօրոք լրացուցիչ ծախսերի համար հատկացված բյուջեից կատարում է տվյալ գնումը: Իսկ առավել մեծ, չնախատեսված ծախսեր պահանջող կարիքների ի հայտ գալու ժամանակ հրավիրվում է քոլեջի խորհրդի արտահերթ նիստ, որում քննարկվում և հաստատվում են անհրաժեշտ փոփոխությունները:

Ըստ քոլեջի ԻՎ-ի՝ Ֆինանսական պլանավորման հիմքում ընկած են ստորաբաժանումների տարեկան պլանները: Այդուհանդերձ, փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների տարեկան պլաններն ու դրանց հաշվետվությունները փաստացի հիմնված չեն ու չեն բխում գործող ՌԾ-ից:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում ՄԿԾ-ների նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, որպես այդպիսին, առկա չէ: Սակայն առկա է

ֆինանսական միջոցների բաշխման որոշակի ընթացակարգ.քոլեջում ՄԿԾ-ների նպատակների իրականացման համար ռեսուրսները ձեռք են բերվում դրանց անհրաժեշտության առաջացման դեպքում:

Քոլեջում ՄԿԾ-ների նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները հիմնականում ձեռք են բերվում դրամաշնորհային ծրագրերով: Ռեսուրսները (օրինակ, համակարգիչները) հիմնականում թարմացվում են՝ ելնելով ստեղծված հնարավորությունից: ՄԿԾ-ների նպատակների լիարժեք իրականացման համար ցանկալի ժամանակահատվածում ռեսուրսների անընդհատ թարմացման հնարավորություն քոլեջը չունի:

Բացի պրակտիկաներից քոլեջում գործատուների հետ ռեսուրսների համատեղ օգտագործման դեպքեր առկա չեն:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում որակի համակարգում ներառված բոլոր փաստաթղթերի կառավարման նպատակով ստեղծվել և ներդրվել է «Որակի համակարգերի փաստաթղթերի կառավարման ընթացակարգ» ISO 9001:2008 ստանդարտի 4QP21 ընթացակարգը: Սույն ընթացակարգի նպատակն է սահմանել որակի կառավարման համակարգի փաստաթղթերի մշակման, հաստատման, հաշվառման, նույնականացման, բաշխման, կիրառման, փոփոխությունների կատարման, գործածությունից հանելու և որակի տվյալներ պարունակող գրառումները կառավարելու ու պահպանելու կարգը:

Սակայն սույն ընթացակարգը վերաբերում է միայն որակի համակարգում ներառված բոլոր փաստաթղթերի կառավարմանը, այնուամենայնիվ, ըստ քոլեջի ԻՎ-ի, քոլեջում ամբողջ փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է ստանդարտներին համապատասխան: Առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջը ISO 9001:2008 ստանդարտների համապատասխանության վերահավատարմագրում չի անցել: Ուստի, փաստացի դրանով առաջնորդվելը պարտադիր չէ: Այդուհանդերձ, «սովորույթի» ուժով որոշ ընթացակարգեր շարունակում են այդ ստանդարտներին համապատասխան անել: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ նաև, որ փաստաթղթաշրջանառության համար նախկինում ներդրված էլեկտրոնային համակարգի կիրառումից ՄՈՒՀ-ը սկսել է հրաժարվել և հիմնականում այն չի կիրառում:

Քոլեջում առկա է պահակային ծառայություն: Իրականացվում է մասնաշենքերի մուտքերի և միջանցքների տեսահսկում:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում առկա են համապատասխան պայմաններ ուսանողների և աշխատակիցների՝ արտակարգ իրավիճակներում արագ և անվնաս տարհանելու համար:

Քոլեջն ունի բուժքույր, առկա է բուժկետ: Անհրաժեշտության դեպքում քոլեջի ներքին շահակիցներին տրամադրվում է առաջին բուժօգնություն և բժշկական անվճար խորհրդատվություն: Սակայն բուժկետի հնարավորությունները սահմանափակ են, իսկ հագեցվածությունը բավարար մակարդակի չէ: Քոլեջում անցկացված հարցումների մասնակիցներից միայն 50%-ն է գոհ քոլեջի բուժկետից:

Քոլեջում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար տեղաշարժի որոշակի պայմաններ կան (թեքահարթակներ), սակայն դրանք բավարար չեն (օրինակ, հատուկ հարմարեցված սանհանգույցներ չկան) այնտեղ հենաշարժողական խնդիրներ ունեցող

ուսանողների համար ուսումնական գործընթացը ստացիոնար կերպով կազմակերպելու համար: Բացառություն է միայն քոլեջում հաշմանդամություն ունեցող ուսանողների համար կառուցված լաբորատորիան: Վերջինս հիմնվել է ԵԻՊՔ–ի կողմից, ուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավմանը զբաղվածության խթանման միջոցով, իրականացվում է «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան գրասենյակի (այսուհետ՝ Save the Children) «Լայֆ» ծրագրի շրջանակներում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (այսուհետ՝ USAID) ֆինանսավորմամբ: Սույն լաբորատորիան տեխնիկապես հագեցված է, այնտեղ անցկացվում են ինչպես դասընթացներ, այնպես էլ պրակտիկաներ:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում 2017-2018թթ. անցկացվել են հարցումներ ուսանողների շրջանում, այդ հարցումների հիման վրա հետագայում քոլեջում իրականացվել են որոշակի բարելավումներ: Սակայն վերջինս ռեսուրսների գնահատման վերաբերյալ քոլեջում անցկացված միակ հարցումն է: Իսկ իրականացված բարելավումներից հետո դրանցից շահակիցների բավարարվածության գնահատման հարցում չի իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը ջանքեր է ուղղում ենթակառուցվածքների բարելավմանը և քայլեր է ձեռնարկում այս ուղղությամբ: Այս ամենը նպաստում է ուսումնական անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում նաև, որ ժամանակ առ ժամանակ կատարվում են վերանորոգումներ: Այնուամենայնիվ, ռեսուրսների համալրումը, բարելավումները պլանավորված չեն, ինչը կարող է խոչընդոտել կարիքների վերհանմանը և պարբերաբար արձագանքմանը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև քոլեջի գործատուների ռեսուրսների օգտագործումը, ինչը կնպաստի աշխատաշուկայի հետ կապերի ամրապնդմանը և գործատուների հետ համատեղ ռազմավարության մշակմանը ռեսուրսների օգտագործման հարցում:

Դրական է այն փաստը, որ հիմնական ուսումնական գործունեություն ծավալելու, գործնական և լաբորատոր պարապմունքներ անցկացնելու համար քոլեջն ունի տեսական ու գործնական պարապմունքների լսարաններ, մասնագիտական և հանրակրթական առարկաների անցկացման համար նախատեսված լաբորատորիաններ, տեխնիկապես հագեցած և ինտերակտիվ լսարաններ: Այս ամենի կայունության ապահովումը կնպաստի ենթակառուցվածքների շարունակական զարգացմանը:

Դրական է, որ քոլեջում առկա է մասնագիտական որոշակի գրականություն, սակայն քոլեջի դասախոսական կազմն ու ուսանողներն ավելի շատ նախընտրում են օգտվել համացանցի նյութերից, ինչը նաև, ըստ քոլեջի, պայմանավորված է ոլորտի արագ զարգացմամբ: Այս առումով նպաստավոր կլինի դասախոսների կողմից մեթոդական ձեռնարկների մշակումը և կիրառումը: Դրական է նաև քոլեջում առկա էլեկտրոնային գրադարանի առկայությունը, որը հատկապես կարևոր է առցանց ուսուցման պարագայում:

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում ֆինանսական պլանավորման հիմքում ընկած են ստորաբաժանումների տարեկան պլանները: Քոլեջի նախահաշիվը քննարկվում և հաստատվում է խորհրդի կողմից: Այնուամենայնիվ, տարբեր ոլորտներում նկատվեցին ֆինանսական ռեսուրսների սղության պատճառով կատարված ոչ լիարժեք

աշխատանքներ (ռեսուրսների համալրում, դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ և այլն)։ Ֆինանսական լրացուցիչ միջոցների հայթայթումը կնպաստի այս խնդիրների լուծմանը և կայունության ապահովմանը։

Սակայն փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ առկա ռեսուրսներն այն նվազագույնն են, որով հնարավոր է իրականացնել քոլեջի մասնագիտական ուղղվածության պահանջներն ու նպատակները։ Մասնավորապես, քոլեջում դասի ընթացքում մեկ համակարգչից միաժամանակ օգտվում են մի քանի ուսանողներ։ Սա կարող է վտանգել ուսումնառության վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերումը։

Քոլեջում ՄԿԾ-ների նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները հիմնականում ձեռք են բերվում դրամաշնորհային ծրագրերով։ Իսկ կայունության ապահովման համար անհրաժեշտություն կա հիմքեր ստեղծել առաջիկա կապերի ստեղծման առումով։

Դրական է, որ քոլեջը ստեղծում է անվտանգ և ապահով միջավայր ուսումնառության համար, քոլեջում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար տեղաշարժի որոշակի պայմաններ կան, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ դրանք բավարար չեն այնտեղ հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար ուսումնական գործընթացը ստացիոնար կերպով կազմակերպելու համար։ Բացառություն է միայն քոլեջում հաշմանդամություն ունեցող ուսանողների համար կառուցված լաբորատորիան։

Դրական է, որ քոլեջում առկա է փաստաթղթաշրջանառության որոշակի համակարգ, որը նախկինում կիրառվել է, միևնույն ժամանակ, այդ համակարգի արդյունավետությունը պարզ չէր։ Փաստաթղթաշրջանառության համակարգի լավացումը և հստակեցումները կնպաստեն քոլեջում բոլոր օղակների միջև հաղորդակցության բարելավմանը։

Մտահոգիչ է այն փաստը, որ քոլեջում հարցումները պարբերական բնույթ չեն կրում։ Քոլեջում ռեսուրսներից բավարարվածության մասին իրականացվել է միայն մեկ հարցում։ Դրական է այն փաստը, որ հարցման արդյունքները ենթարկվել են որոշակի վերլուծության, ինչից հետո որոշ վերհանված խնդիրներ լուծումներ են ստացել։ Սակայն իրականացված բարելավումներից հետո դրանցից շահակիցների բավարարվածության մասին գնահատման հարցում չի իրականացվել։ Հարցումների պարբերբար իրականացումները կնպաստեն խնդիրների դուրսբերմանը և լուծումների տրմանը։

Եզրակացություն: Հաշվի առնելով Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի շենքային պայմանները, լսարանների և լաբորատորիաների քանակությունը, մասնագիտական ուղղվածության համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսներով հագեցվածության մակարդակը, քոլեջի կողմից անվտանգ ուսումնական միջավայրի ապահովումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը բավարարում է Չափանիշ 7-ի պահանջներին։

Եզրահանգում: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր ըստ չափանիշի: Քոլեջի ներսում գործում է հաշվետվողականության աստիճանակարգային սկզբունքը: Կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց տարեկան գործունեության արդյունքների վերաբերյալ քոլեջի տնօրենին ներկայացնում են հաշվետվություններ՝ ապահովելով կառավարման բոլոր օղակների հաշվետվողականությունը: Հաշվետվությունների ներկայացման պահանջն ամրագրված է ստորաբաժանումների կանոնակարգերում և/կամ աշխատակիցների պաշտոնեական հրահանգներում: Չնայած որոշ ստորաբաժանումների և հաստիքների դեպքում հաշվետվողականության փաստաթղթային նման պահանջ ամրագրված չէ, այնուամենայնիվ, համապատասխան հաշվետվություններն առկա են:

Արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովումը սահմանափակվում է քոլեջի տնօրենի կողմից խորհրդում և լիազոր մարմին տարեկան հաշվետվության ներկայացմամբ: Թե՛ քոլեջի տնօրենի, թե՛ ստորաբաժանումների ընթացիկ և տարեկան հաշվետվությունները տեղադրված չեն քոլեջի կայքում: Տնօրենի հաշվետվությունը, քոլեջի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռն, ըստ քոլեջի կանոնադրության 26.5 և 26.22 կետերի, քննարկում և հաստատում է խորհուրդը՝ իրականացնելով տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողություն: Տնօրենը տարեկան մեկ անգամ հաշետվություն է ներկայացնում նաև լիազոր մարմին, որն էլ լսում է քոլեջի գործունեության մասին հաշվետվությունները և քննում դրանց գործունեության վերստուգման արդյունքները (համաձայն քոլեջի կանոնադրության): Տնօրենի հաշվետվություններում համառոտ կերպով արձանագրվում են տարվա ընթացքում քոլեջում կատարված աշխատանքները՝ նյութատեխնիկական, ուսումնամեթոդական հենք, աշխատակազմ, ուսանողական համակազմ, ուսումնական աշխատանքներ, պետական ամփոփիչ ատեստավորում, շրջանավարտների աշխատանքի տեղավորում, ուսանողները միջազգային մրցույթներում, նորարարական ծրագրեր, լրացուցիչ կարճաժամկետ դասընթացներ ուղղություններով: Այդ հաշվետվություններն, ընդհանուր առմամբ, ունեն զուտ տեղեկատվական բնույթ:

Քոլեջի հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա չեն վերլուծական տվյալներ, ինչպես նաև դրանք հիմնված չեն ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման վրա: Փորձաքննության արդյունքում պարզվեց, որ քոլեջում արձանագրվել է հաշվետվությունների ձևաչափը ռազմավարական ծրագրին համապատասխանեցնելու անհրաժեշտությունն, ու նախատեսվում է 2020-2021 ուսումնական տարվանից կատարել այդ փոփոխությունները:

Կանոնադրությամբ՝ որպես քոլեջի գործունեության հիմնական նպատակներից մեկը, սահմանված է ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը: Այս նպատակի իրագործման համար քոլեջը՝ որպես գործիքակազմ, կիրառում է կայքն ու ֆեյսբուքյան էջը: Պաշտոնական կայքէջում, սակայն, քոլեջի մասին ընդհանուր տեղեկություններն ու պատմությունը ներկայացված են բավական համառոտ: Մասնագիտությունների մասին քոլեջի կայքում նշված են գործունեության հիմնական զբաղմունքները միայն, տեղադրված չեն ուսումնական

գործընթացը կանոնակարգող փաստաթղթերը, առկա չէ տեղեկատվություն, օրինակ, ուսանողական խորհրդի գործունեության մասին։ «Օլիմպիադաներ» բաժինը չի թարմացվել 2014-2015 ուսումնական տարվանից հետո, իսկ գործընկերների ներկայացված ցանկն էլ ամբողջական չէ։ Կայքում տարեկան հրապարակվում է միջինը 2-3 նորություն (2019 և 2020թթ.՝ մեկական նորություն), «Հայտարարություններ» բաժնում 2020թ.-ին տեղադրվել է 3 հայտարարություն, որից առաջ նախորդ հրապարակումը եղել է 2016թ.-ին։ Քոլեջի կայքում առկա տեղեկատվությունը հասանելի է միայն հայերեն լեզվով։ Քոլեջի ֆեյսբուքյան էջում էլ 2020թ.-ի ընթացքում կատարվել է մոտ 20 հրապարակում, 2019թ.-ին՝ 0, 2017-2018թթ.՝ 2-3-ական, 2014-2016թթ.՝ մինչև 20-ական։ Քոլեջի ուսանողների շրջանում 2017-2018 ուսումնական տարում անցկացված հարցման արդյունքներից էլ հետևում է, որ հարցվածների միջինը 1/3-ը (30%-ից ավելին) անբավարար է համարում կայքի կառուցվածքը, տեղեկատվության լիարժեքությունը, նորությունների լուսաբանումն ու ընդհանուր գրավչությունը։ Ինչպես պարզվեց փորձագիտական առցանց այցի ընթացքում, ուսանողները քոլեջի կայք հիմնականում այցելում են էլեկտրոնային գրադարանից օգտվելու համար։ Ինքնավերլուծության մեջ ևս արձանագրված է, որ քոլեջի կայքէջն ու ֆեյսբուքյան էջն իրենց ռեսուրսային բազայով և օպերատիվ ակտիվությամբ հասցված չեն ցանկալի մակարդակի։

Քոլեջում հասարակության հետ կապերն ապահովվում են կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով։ Ըստ արտաքին շահակիցների խմբերի ու տեղեկատվական հոսքերի՝ այդ գործընթացին մասնակցում են ամբիոնների վարիչները, որակի պատասխանատուն, կարիերայի և պրակտիկայի բաժինները։ Կարիերայի բաժնի ու ամբիոնի վարիչի դեպքում շահակիցների հետ կապի ապահովումն ու կազմակերպումն ամրագրված է համապատասխան փաստաթղթերում։ Ինչպես օրինակ, ըստ ամբիոնի վարիչի պաշտոնեական հրահանգի՝ նրա գործառույթներից է քոլեջի շրջանավարտների, ինչպես նաև ձեռնարկությունների և հիմնարկների հետ կանոնավոր կապի կազմակերպումը։ Իսկ կարիերայի ստորաբաժանման կանոնակարգով սահմանված է ներքին և արտաքին հաղորդակցման ապահովումը, այդ թվում՝ ստորաբաժանման, դրա կողմից իրականացվող աշխատանքների և արդյունքների մասին ուսանողների և հանրության լայն շրջանակի համար։ Կարիերայի բաժնի գործառույթների թվում է նաև քոլեջի ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապի, ծանուցման և արդյունավետ հաղորդակցման մեխանիզմների մշակումը։ Եվ կարիերայի բաժնի աշխատանքային տարեկան պլաններով սահմանվում է ուսումնական այդ տարվա շրջանավարտների տվյալների բազայի (հենքի) ստեղծումը և ուսումնական նախորդ տարվա շրջանավարտների բազայի տվյալների հավաքագրումը, թարմացումն ու մուտքագրումը։ Ինչպես հետևում է բաժնի հաշվետվություններից, այդ նպատակով ավարտական կուրսերի ուսանողները երկրորդ կիսամյակի ընթացքում լրացնում են «Շրջանավարտի հարցաթերթիկ»-ը։ Հավաքագրված տեղեկատվությունն էլ հիմք է դառնում շրջանավարտների էլեկտրոնային բազան վարելու համար։ Շրջանավարտների հետագա ուսումնառության և աշխատանքային գործունեության մշտադիտարկման նպատակով կազմակերպվում են նաև առցանց կամ հեռախոսային հարցումներ։ Քոլեջի տնօրենի ամենամյա հաշվետվության մեջ ներկայացվում են նաև վիճակագրական այդ տվյալները։ Մասնավորապես, 2018-2019 ուսումնական տարվա 123 շրջանավարտներից

35-ը շարունակում են ուսումը բուհերում, 62-ն անցել են աշխատանքի, որից 23-ը՝ մասնագիտությամբ։

Այնուամենայնիվ, այս ուղղությամբ կատարվող աշխատանքները համակարգային բնույթ չունեն, և շահակիցների տարբեր խմբերի հետ հետադարձ կապի ապահովման հաստատված ընթացակարգ քոլեջում առկա չէ։ Քոլեջի պաշտոնական կայքի «Կապ» բաժնում ներկայացված է քարտեզ՝ «Ինչպես գտնել մեզ» խորագրով, քոլեջի հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և երթուղայինների համարները։ Քոլեջի հետ անմիջապես կայքի միջոցով կապ հաստատելու հնարավորություն սահմանված չէ։

Համաձայն քոլեջի կանոնադրության՝ բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը քոլեջի գործունեության հիմնական նպատակներից է։

Ըստ քոլեջի ռազմավարական գործող ծրագրի՝ ի թիվս զարգացման այլ ուղղությունների, խնդիր է դրված նաև դառնալու այնպիսի հաստատություն, որը՝

- մատչելի է և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հասարակության ամենատարբեր շերտերին,
- տրամադրում է լրացուցիչ շարունակական կրթության և մասնագիտական խորհրդատվության ծառայություններ՝ հանրային պահանջարկին համապատասխան։

Վերոնշյալ խնդիրների լուծման համար սահմանվել է քոլեջի զարգացման ռազմավարական առանձին ուղղություն՝ «Հանրային ներգրավում և ծառայություններ»։ Այն ենթադրում է հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրերի մշակում՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը։

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քոլեջը վերջին տարիների ընթացքում առաջարկել է կարճաժամկետ լրացուցիչ թվով 10 ծրագրեր՝ 1-ից 4 ամիս տևողությամբ։ Ծրագրերի կեսից ավելին ուսումնական վերջին 2 տարիների ընթացքում չի իրականացվել։ Իսկ քոլեջի կողմից առաջարկվող լրացուցիչ ծրագրերի ունկնդիրները հիմնականում քոլեջի ուսանողներն են ու գործազուրկները (համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կնքված պայմանագրի)։ Միայն մեկ ծրագրի են մասնակցել արտաքին դիմորդները։ Քոլեջի կայքում գործում է «Լրացուցիչ ուսուցում» բաժինը, որտեղ ներկայացված է մատուցվող համակարգչային ծրագրերի ցանկը, տևողությունն ու արժեքը։ Նշված է նաև, որ ծրագրերի ավարտին տրվում է պետական նմուշի վկայական։ Կայքում այլ տեղեկատվություն, օրինակ, իրականացված ծրագրերի կամ մասնակիցների մասին, առկա չէ։

Ինչպես նշված էր ինքնավերլուծության մեջ, որպես հասարակությանը գիտելիքների փոխանցման հեռանկարային հնարավորություն՝ դիտարկվում է քոլեջի շրջանակներում Տեղեկատվական տեխնոլոգիաների առցանց ակադեմիայի հիմնումը։ Նախատեսվում է միջազգային առաջատար ընկերությունների հետ համագործակցությամբ մշակել ու ներդնել հայալեզու օնլայն դասընթացներ, որոնց կմասնակցեն ոչ միայն քոլեջի ուսանողները։ Փորձագիտական առցանց այցի ընթացքում սակայն պարզվեց, որ ակադեմիայի ստեղծման հետ կապված կան որոշակի խնդիրներ, որոնք դեռևս լուծված չեն ու կախված չեն քոլեջից։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում գործող ներքին հաշվետվողականության ապահովման աստիճանակարգային համակարգը: Այն ապահովում է միայն տնօրենի, տնօրինական ու կառավարման խորհուրդների անդամների առջև հաշվետվողականությունը, քանի որ այդ հաշվետվությունները չեն հրապարակվում և տեղադրված չեն քոլեջի կայքում: Հաշվետվությունների հասանելի չլինելու պարագայում քոլեջի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ներքին ու արտաքին շահակիցների լայն խմբերի առջև փաստացի ապահովված չեն: Սա կարող է խոչընդոտել քոլեջի աշխատանքների թափանցիկության ապահովմանը:

Փորձագիտական խմբի կողմից մտահոգիչ է այն, որ քոլեջում իրականացվող հաշվետվությունները վերլուծական բնույթ չեն կրում, ինչը ցույց չի տալիս պլանավորված և իրագործված աշխատանքների չափելիությունը: Ինչպես նաև թույլ չի տալիս հստակ դուրս բերել նախատեսված գործողությունների անկատարության պատճառները, չի նպաստում ի հայտ եկած խնդիրների լուծման ուղիների արդյունավետ բացահայտմանն ու դրանց հիման վրա բարելավումների պլանավորմանը: Փորձագիտական խումբը, սակայն, դրական է համարում այն փաստը, որ քոլեջում պլանավորել են 2020-2021 ուսումնական տարվանից պատրաստվող հաշվետվությունները ներկայացնել ըստ ռազմավարական ծրագրում սահմանված նպատակների ու ուղղությունների, ինչը հնարավորություն կընձեռի գնահատելու թե՛ աշխատանքային պլանների, թե՛ ռազմավարական ծրագրի կատարումը տարվա կտրվածքով:

Մտահոգիչ է, որ քոլեջի ընթացակարգերի ու գործընթացների մասին տեղեկատվության հասանելիությունը հասարակությանը կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով իրականացվում է ոչ բավարար մակարդակով: Պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք օպերատիվ չեն և ոչ ամբողջական տեղեկատվություն են տրամադրում քոլեջի գործունեության, մատուցվող կրթական ծրագրերի ու ծառայությունների վերաբերյալ: Ինչը խոչընդոտում է քոլեջի արդյունավետ ու թափանցիկ հաշվետվողականության ապահովմանը հասարակության ու պետության առջև: Ողջունելի է, սակայն, այն հանգամանքը, որ քոլեջում նույնպես գիտակցում են այդ խնդիրը և պլանավորում են կատարել բարելավումներ:

Չնայած քոլեջում գործում է շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմ, սակայն այդ գործընթացը կանոնակարգված չէ և իրականացվում է իրավիճակային՝ հիմնականում ստորաբաժանումների կողմից զուտ տեղեկատվության տրամադրման միջոցով: Քոլեջում հետադարձ կապի ապահովման առանձին քաղաքականություն մշակված և հաստատված չէ: Դա բացասաբար է անդրադառնում հասարակության հետ կայուն և երկարաժամկետ գործուն կապեր ձևավորելու ու պահպանելու վրա: Միաժամանակ, քանի որ այս ուղղությամբ համակարգված աշխատանքներ չեն տարվում, հետևապես չի ապահովվում նաև շահակիցների տարբեր խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը քոլեջի գործունեությանն ու ընթացակարգերին:

Դրական է նաև այն հանգամանքը, որ քոլեջն իրականացնում է գործողություններ իր տեսլականում սահմանված խնդիրները լուծելու համար՝ հասարակությանը գիտելիքների փոխանցման համատեքստում: Սակայն հարկավոր է իրականացնել

առաջարկվող կարճաժամկետ ծրագրերի գնահատում ու պահանջարկի ուսումնասիրում՝ շահակիցների ավելի մեծ խմբերի ներգրավման նպատակով: Ինչպես նաև, կարիք կա դիտարկելու այլընտրանքային տարբերակներ Տեղեկատվական տեխնոլոգիաների առցանց ակադեմիայի ստեղծման փոխարեն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա է հաշվետվողականության հստակ գործող համակարգ, որոշվել է հաշվետվությունները ներկայացնել ըստ ռազմավարական ծրագրի ուղղությունների, արձանագրվել է տեղեկատվական բազան հարստացնելու անհրաժեշտությունը, գործում են շահակիցների հետ կապի ապահովման մեխանիզմներ ու իրականացվում են կարճաժամկետ լրացուցիչ ծրագրեր, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը բավարարում է Չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր ըստ չափանիշի: «Արտաքին կապերն ու միջազգայնացումը» քոլեջի ռազմավարական գործող ծրագրում սահմանված են որպես զարգացման առանձին նպատակ: Այս նպատակի իրագործման համար նախատեսված գործողություններն են՝

- քոլեջի հետ տարբեր ծրագրերի շուրջ համագործակցած միջազգային կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ կապերի ամրապնդումը, նոր համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ աշխատանքը,
- քոլեջի արտաքին կապերի համակողմանի զարգացման հզորացումը, աշխատաշուկայի՝ հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ գործակցային կապերի մեծացումը:

Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ վերոնշյալ նպատակի ապահովման համար քոլեջում, սակայն, արտաքին կապերի ձևավորման ու միջազգայնացման քաղաքականություն և հստակ ընթացակարգեր դեռևս մշակված չեն: Չի կատարվում ռազմավարական այս ուղղությամբ տարվող գործողությունների տարեկան պլանավորում: Ուսումնասիրված ու բացահայտված չեն նաև արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովման ոլորտում քոլեջի հնարավորությունները, առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները: Քոլեջի պաշտոնական կայքի օտարալեզու տարբերակներն էլ հասանելի չեն:

Քոլեջում առկա չէ արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովման առանձին ստորաբաժանում կամ հաստիք: Չնայած տնօրենի կողմից 2016թ.-ին հաստատված կազմակերպական կառուցվածքի հավելվածով նախատեսված է միջազգային կապերի մենեջերի հաստիք, բայց 2020-2021 ուսումնական տարվա համար քոլեջի խորհրդի կողմից հաստատված հաստիքային ցուցակում նման պաշտոն սահմանված չէ:

Արտաքին կապերի հաստատման ու պահպանման համատեքստում նման որոշ գործառույթներ սահմանված են ստորաբաժանումների կանոնակարգերով ու առանձին հաստիքների պաշտոնական հրահանգներով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական առցանց այցից պարզվեց, որ պրակտիկայի ու կարիերայի ստորաբաժանումներն իրենց գործառույթների շրջանակում իրականացնում են աշխատանքներ արտաքին շահակիցների հետ:

Կարիերայի ստորաբաժանումն, օրինակ, ի թիվս այլ աշխատանքների, ըստ կանոնակարգի, իրականացնում է սոցիալական գործընկերների՝ գործատուների, արհմիությունների, աշխատանքային հաջողություններ ունեցող շրջանավարտների ներգրավում ուսանողների կարիերայի խորհրդատվության կազմակերպման աշխատանքներում: Ըստ կարիերայի ստորաբաժանման հաշվետվությունների, համաձայն աշխատանքային պլանների, պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ՏՏ ոլորտի տեղական և միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցիչների, գործատուների ու սոցիալական ընկերությունների հետ: Ուսանողների մասնագիտական կողմնորոշման ու կարողությունների զարգացման համար հատկապես կարևորվում է համագործակցությունը Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի և զբաղվածության տարածքային կենտրոնների հետ՝ զբաղվածության պետական ծրագրերին մասնակցելու ու շրջանավարտների համար թափուր աշխատատեղեր բացահայտելու նպատակով: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ քոլեջի ուսանողների ներգրավվածություն վերոնշյալ կենտրոնի կամ ծրագրի միջոցով առկա չէ: Պրակտիկայի բաժնի վարիչն էլ, ըստ պաշտոնական հրահանգի, արտադրական ու նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպման համար պատասխանատու է ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների հետ կապերի հաստատման ու պայմանագրերը ժամանակին կնքելու համար: Պրակտիկաների անցկացման նպատակով քոլեջը համագործակցում է պետական և մասնավոր շուրջ 60 կազմակերպությունների հետ խմբային և անհատական պայմանագրերով կամ գրավոր համաձայնությամբ: Մասնավորապես, «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ, «Ինստիգեյթ» ՓԲԸ, «Նեյշնլ Ինսթրումենթս» ՍՊԸ, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, «Արդշինբանկ» ՓԲԸ, «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ, «Հայփոստ» ՓԲԸ, «Դ-Լինկ Ինտերնեշնլ» ՍՊԸ, «ԿՏԱԿ» ՊՈԱԿ, «Կոլիբրիլաբ» ՍՊԸ, «Ac Trade Soft» ՍՊԸ, «PicsArt» ՍՊԸ և այլն: 2019թ.-ի ընթացքում կնքվել են պրակտիկաների անցկացման նոր պայմանագրեր «Global IT» ուսումնական կենտրոնի, «iTEAM» ՍՊԸ-ի, «Սիս Մեն» ՍՊԸ-ի և «Էֆնեթ» ՍՊԸ-ի հետ: Աշխատանքային պլանների ու հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այս աշխատանքներն իրականացվում են ըստ նախօրոք հաստատված պլանի:

Համաձայն պաշտոնական հրահանգի՝ որակի ապահովման պատասխանատուն պետք է աջակցի քոլեջի և օտարերկրյա կազմակերպությունների համագործակցությանը, միջազգային կապերի համագործակցության զարգացմանն ու դրանց ինտեգրմանը: Փորձաքննության ընթացքում պարզվեց, սակայն, որ այս ուղղությամբ աշխատանքներ նրա կողմից փաստացի չեն իրականացվում:

Քոլեջում կան տեղական ու միջազգային մակարդակում արտաքին համագործակցության որոշ օրինակներ: Մասնավորապես, որպես միջազգայնացմանը

նպաստող կարևոր քայլ՝ քոլեջում առանձնացնում են 2014թ.-ին GlobalGROUP միջազգային ընկերության կողմից կառավարման որակի միջազգային ISO 9001:2008 ստանդարտներին համապատասխանության հավատարմագրումը, որի շնորհիվ քոլեջում որակի կառավարումն իրականացվում էր միջազգային ստանդարտներին համապատասխան: 2017թ.-ին նախատեսված վերահավատարմագրումը սակայն քոլեջը չի անցել:

Գերմանական GIZ ընկերության հետ համագործակցությունը սկսվել է դեռ 2008թ.-ից էլեկտրոնային ուսուցման ուղղությամբ: 2019թ.-ին GIZ աջակցությամբ քոլեջում իրականացվել է «Ռոբոտաշինություն» և «Արևային էներգիայի համակարգերի շահագործում և սպասարկում» նոր մասնագիտացումների գծով դուալ համակարգի փորձարկման գործընթացը: Նախատեսվել էր դուալ կրթության կարճաժամկետ այդ դասընթացների հաջող արդյունքների ապահովման դեպքում մշակել կրթական նոր չափորոշիչներ և նոր մասնագիտությունները ներդնել քոլեջում: Բայց կատարված պիլոտային ծրագրի գնահատման վերլուծություն ու դրա շարունակականության ապահովման վերաբերյալ որևէ տեղեկատվություն առկա չէ: 2019թ.-ին դուալ ուսուցման կարճաժամկետ ծրագրի իրականացման փոխըմբռնման հուշագրեր են կնքվել Ինստիգեյթ ռոբոտիքս ընկերության և Կայուն էներգիայի զարգացման հիմնադրամի հետ: Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսները կարևորում են ուսումնական պլանով սահմանված դասաժամերի մի մասի անցկացումը գործատուների մոտ: Եվ նրանք, որպես գործատուների հետ արդյունավետ համագործակցության ճանապարհ՝ դիտարկում են դուալ համակարգի ձևավորումը:

2013թ.-ից քոլեջը ձեռնամուխ է եղել հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային ուսուցումը կազմակերպելու գործին: Այդ նախագիծը իրականացվում է Save the Children միջազգային կազմակերպության գրանտային ծրագրի ֆինանսավորմամբ, որի շրջանակում քոլեջում համակարգչային ուսուցում են անցել արդեն շուրջ 60 հաշմանդամներ: Համաձայն 2018թ.-ին քոլեջի հետ կնքված փոխըմբռնման հուշագրի՝ Save the Children կազմակերպության աջակցությամբ վերանայվել է «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսումնական պլանը՝ նպատակ ունենալով արդիականացնել այն և համապատասխանեցնել ժամանակակից աշխատաշուկայի կարիքներին: Դրա հիման վրա լրամշակվել է մասնագիտության կրթական չափորոշիչը և հաստատվել լիազոր մարմնի կողմից: Վերոնշյալ կազմակերպության օժանդակությամբ վերազինվել է քոլեջի ռոբոտաշինության լաբորատորիան, իսկ Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի աջակցությամբ՝ տեխնիկապես վերազինվել համակարգչային 2 լսարան:

Դոնի Ռոստովի կապի և ինֆորմատիկայի քոլեջի հետ 2016թ.-ին կնքված համաձայնագիրը նախատեսում է համագործակցություն միջին մասնագիտական կրթական ծրագրերի համատեղ մշակման և իրականացման, միջգրադարանային համագործակցության կազմակերպման, էլեկտրոնային ուսուցման և հեռավար կրթական տեխնոլոգիաների ներդրման, ուսանողական համատեղ միջոցառումների կազմակերպման ու անցկացման ուղղություններով: Մինչ այժմ համաձայնագրի իրականացմանն ուղղված գործողությունների փաստացի արդյունքը երկու քոլեջների

պատվիրակությունների փոխադարձ այցելություններն են միայն: Համագործակցության այդ համաձայնագրի գործողության ժամկետը 5 տարի է:

2016թ.-ին քոլեջը կրթության ոլորտում համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր է ստորագրել նաև Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի և Սոֆթլայն Ինթերնեյշնլ ընկերության հետ: Ըստ հուշագրի՝ կողմերը պարտավորվում են ձեռնարկել միջոցներ՝ ուղղված ՀՀ ուսումնական հաստատություններում տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի կրթության որակի բարելավմանը, էլեկտրոնային բովանդակության ստեղծմանը և ներդրմանը կրթական միջավայրում: Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ փոխըմբռնման այս հուշագրի շրջանակում դեռևս աշխատանքներ չեն կատարվել:

Ինչպես հաստատվեց փորձաքննության արդյունքում, քոլեջում չկան համագործակցության արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ: Առկա չեն հաշվետվություններ գործող պայմանագրերի ու համաձայնագրերի կատարման ընթացքի, ինչպես նաև վերլուծություններ միջազգային համագործակցության շրջանակներում ՄԿԾ-ներում ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում օտար լեզվի (անգլերեն) իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրեր փաստացի չեն իրականացվում: Չնայած այն հանգամանքին, որ քոլեջում, ըստ SWOT վերլուծության, որպես թույլ կողմ՝ արձանագրվել է անձնակազմի և ուսանողների՝ օտար լեզուների տիրապետման ոչ բավարար մակարդակը: Ուսանողներն օտար լեզու (անգլերեն) սովորում են կրթական ծրագրերի ուսումնական պլաններով նախատեսված օտար լեզուների դասավանդման շրջանակում: Այս դասընթացները, սակայն, վերաբերում են ընդհանուր անգլերենի իմացությանը: Դրանից բացի քոլեջում լրացուցիչ այլ պարապմունքներ չեն կազմակերպվում: Ինչ վերաբերում է դասախոսական անձնակազմին, ապա ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ օտար լեզվի վերապատրաստումների մասնակցել են քոլեջի 3 դասախոսներ: Վերապատրաստումը եղել է ռուսաց լեզվի և գրականության գծով, կազմակերպվել Կրթության ազգային ինստիտուտի կողմից:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջի ուսանողներն ու դասախոսները մասնագիտական գրականության ուսումնասիրման ժամանակ բախվում են խնդիրների և դժվարությունների՝ պայմանավորված օտար լեզվի տիրապետման ոչ բավարար մակարդակով: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից չի իրականացվել ՊԴ կազմի անգլերենի իմացության մակարդակը պարզող վերլուծություն: Առցանց այցից պարզ դարձավ, որ իմացության ցածր մակարդկի պատճառով քոլեջում չեն դիտարկում նաև փոխանակման միջազգային ծրագրերին կամ օտար լեզվով կազմակերպվող կարճաժամկետ դասընթացներին մասնակցության հնարավորությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է այն, որ քոլեջի զարգացման ռազմավարական ուղղություն է սահմանվել արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովումը: Մտահոգիչ է, սակայն, այն հանգամանքը, որ քոլեջի կողմից մշակված չէ արտաքին կապերի ու միջազգայնացման առանձին

քաղաքականություն կամ պատասխանատվության շրջանակ։ Ընդ որում, չի իրականացվում այս ուղղությամբ կատարվող աշխատանքների պլանավորում, հետևապես առկա չեն նաև համապատասխան հաշվետվություններ։ Թիրախային ու համակարգված գործողությունների բացակայությունը վտանգում է ՌԾ-ով ամրագրված նպատակների արդյունավետ իրագործումը։ Միաժամանակ, ուսումնասիրված չեն արտաքին կապերի ու միջազգային համագործակցության ոլորտում առկա հնարավորությունները, ինչը խոչընդոտում է քոլեջում միջազգայնացմանը նպաստող միջավայրի ձևավորմանը։

Արտաքին կապերի հաստատմանն ու պահպանմանն ուղղված գործողությունները որոշ մասով կատարվում են կարիերայի ու պրակտիկայի բաժինների կողմից՝ իրենց ամրագրված գործառույթների շրջանակում։ Ինչը ենթադրում է պրակտիկայի կազմակերպման ու ուսանողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ միայն աշխատանքների իրականացում։ Միջազգայնացմանն ուղղված գործառույթներն էլ, ըստ պաշտոնական հրահանգի, ՈԱ պատասխանատուի լիազորության ներքո են։ Փորձագիտական առցանց այցի ընթացքում, սակայն, պարզ դարձավ, որ այդ աշխատանքները նրա կողմից չեն կատարվում։ Մտահոգիչ է, որ այս առումով միջազգայնացմանն ուղղված գործառույթների իրականացման փաստացի վերահսկողություն ևս չի իրականացվում։

Մտահոգիչ է, որ քոլեջում արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ընթացակարգերը կանոնակարգված չեն։ Մեկ միասնական քաղաքականության սահմանված չլինելն ու կատարվող գործողությունների տարերային բնույթ ունենալը բացասաբար է անդրադառնում իրականացվող գործընթացների արդյունավետության վրա։

Մտահոգիչ է, որ քոլեջում գործընկեր կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ համագործակցության առկա փորձը փաստացի ավանդական կապերի ու փոխադարձ հետաքրքրությունների արդյունքում է ձևավորվել, այլ ոչ թե հստակ գործող, նպատակաուղղված քաղաքականության։ Քանի որ սահմանված չէ, թե ով է հետևում և զբաղվում համագործակցության հուշագրերով ու պայմանագրերով նախատեսված գործողությունների իրականացմամբ։ Մտահոգիչ է, որ քոլեջում առկա հուշագրերի, միջազգային պայմանագրերի արդյունքների գործնական կիրառում կամ դրանց իրագործման գործողությունների պլան առկա չէ և չի գործում։ Այսինքն՝ քոլեջն ամբողջությամբ չի օգտագործում ստեղծված արտաքին կապերը կրթական գործընթացի բարելավման համար։ Համագործակցության գնահատման և որոշ դեպքերում իրականացման արդյունքների մասին փաստերի բացակայությունը ևս չի նպաստում միջազգայնացման գործընթացների ինստիտուցիոնալիզացմանն ու տարածմանը քոլեջի ներսում։ Նոր կապերի հաստատումն ու արդեն իսկ գործողների շարունակականությունը վտանգված է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տվյալ գործընթացների համակարգում քոլեջում չի իրականացվում։

Մտահոգիչ է քոլեջում դասախոսական անձնակազմի և ուսանողների օտար լեզվի (անգլերենի) տիրապետման ոչ բավարար մակարդակը միջազգայնացման համար։ Հատկապես մտահոգիչ է մասնագիտական անգլերենի իմացության մակարդակը, ինչը խոչընդոտում է տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում

արդի գրականությունից օգտվելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, դա խոչընդոտում է քոլեջի ուսանողների և դասախոսների՝ ակադեմիական շարժունության միջազգային ծրագրերում մասնակցությանն ու ներգրավվածությանը: Ինչն էլ հանգեցնում է ուսումնական այլ հաստատությունների հետ փորձի փոխանակման պակասի:

Մտահոգիչ է նաև, որ ներքին շահակիցների շրջանում օտար լեզվի (անգլերենի) իմացության ոչ բավարար մակարդակը վերհանված խնդիր է քոլեջի կողմից ևս, սակայն այս ուղղությամբ այդ հարցի լուծման համար քոլեջում չկան մշակված կամ նախատեսված ընթացակագեր ու գործընթացներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով միջազգայնացման և արտաքին կապերի ուղղությամբ քոլեջում միասնական քաղաքականության բացակայությունը, իրականացվող աշխատանքների կանոնակարգված չլինելը, պատասխանատու ենթակառուցվածքի բացակայությունը, դրա արդյունքում ՌԾ-ի համապատասխան նպատակների անկատարությունը, քոլեջում օտար լեզվի (անգլերենի) իմացության առկա ցածր մակարդակն ու դրա լավացմանն ուղղված գործողությունների բացակայությունը, քոլեջում դասախոսների և ուսանողների շրջանում շարժունության փաստացի բացակայությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը չի բավարարում Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր ըստ չափանիշի: Քոլեջը 2014 թ.-ին GlobalGROUP ընկերության կողմից անցել է կառավարման որակի ISO 9001:2008 միջազգային ստանդարտներին համապատասխանության հավատարմագրում: Արդյունքում ձևավորվել է քոլեջի որակի կառավարման համակարգը, որի հիմքում դրված է 2014թ.-ին մշակված ու հաստատված «Որակի ձեռնարկը» (QM 9001:2008): Ձեռնարկում սահմանված ու ներկայացված են որակի կառավարման համակարգի հիմնական հասկացություններն ու ընթացակարգերը: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջը 2017թ.-ին նախատեսված վերահավատարմագրում չի անցել ու արտաքին աուդիտ չի իրականացվել, ուստի այդ ընթացակարգերի պահպանումն այլևս պարտադիր պահանջ չէ: Սակայն, քոլեջում շարունակում են առաջնորդվել դրանց մի մասով ու ապահովել համապատասխան փաստաթղթաշրջանառությունը, որոշ գործընթացներ իրականացնել այդ ստանդարտներին համապատասխան: Որոշվել է ներդնել և կատարելագործել քոլեջի որակի կառավարման համակարգը՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի չափանիշներին ու ուղենիշներին համապատասխան (ըստ «Որակի քաղաքականությամբ» սահմանված նպատակի):

Որակի պատասխանատուի հաստիքը համալրելուց հետո քոլեջի՝ որակի ապահովմանն ուղղված քաղաքականությունը ենթարկվել է վերլուծության, վերանայվել

ու լրամշակվել: Եվ ներկայումս որակի ապահովման ոլորտում քոլեջի գործունեությունը կանոնակարգվում է համաձայն խորհրդի կողմից 2018թ.-ին հաստատված «Որակի քաղաքականության»: Ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն», «Որակյալ մարդկային ռեսուրսներ», «Որակյալ ենթակառուցվածքներ» ու «Որակյալ ծառայություններ» զարգացման ուղղություններն էլ արտահայտում են քոլեջի ընդհանուր մոտեցումը որակի ապահովման ոլորտում: Եվ կրթության որակի բնագավառում քոլեջի նպատակները, սահմանված համաձայն «Որակի քաղաքականության», համընկնում են ռազմավարական ծրագրում նշված նպատակների հետ: «Որակի քաղաքականությամբ» այդ նպատակների իրականացումը ենթադրում է կրթական ծառայությունների որակից ուսանողների բավարարվածություն ու նոր կրթական տեխնոլոգիաների և գիտական գործունեության արդյունքների ներդրման ու արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ որակի գործող քաղաքականության հաստատումից հետո չեն կատարվել գնահատումներ, քանակական և որակական վերլուծություններ:

Ինքնավերլուծությունից ու փաստաթղթերի, մասնավորապես, որակի պատասխանատուի աշխատանքային պլանների ու հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ, որպես որակի ապահովման մեխանիզմ, քոլեջում հիմնականում կիրառվում են հարցումները: Դրանց անցկացումը կանոնակարգող որևէ փաստաթուղթ, որտեղ սահմանված կլինեն, օրինակ, հարցումների անցկացման ժամանակացույցը, մեթոդաբանությունը, պարբերականությունը, ընտրանքը, արդյունքների վերլուծության կարգն, առկա չէ: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ 2017-2018 ուսումնական տարում ուսանողների շրջանում քոլեջի ենթակառուցվածքներից ու տարբեր ստորաբաժանումների աշխատանքից բավարավածության վերաբերյալ և 2018-2019 ուսումնական տարում քոլեջի աշխատակիցների շրջանում ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ հարցումներ են իրականացվել: Ուսանողական այդ հարցման արդյունքները վերլուծել են քոլեջի 3 ուսանողներ և ներկայացրել՝ որպես կուրսային աշխատանք: Վերլուծության արդյունքները քննարկվել են մանկավարժական ու տնօրինական խորհուրդների նիստերում և որոշվել է, որ խիստ անհրաժեշտություն կա վերանորոգելու առաջին հերթին սանհանգույցները, իսկ լաբորատորիաները վերազինել՝ ֆինանսական բավարար միջոցների դեպքում: Ինչպես պարզվեց փորձագիտական առցանց այցի ընթացքում, հարցմանը մասնակից ուսանողներին հետագայում չեն ներկայացվել հարցման արդյունքները: Աշխատակիցների շրջանում կատարված հարցման արդյունքում իրականացված փոփոխությունների կամ բարելավումների դեպքեր չեն արձանագրվել: 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում անցկացվել է նաև առցանց ուսուցման վերաբերյալ հարցում: Ներկայացված հաշվետվություններում դասախոսները նշել են, մասնավորապես, թե ինչ թեմաներ են քննարկել դասաժամերի ընթացքում, քանի ուսանող է ներկա եղել, որոնք են նրանց բացակայության պատճառները, գնահատման հետ կապված ինչ խնդիրներ կան: Այնուամենայնիվ, առցանց ուսուցման մասին հավաքագրված տեղեկատվության հետագա վերլուծություն և գնահատում, խնդիրների դուրսբերում չի կատարվել: Բացի հարցումներից, հաճախ կարիքների վերհանումն ու խնդիրների բացահայտումը տեղի է ունենում հանդիպումների կամ զրույց-

քննարկումների ժամանակ՝ առանց համապատասխան փաստաթղթավորման։ Փորձագիտական առցանց այցից պարզվեց, որ, օրինակ, ռեսուրսների կարիքները բացահայտվում են հիմնականում բանավոր կերպով։

Ըստ «Որակի քաղաքականության»՝ որակի ապահովումը քոլեջի ողջ անձնակազմի պարտականությունն է։

Քոլեջի ներքին որակի ապահովման պատասխանատուի հաստիքը լրացվել է 2017 թ.-ին։ Տնօրենի կողմից 2016թ.-ին հաստատված կազմակերպական կառուցվածքում որակի ապահովման ստորաբաժանում կամ հաստիք սահմանված չէ։ Ըստ քոլեջի հաստիքային ցուցակի՝ ներքին որակի ապահովման պատասխանատուի համար հաստատված ու օգտագործվող հաստիքային միավորի թիվը մեկն է։ Որակի պատասխանատուն ունի առանձին աշխատասենյակ՝ անհրաժեշտ գույքով ու համակարգչային սարքավորումներով։ Նրա աշխատավարձից բացի որակի ապահովման գործընթացների գծով առանձին հատկացումներ քոլեջի բյուջեում չեն պլանավորվում ու տրամադրվում։ Պաշտոնեական հրահանգի համաձայն՝ որակի պատասխանատուն իր գործունեության մասին հաշվետվություններ է ներկայացնում քոլեջի տնօրենին։ Որակի պատասխանատուի կողմից կազմված աշխատանքային տարեկան պլանն ուսումնական տարվա սկզբում հաստատվում է տնօրենի կողմից։ Աշխատանքային պլանով սահմանվում են նախատեսված գործողությունները, դրանց իրականացման ժամկետներն ու պատասխանատուն (կատարողները)։ Հստակ չէ, թե ինչպես են մշակվում և կազմվում աշխատանքային պլաններն ու որոշվում իրականացվող միջոցառումների շրջանակը։ Հաշվետվություններում ներկայացվում են տարվա ընթացքում կատարված գործողություններն՝ առանց որևէ գնահատականի։ Եվ այդ հաշվետվությունները, սակայն, չեն բխում աշխատանքային պլաններից։ Միաժամանակ, նաև վերլուծություն չի իրականացվում, թե ինչ հիմքով են կատարվում պլանում չներառված աշխատանքներ կամ ինչ խնդիրների պատճառով չի իրագործվում պլանով սահմանված միջացառումների մի մասը։

Որակի պատասխանատուն թե՛ տնօրինական, թե՛ քոլեջի խորհուրդների անդամ է՝ որակի ապահովման հարցերն ամենաբարձր մակարդակով քննարկման առարկա դարձնելու նպատակով։

Փորձնական ինքնավերլուծության և ՈԱԱԿ-ի կողմից կատարված մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ որակի ապահովման ոլորտում քոլեջի կողմից նախանշված նպատակներն ու խնդիրները լուծելու համար մի հաստիքը բավարար չէ։ Որոշում է կայացվել ձևավորել որակի ապահովման հանձնաժողով, որն աջակցելու է որակի պատասխանատուին իր գործառույթներն իրականացնելիս։ Որակի կառավարման հանձնաժողովի կանոնակարգը հավանության է արժանացել տնօրինական խորհրդի կողմից 2020թ.-ի սեպտեմբերին։ Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, սակայն, որ հանձնաժողովը դեռևս ձևավորված չէ։ Ըստ կանոնակարգի՝ այն կազմված է լինելու տնօրինական խորհրդի կողմից առաջարկված անդամներից, քոլեջի իրավաբանից, բաժիններում հանձնաժողովի լիազոր-ներկայացուցիչներից, որոնց նշանակելու է քոլեջի տնօրենը՝ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ, յուրաքանչյուր մասնագիտությունից ուսանողության մեկական ներկայացուցչից, որոնք ընտրվելու են ուսանողական խորհրդի կողմից, արտաքին

շահակիցների ներկայացուցիչներից (կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական միավորումների ներկայացուցիչներ)։ Առցանց այցից պարզ դարձավ, որ հանձնաժողովի անդամների համար վարձատրություն նախատեսված չէ, և նրանք մասնակցելու են որակի ապահովման աշխատանքներին հասարակական հիմունքներով։ Հանձնաժողովը հաշվետու է լինելու տնօրինական խորհրդին՝ տարեվերջին ներկայացնելով հաշվետվություն որակի ապահովման ուղղությամբ քոլեջի ձեռքբերումների վերաբերյալ։ Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ որակի կառավարման հանձնաժողովը պետք է նաև աջակցի քոլեջի ռազմավարական ծրագրի իրագործմանը։ Կանոնակարգով, սակայն, հանձնաժողովին ամրագրված գործառույթները ենթադրում են աշխատանքներ քոլեջում որակի կառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ։

Համաձայն «Որակի քաղաքականության»՝ այն տարածվում է քոլեջի իրականացրած բոլոր գործառույթների վրա և ուղղված է քոլեջի բոլոր շահառուներին (ուսանողներ, դասախոսներ, վարչական անձնակազմ, շրջանավարտներ, գործատուներ և այլն)։

Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը քոլեջում դիտարկում են ինստիտուցիոնալ տարբեր մակարդակներում և օղակներում։ Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ դա արտահայտվում է գործող խորհուրդների (կառավարման, տնօրինական, մանկավարժական և ուսանողական) կազմերում շահակիցների խմբերի ներգրավմամբ, ինչպես նաև իրականացվում է տարբեր բաժինների ու աշխատակիցների գործառույթների շրջանակում։ Մասնավորապես, ներքին շահակիցների ներգրավումը հիմնականում արտահայտվում է հարցումներին և քննարկումներին մասնակցության միջոցով։ Առցանց այցից պարզ դարձավ, որ դրանք հիմնականում կատարվում են ոչ հստակ պլանավորված ժամանակահատվածներում և ոչ ֆորմալ ձևաչափով։ Ռազմավարական գործող ծրագրում «Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում» նպատակի շրջանակում սահմանված է քոլեջի կառավարման, տնօրինական, մանկավարժական և ուսանողական խորհուրդների միջև կառուցողական համագործակցության զարգացման ապահովումը։ Առցանց այցից պարզ դարձավ, որ հստակ չէ, թե այս ուղղությամբ ինչ աշխատանքներ են նախատեսված ու պլանավորված։ ԻՎ-ում քոլեջն արձանագրել է, որ արտաքին շահակիցների մոտ կա մոտիվացիայի պակաս քոլեջի տարբեր գործընթացներում նրանց մասնակցության ապահովման առումով։ Այդուհանդերձ, փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզվեց, որ քոլեջի կողմից հստակ քայլեր չեն իրականացվել արտաքին շահակցիների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար։ Առցանց այցի ժամանակ պարզ դարձավ նաև, որ քոլեջում պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները չեն ուսումնասիրվում և դրանց վերլուծությունները հետագայում խորհուրդներում չեն քննարկվում։ Բացի այդ, ռազմավարական ծրագրով նախատեսված է «Հանրային ծառայություններ և ներգրավում» նպատակի ապահովման համար իրականացնել քոլեջի շրջանավարտներից և կրթական ծրագրերից հիմնական գործատու կազմակերպությունների բավարարվածության աստիճանի վերաբերյալ ուսումնասիրություն և վերլուծություն՝ ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի անցնելու կարողությունների

բարձրացման երաշխավորությունների մշակման և կատարելագործման նպատակով: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ այս առումով քոլեջի կողմից մշակվել են հարցաթերթեր՝ «Հարցման թերթ 1 (սպառողների/շրջանավարտների) և «Հարցման թերթ 2 (գործատուների)», այնուամենայնիվ դրանցով կատարված հարցումներ, դրանց արդյունքների վերլուծություններ ու արդյունքում իրականացված փոփոխությունների օրինակներ առկա չեն:

Ըստ ՌԾ-ի՝ քոլեջը ձգտում է դառնալու այնպիսի հաստատություն, որն իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովում է որակի անընդհատ բարելավում՝ քոլեջի գործուն և արդյունավետ վարչարարության ու կառավարման միջոցով: Եվ ՌԾ-ի հաստատումից հետո քոլեջը ձեռնամուխ է եղել ՊԻԳԲ շրջափուլով իր գործունեության կազմակերպմանը: Չնայած ԻՎ-ում նշվում է, որ հիմնական խնդիրը շրջափուլի վերջին երկու բաղադրիչների ապահովման մեջ է, այնուամենայնիվ, փորձաքննության արդյունքում պարզվեց, որ ՌԾ-ով և «Որակի քաղաքականությամբ» սահմանված գործընթացների մի մասը դեռ իրականացման փուլում է: Ինչպես օրինակ, որակի բնագավառում նախատեսված նպատակների իրագործումը, այն է՝ հետադարձ կապի միջոցով արձագանքել շահառուներից ստացած դիտողություններին և առաջարկություններին՝ կրթական ծառայությունների և գործընթացների որակը բարելավելու նպատակով, պլանավորել, մշակել, իրականացնել և կատարելագործել կրթական կարիքների վերհանման մեխանիզմները և այլն:

«Որակի քաղաքականությամբ» սահմանվում է նաև որակի քաղաքականության վերանայման պարբերականությունը: Ըստ հաստատված փաստաթղթի՝ որակի քաղաքականության իրականացման արդյունավետությունը պետք է գնահատվի յուրաքանչյուր տարի քոլեջի խորհրդի ամփոփիչ նիստում՝ քաղաքականության իրականացման վերաբերյալ նկատառումներ և վերանայման համար առաջարկություններ ներկայացնելով (իրականացված ներքին և/կամ արտաքին աուդիտի հաշվետվությունների, որակական հետազոտությունների, վերլուծությունների հիման վրա): Համաձայն պաշտոնական հրահանգի՝ որակի պատասխանատուն ամփոփում է կրթության որակի ապահովման և վերահսկման ուղղությամբ պատասխանատու անձանց դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքները, գնահատում և կազմում է հաշվետվություններ ու դրանք՝ մասնագիտական կրթության որակի բարելավմանն ուղղված առաջարկություններով ներկայացնում է քոլեջի խորհրդի քննարկմանը: Փոփոխությունները հաստատվելուց հետո քաղաքականությունը պետք է վերանայվի և հաստատված տարբերակը տեղադրվի քոլեջի ցանցում:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման գործող համակարգի ձևավորումից հետո որակի քաղաքականությունը դեռևս չի փոփոխվել և/կամ լրամշակվել: Որակի ապահովման մշտադիտարկման և բարելավման գործիքակազմի ստեղծումը ևս նախատեսված էր «Որակի քաղաքականությամբ»: Այդուհանդերձ, ինչպես պարզվեց փորձագիտական առցանց այցի ժամանակ, փաստացի գործընթացներ իրականացված կամ նախատեսված չէին: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում պլանավորել են ինքնավերլուծության արդյունքներով իրականացնել որակի կառավարման համակարգի գնահատում ու բարելավման գործողությունների ծրագրի

մշակում՝ վերանայելով որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացները։ Այդուհանդերձ, այս առումով հստակ պլանավորում, գործիքակազմ քոլեջում առկա չէր։

«Որակի քաղաքականությամբ» սահմանված խնդիրների թվում է նաև ինստիտուցիոնալ վերլուծության կազմակերպման իրականացումը։ Քոլեջում գործող աստիճանակարգային հաշվետվողականության համակարգի առկայությունը, մասնավորապես, տնօրենի ամենամյա հաշվետվությունները ներկայացված ինքնավերլուծության հետ միասին քոլեջի կողմից դիտարկվում են՝ որպես որակի ապահովման արտաքին գնահատման հիմք։

Փորձագիտական նախնական գնահատման վերաբերյալ քոլեջը ներկայացրել է էլեկտրոնային հարցաշար և ինքնավերլուծություն՝ կից փաստաթղթերի փաթեթով։ Դրանց վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ էլեկտրոնային հարցաշարն ամբողջական լրացված չէ, իսկ քոլեջի ներկայացրած ԻՎ-ում որոշ չափորոշիչներ առհասարակ բացակայում են։ Այդուհանդերձ, փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ քոլեջի կողից իրականացված գործընթացները կարող էին վերլուծվել և ներկայացվել։ Քոլեջի ինքնավերլուծությունն ընդհանուր առմամբ գործընթացների նկարագրություն էր իրենից ներկայացնում։ Սա պայմանավորված է քոլեջում տվյալների հավաքագրման ու վերլուծության հստակ մեխանիզմների բացակայությամբ։ Ինքնավերուծության որոշ հատվածներում չափորոշիչների փոխարեն հղում էր կատարված այլ չափորոշիչների «համապատասխան» բաժիններին՝ առանց որևէ հստակության և մեկնաբանության։ Այսինքն՝ փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա է վերլուծություն իրականացնելու փորձի պակաս։ Հստակ չէ նաև SWOT վերլուծության ու ինքնավերլուծության մնացած հատվածների միջև կապը։ Ներկայացված SWOT վերլուծության հիմքում առկա չեն փաստացի հիմնավոր տվյալներ։ Դրանցում ներկայացված կետերը երբեմն չեն վերաբերում այն չափանիշին, որի համար կատարված են։ Բուն ինքնավերլուծությունում կան դրույթներ, որոնք չեն բխում SWOT վերլուծությունից։

Փորձաքննության արդյունքում պարզվեց, որ քոլեջում որակի ապահովման որոշ գործընթացներ իրականացվում են ոչ կանոնակարգված ու առանց փաստաթղթային հիմքերն ապահովելու։ Ինչպես օրինակ, հարցումների և քննարկումների մի մասի արդյունքներն ու եզրահանգումները պարզապես չեն արձանագրվել։ Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջում կան գործընթացներ, որոնք ԻՎ-ում չէին վերլուծվել և ներկայացվել։

Ըստ «Որակի քաղաքականության»՝ քոլեջում որակի ապահովման խնդիրներից է որակի մշակույթի ձևավորման և արմատավորման խթանումը։ Քաղաքականությամբ սահմանված է, որ վերջինիս տարածումն ապահովելու նպատակով այն տեղադրվում է քոլեջի ցանցում, պաշտոնական կայքէջում, ինչպես նաև ներկայացվում է նիստերի, ուսանողների և աշխատակազմի հետ հանդիպումների ժամանակ։ Պաշտոնական կայքէջում, սակայն, հրապարակված չեն քոլեջի գործունեությունը կանոնակարգող հաստատված փաստաթղթերը։ Բացի այդ, հասանելի չեն նաև տնօրենի ամենամյա հաշվետվությունները և որակի ապահովման գործընթացներին առնչվող տեղեկատվությունը, օրինակ, իրականացված հարցումների վերլուծության արդյունքները։

Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ որակի ապահովման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը շահակիցներին ներկայացնելու հստակ մեխանիզմներ քոլեջում մշակված ու նախատեսված չեն, որոշված չէ նաև որակի պատասխանատուի դերն այդ գործընթացում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջի որակի ապահովման համակարգի հիմքը «Որակի քաղաքականությունն» է, որն ընդհանուր առմամբ համահունչ է ռազմավարական գործող ծրագրի նպատակներին և ուղղություններին։ Այդուհանդերձ, հաստատված քաղաքականությունը սահմանում է որակի ապահովման ոլորտում քոլեջի ընդհանուր մոտեցումն ու գերակայությունները միայն։ Մտահոգիչ է, որ որակի ապահովման սահմանված նպատակների ու խնդիրների իրագործման համար անհրաժեշտ աշխատանքների առանձին պլանավորում չի կատարվում։ Ինչը խոչընդոտում է սահմանված քաղաքականության հստակ իրականացմանը։ Մտահոգիչ է, որ ՈԱ պատասխանատուի կողմից իրականացվող գործողությունները, որպես կանոն, իրավիճակային են՝ առանց նախապես մշակված ու պլանավորված լինելու։ Ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ որակի ապահովման հաստատված հստակ ժամանակացույց և ընթացակարգեր դեռևս չկան։ Քանի որ որակի ապահովման իրականացվող գործընթացները կանոնակարգված չեն, դա խոչընդոտում է քոլեջում որակի ապահովման գործուն համակարգի կայացմանն ու բոլոր ոլորտներում որակի մշակույթի ներդրմանը։ Միաժամանակ, մտահոգիչ է որակի ապահովման գործընթացների արդյունավետության գնահատումների բացակայությունը, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել որակի քաղաքականության ազդեցությունը քոլեջի գործունեության, մասնավորապես, կրթական ծրագրերի վրա։ Քոլեջում ոչ միայն արձանագրվել է մարդկային լրացուցիչ ռեսուրսների կարիքը որակի ապահովման ուղղությամբ աշխատանքներ տանելու համար, այլև որոշվել է որակի կառավարման հանձնաժողովի կազմավորման միջոցով լուծել այդ խնդիրը։ Սակայն, 2020թ.-ի սեպտեմբերից՝ որակի կառավարման հանձնաժողովի կանոնակարգը հաստատվելուց հետո մինչ այժմ այն ձևավորված չէ։ Հաշվի առնելով, որ հանձնաժողովին վերագրված է լիազորությունների լայն շրջանակ ոչ միայն որակի կառավարման համակարգի զարգացման համար, այլև նախատեսվում է այն ներգրավել ռազմավարական ծրագրի կատարման աշխատանքներում, հանձնաժողովի դեռ ստեղծված չլինելը վտանգում է ռազմավարական նպատակների ու որակի քաղաքականության իրագործումը։

Մտահոգիչ է որակի ապահովման առանձին գործընթացների սահմանված ու համակարգված չլինելու հանգամանքը։ Ինչը խոչընդոտում է նաև շահակիցների՝ այդ գործընթացներին մասնակցությունը։ Մտահոգիչ է, որ խորհուրդներում շահակիցների ներգրավմամբ ու հարցումներին և հանդիպումներին նրանց մասնակցությամբ միայն քոլեջում համարում են, որ ներքին ու արտաքին շահակիցների բոլոր խմբերը ներառված են որակի ապահովման գործընթացներում։ Մշակված չէ հարցումների անցկացման ու վերլուծության առանձին ընթացակարգ, իսկ իրականացվող հարցումներն էլ պլանավորված ու թիրախային չեն։ Քանի որ չկա հստակ պատկերացում շահակիցների ներգրավվածության ու դրա արդյունքների վերաբերյալ, այս ուղղությամբ այլ աշխատանքներ չեն ձեռնարկվում։ Եվ փաստացի արտաքին շահակիցները գրեթե դուրս են մնացել այս գործընթացից, ինչը բացասաբար է անդրադառնում ոչ միայն

ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների իրագործման, այլև ընդհանուր առմամբ որակի ապահովման համակարգի նկատմամբ վստահության ձևավորման վրա։

Չնայած քոլեջը 2018թ.-ից ձեռնարկել է իրականացվող ընթացակարգերն ու վարչարարությունը ՊԻԳԲ շրջափուլին համապատասխանեցնելու գործընթաց, այդուհանդերձ, նախատեսված ու պլանավորված գործողությունների մի մասը նույնիսկ իրականացման փուլում չէ։ Այս հանգամանքը բացասաբար է անդրադառնում ՌԾ-ի նպատակների իրագործման ու քոլեջում որակի մշակույթի արմատավորման վրա։

Չնայած քոլեջում սահմանվել է ինքնավերլուծության արդյունքներով որակի ապահովման համակարգի գնահատում կատարելու անհրաժեշտությունը, բայց հաստատված և 2 տարի գործող քաղաքականությանբ սահմանված էր որակի ապահովման գնահատման ու վերանայման մեխանիզմների մշակումը։ Ընդ որում, ամեն տարի պետք է իրականացված լիներ որակի քաղաքականության արդյունավետության գնահատում ու այդ արդյունքներով լրամշակում և/կամ փոփոխություններ։ Ու որակի ապահովման գործընթացների մշտադիտարկման և գնահատման բացակայության պատճառով քոլեջում հստակ ձևակերպված չեն նաև ակնկալվող վերջնարդյունքներն ու նպատակները որակի ապահովման համակարգի զարգացման տեսանկյունից։

Որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքները քոլեջում կանոնակարգված չեն, իսկ որոշ ընթացակարգեր էլ իրականացվում են առանց փաստաթղթավորման պատշաճ մակարդակի ապահովման՝ արդյունքներն ուղղակի արձանագրելով բանավոր կերպով։ Բացի այդ, առկա չէ նաև անհրաժեշտ տվյալների հավաքագրման առանձին մեխանիզմ։ Հաշվի առնելով վերոնշյալն, ինչպես նաև ինքնավերլուծության մեջ վերլուծական բաղադրիչի բացակայությունը, որակի ապահովման համակարգը չի ապահովում բավարար հիմքեր քոլեջի մասին հավաստի պատկերացում ստանալու համար։ Այսինքն՝ արտաքին գնահատումների համար առկա տեղեկատվությունը ոչ ամբողջական է։

Ինչպես և քոլեջի ընդհանուր գործունեության թափանցիկության ապահովման, այնպես էլ, մասնավորապես, որակի ապահովմանն առնչվող տեղեկատվության հրապարակայնության և շահակիցներին հասանելիության մակարդակը ոչ բավարար է։ Տնօրենի տարեկան հաշվետվություններն ու կատարված հարցումների արդյունքները չհրապարակելը և շահակիցների մեծ խմբերին չներկայացնելը խոչընդոտում է քոլեջում իրականացվող գործընթացների թափանցիկության ապահովմանը։ Մտահոգիչ է այն փաստը, որ քոլեջում, սակայն, արձանագրված չէ այդ խնդիրն, ու նախատեսված չեն այն լուծելու ուղիները։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա չեն ՈԱ պլանավորված և կանոնակարգված հստակ գործընթացներ, ՈԱ գործընթացները կրում են իրավիճակային բնույթ, ՈԱ գործընթացների արդյունքներն իրենցից չեն ներկայացնում հիմնավոր տվյալներ և հիմք չեն հանդիսանում կառավարման համակարգի որոշումների համար, ՈԱ գործընթացներում քոլեջի ներքին և հատկապես արտաքին շահակիցների մասնակցություն փաստացի չի ապահովվում, ՈԱ համակարգն ու մշակույթը քոլեջում դեռևս լիարժեք ներդրված չեն, չեն իրականացվում նաև ՈԱ առկա գործընթացների կամ գործիքների արդյունավետության գնահատում և վերանայում, փորձագիտական խումբը

գտնում է, որ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը չի բավարարում Չափանիշ 10-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար։**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում և վարչարարություն	**Չի բավարարում**
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**

7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8. Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

_____

Փորձագիտական խմբի ղեկավար
Արամ Բաղիյան

02.03.2021

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արամ Բաղիյան - 2014թ.-ին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ասպիրանտուրան՝ «Կառավարում, կառավարման համակարգեր և դրանց տարրերը» մասնագիտությամբ: 2014թ.-ին շնորհվել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (ատենախոսության թեման՝ «Թռչող ապարատներից վերգետնյա օբյեկտների հետևման ռոբաստ համակարգի մշակում»): 2012-2017թթ. դասավանդել է ՀՀ Պաշտպանության նախարարության Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում: 2017թ.-ից առ այսօր աշխատում է որպես գիտական խորհրդատու «Իմպրովիզ» ՍՊԸ-ում, ինչպես նաև «Աստրոմափս» ՍՊԸ-ում:

Անի Բաղդասարյան - 2015թ.-ին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մագիստրատուրան «Գործարար կառավարում» մասնագիտացմամբ, ստացել է կառավարման մագիստրոսի աստիճան: 2015-2019թթ. աշխատել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման բաժնում: Մասնակցել է կրթության և որակի ներքին ու արտաքին ապահովման թեմաներով միջազգային վերապատրաստումների և աշխատաժողովների, ունի ԵՄ Տեմպուս ու Էրազմուս+ ծրագրերի համակարգման և իրականացման փորձ:

Արփի Սիմոնյան - 2018թ.-ին ավարտել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մագիստրատուրան՝ «Կիբեռնետիկա/Էլեկտրոնիկա» մասնագիտացմամբ, ստացել է ճարտարագետ մագիստրոսի աստիճան: 2017-2018թթ. աշխատել է «Այ-Դի-Թի ԱՐՄ» ընկերությունում՝ որպես ծրագրային ապահովման կրտսեր մասնագետ: 2019թ.-ից առ այսօր աշխատում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում՝ որպես լաբորանտ: 2020թ.-ից առ այսօր աշխատում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Երևանի քոլեջում՝ որպես դասախոս:

Արփինե Ազնաուրյան - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Երևանի քոլեջի «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» բաժնի 3-րդ կուրսի ուսանող: Մասնակցել է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

15.12.2020թ.-18.12.2020թ.

	15.12.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	9:30	10:30	60 րոպե	Meeting ID: 841 0575 3989 Passcode: 601763
2.	Հանդիպում ՄՈՒՀ-ի կառավարման խորհրդի ներկայացուցիչների հետ	11:00	12:00	60 րոպե	Meeting ID: 856 0676 4653 Passcode: 975556
3.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	12:35	13: 35	60 րոպե	Meeting ID: 870 5839 5177

					Passcode: 787206
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:45	14:45	60 րոպե	Meeting ID: 841 4119 0899 Passcode: 712935
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	15:00	16:00	60 րոպե	Meeting ID: 833 2147 6860 Passcode: 807698
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե	Meeting ID: 898 2984 4214 Passcode: 066021

	16.12.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ (ներառյալ ԻՎ-ում ներկայացված երեք ՄԿԾ-ների պատասխանատուները)	9:30	10:30	60 րոպե	Meeting ID: 851 6359 9690 Passcode: 571737
2.	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	11:00	12:00	60 րոպե	Meeting ID: 876 8898 3960 Passcode: 331038
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե	Meeting ID: 876 4330 1975 Passcode: 492939
4.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	13:45	14:45	60 րոպե	Meeting ID: 817 4240 7639 Passcode: 470354
5.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	15:00	15:40	40 րոպե	Meeting ID: 838 2067 2003 Passcode: 752570
6.	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	16:25	17:25	60 րոպե	Meeting ID: 842 4337 4663 Passcode: 230186
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի	18:00	19:00	60 րոպե	Meeting ID: 845 1752 2181 Passcode: 846486

	փակ հանդիպում				
	17.12.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1.	Զուգահեռ հանդիպումներ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր», «Համակարգչային գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ների դասախոսների հետ (12-15 մասնակից)	9:30	11:00	90 րոպե	Meeting ID: 816 5761 8930 Passcode: 760840
2.	Հանդիպումներ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր», «Համակարգչային գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ների ուսանողների հետ (12-15 մասնակից)	12:00	13:00	60 րոպե	Meeting ID: 838 5483 7469 Passcode: 968170
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:15	14:15	60 րոպե	Meeting ID: 870 3908 1009 Passcode: 939032
4.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կադրերի բաժնի ղեկավար, ուսումնական	14:30	15:30	60 րոպե	Meeting ID: 828 1612 6098 Passcode: 061010

	մասերի ղեկավար, պրակտիկայի բաժնի ղեկավար, հաշվապահ, արխիվի պատասխանատու, լաբորատորիաների պատասխանատու)				
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	16:30	18:30	120 րոպե	Meeting ID: 832 1481 8546 Passcode: 966551

	18.12.2020թ .	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*	*Մուտքային տվյալներ*
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	9:30	10:30	60 րոպե	Meeting ID: 839 1035 5303 Passcode: 060928
2.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	11:00	11:40	40 րոպե	Meeting ID: 838 6645 7536 Passcode: 146964
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:20	13:20	60 րոպե	Meeting ID: 841 9736 6040 Passcode: 922546
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե	Meeting ID: 853 2964 1044 Passcode: 485724
5.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:00	16:00	60 րոպե	Meeting ID: 879 7673 4384 Passcode: 180021
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15: 30	17: 00	90 րոպե	Meeting ID: 882 8901 7997 Passcode: 792722
7.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե	Meeting ID: 813 5507 7069 Passcode: 575791

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

№	Փաստաթղթի անվանում	Չափանիշ/չափորոշիչ
1.	3 ՄԿԾ-ների փաթեթներ (ՊԿՉ)	3
2.	ՄԿԾ-ների մշտադիտարկումների արդյունքներ (վերլուծություն, մշտադիտարկման փաթեթ)	3
3.	Համագործակից գործատուների ցանկ	3
4.	Մեթոդական ձեռնարկ	5
5.	Դասալսումների մատյան	5
6.	ՊԴ կազմի վերապատրաստումների ցանկ	5
7.	ՄՈՒՀ-ի հաստիքացուցակ	2

8.	Բուկլետ	8
9.	ՈԱ բաժնի տարեկան պլաններ (2017-2018թթ., 2019-2020թթ.)	2
10.	ՈԱ բաժնի տարեկան պլան (2018-2019թթ.)	2
11.	ՈԱ բաժնի տարեկան հաշվետվություն (2016-2017թթ.)	2
12.	ՈԱ բաժնի տարեկան հաշվետվություններ (2017-2018թթ., 2018-2019թթ., 2019-2020թթ.)	2
13.	Ուսանողների պրակտիկայի լրացված օրագրեր (ներկայացված երեք ՄԿԾ-ների)	4
14.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի եզրակացություններ (2018-2019թթ., ներկայացված երեք ՄԿԾ-ների)	3
15.	ՄՈՒՀ-ում առկա ISO ընթացակարգեր	10
16.	Խորհրդի նիստերի վերջին երեք տարիների արձանագրություններ	2
17.	Տնօրինական խորհրդի նիստերի արձանագրություններ (2019թ.)	2
18.	Մանկավարժական խորհրդի նիստերի վերջին երեք տարիների արձանագրություններ,	2
19.	Գործատուների շրջանում իրականացված հարցման հարցաթերթ	10
20.	Ձեռներեցություն դասընթացի մոդուլային ծրագիր	3
21.	Ռոբոտաշինություն (ՆՄԱ)	3
22.	Նեղ մասնագիտական առարկա (ուս. պլաններում ծրագրավորողների կամընտրական առարկաների ցանկում է)	3
23.	«Հաշվողական տեխնիկայի միջոցների նախագծում, արտադրություն, շահագործում և նորոգում ԿՆ1» մոդուլ	3
24.	Շրջանավարտների շրջանում անցկացված հարցման վերլուծություն	4
25.	Վարչական անձնակազմի հետ իրականացված հարցման վերլուծություն (կամ դրանց հարցաթերթեր)	2
26.	Առցանց ուսուցման վերաբերյալ հարցում ուսանողների շրջանում	3
27.	Օպերացիոն համակարգերի, ծրագրավորման լեզուների թեմատիկ պլաններ (C++/C#, Java/ JavaScript)	3
28.	Ամբիոնների դիպլոմային աշխատանքների վերջին երեք տարիների թեմաներ	3
29.	Փոփոխված ծրագրերի մոդուլների/առարկաների պլաններ/վերջնարդյունքներ (էլեկտրոնիկա, եռաչափ մոդելավորում, ցանցեր)	3

30.	Մասնագիտական մոդուլների թեմատիկ պլաններ (երեք ՄԿԾ-ների)	3
31.	Կուրսային կամ դիպլոմային աշխատանքերին ներկայացվող պահանջներ	3
32.	Տնօրինական խորհրդի կազմ	2
33.	Քոլեջի ֆինանսական նախահաշիվ (2020թ.)	7
34.	Նոր ընդունված ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացված հարցումներ, դրանց արդյունքերի վերլուծություն	4
35.	Կարիերայի բաժնի աշխատանքային պլան	2

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Լսարաններ
- Լաբորատորիաներ
- Գրադարան, ընթերցասրահ
- Բուժկետ
- Ստորաբաժանումների համար նախատեսված սենյակներ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Քոլեջի տնօրենի № 15 Ն

"26" փետրվարի 2016 թ.

հրամանով

ԵՐԵՎԱՆԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ